Նվիրվում է Հյուսիսային համալսարանի հիմնադրման 20 ամյակին

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ՐԴ ԱՄՅԱԿԻ ՇԵՄԻՆ

ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

ՄԱՅԻՍԻ 24-25 2016 թ.

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ
2016

ЕРЕВАНСКИЙ СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ

МАТЕРИАЛЫ

межвузовской научной конференции

«ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ НА ПОРОГЕ 25-ЛЕТИЯ НЕЗАВИСИМОСТИ РА»

24-25 МАЙ 2016г.

Ереван 2016

NORTHERN UNIVERSITY OF YEREVAN

Issues of Economy Development in RA at the Threshold of the 25th Anniversary

Materials of Interuniversity Scientific Conference

24-25 MAY, 2016

YEREVAN 2016

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65.01
Տ 778

Հրատարակվում է Հյուսիսային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Տ 778

Տնտեսության զարգացման հիմնախնդիրները ՀՀ անկախության 25-րդ ամյակի շեմին: Միջբուհական գիտաժողովի նյութեր: /24-25 մայիս, 2016թ./, Եր.: Հյուսիսային համալսարան, - 2016. – 170 էջ:

Ժողովածուն պարունակում է Հյուսիսային համալսարանի ռեկտորատի նախաձեռնությամբ՝ 2016 թվականի մայիսի 24-25-ին կազմակերպված գիտաժողովի մասնակիցների զեկուցումները, որոնք առնչվում են ՀՀ տնտեսության զարգացման տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներին:

Ժողովածուն նախատեսվում է տնտեսագետների, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանների համար:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65.01

ISBN 9789939911571

© Հյուսիսային համալսարան, 2016

Գիտաժողովի նյութերի էլեկտրոնային տարբերակը
տեղադրված է Հյուսիսային համալսարանի պաշտոնական
կայքի “Գիտություն” բաժնում՝ www.//northern.am հասցեում

Խմբագրական-հրատարակչական խորհուրդ

Մակիչյան Բ.Մ. (խորհրդի նախագահ, մանկ. գիտ. թեկ.), Ասատրյան Գ.Ե. (խորհրդի նախագահի տեղակալ, փիլ. գիտ. դոկ.), Ավետիսյան Ս.Ս. (տնտ. գիտ. դոկ.), Ճուղուրյան Ա.Գ. (տնտ. գիտ. դոկ.), Հակոբյան Ա.Ա. (տնտ. գիտ. դոկ.), Մարզպանյան Հ.Ա. (տնտ. գիտ. դոկ.), Մակիչյան Միհեր Բ. (տնտ. գիտ. թեկ.), Խաչատրյան Ն.Ն (տնտ. գիտ. թեկ.), Ավետիսյան Մ.Ս. (տնտ. գիտ. թեկ.), Հակոբյան Կ.Հ. (տնտ. գիտ. թեկ.):

Редакционная коллегия

Макичян Б.М. (председатель редакционного совета, канд. пед. наук), Асатрян Г.Е. (зам. председателя, доктор философ. наук), Аветисян С.С. (доктор экон. наук), Джугурян А.Г. (доктор экон. наук.), Акопян А.А. (доктор экон. наук.), Марзпанян А.А. (доктор экон. наук), Макичян М.Б. (канд. экон. наук), Хачатрян Н.Н. (канд. экон. наук), Аветисян М.С. (канд. экон. наук), Акопян К.А (канд. экон. наук.)

Editorial Collegium

Makichyan B.M. (head of editorial comity. PhD in ped.), Asatryan G.E. (Doctor in philos.), Avetisyan S.S. (doctor of econ. scince), Tshuguryan A.G. (doctor of econ. scince), Hakobyan A.A. (doctor of econ. scince), Marzpanyan A.A. (doctor of econ. scince), Makichyan M.B. (Phd in econ.), Khachatryan N.N. (Phd in econ.), Avetisyan M.S (Phd in econ.), Hakobyan K.A. (Phd in econ.).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ողջույնի խոսք	……..……...	8
Ճուղուրյան Արմեն ԵՀՀ	Անկախության տարիների ՀՀ տնտեսության զարգացման դասերը……	9
Անդրեասյան Նարեկ ՀՀ ԳԱԱ	Որոշումների կայացման տիպոլոգիան բանկային ռիսկերի կառավարման համակարգում……	16
Խաչատրյան Նոննա ԵՊՀ	Մրցունակ մասնագիտական կրթության հիմնախնդիրները……..	24
Bahareh Tajfirouz EREA	Women`s Empowerment Influence in Sustainable Development Process……	30
Հաջոյան Նինա ԵՀՀ	Տնտեսության կառավարման բարելավման ուղիները……...	38
Մխիթարյան Ատոմ ՀՀ ԲՈՀ	Գիտական աստիճանների շնորհման էվոլյուցիան……..	50
Ավետիսյան Աշոտ ԵՀՀ	Ներդրումային գրավչությունը ՀՀ ագրարային ոլորտում……	58
Պողոսյան Մարգարիտա ԵՀՀ	Ֆիզիկական կուլտուրայի դերն ու նշանակությունը մարդկային ներուժի զարգացման գործում……..	71
Մարտիրոսյան Բակուր ԵՀՀ	Հարկման գործառույթները և դրանց գործունեության գնահատումը ՀՀ-ում……	80

Կարապետյան Ռոմիկ ԵՀՀ	Պետական կարգավորումը և երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը……	89
Հունանյան Լուիզա ՀԱԱՀ	Գյուղատնտեսության բյուջետային ծրագրերի արդյունավետության և բնական աղետների պատճառած վնասների գնահատման մեթոդաբանությունը……...	101
Բոյաջյան Կարապետ ԵՀՀ **Պիվազյան Վարդինե** ՄԿԻՏՀ	Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման միտումները ՀՀ-ում…….	113
Մարգարյան Գարիկ ԵՀՀ	Երիտասարդության զբաղվածության հիմնախնդիրները ՀՀ-ում…….	123
Hamed Mirzaei EREA	Iran-Armenia economic cooperation issues…….	131
Հակոբյան Գայանե ԵՀՀ	Անկախության կապուտիկյանական ընկալումը…….	138
Խալաթյան Հարություն ԵՀՀ **Բարսեղյան Գ.Ս.** ՀՊՄՀ	ՀՀ աշխարհագրական դիրքի ազդեցությունը տրանսպորտի զարգացման վրա……	152
Պեպանյան Նապոլեոն ԵՀՀ	Բնապահպանական գործունեության հաշվետվողականության խնդիրները…….	164

Ողջույնի խոսք

Հարգելի՛ գործընկերներ:

Ուրախ եմ ողջունելու Հյուսիսային համալսարանում այս օրերին տնտեսագիտական հիմնախնդիրներով կազմակերպվող գիտաժողովի մասնակիցներին: Հատկանշական է, որ գիտաժողովը կազմակերպվում է ՀՀ անկախության 25-դ ամյակի շեմին, իսկ մեր նորանկախ պետության տնտեսության զարգացման հետագիծը լի է խոշոր ձեռքբերումներով, և ինչու չէ, որոշակի առումով՝ նաև բացթողումներով:

Վստահ եմ, որ գիտաժողովի ընթացքում քննարկման նյութ կդառնան մեր տնտեսության աճի հեռանկարները՝ հաշվի առնելով անկախության քսանհինգամյա տնտեսական զարգացման ճանապարհը: Պատմության այս կարճ ժամանակահատվածը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունում կայացավ կայուն բանկային համակարգ, որն անգամ ցնցումների չենթարկվեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին: Համեմատվելով, տարածաշրջանային երկրների տնտեսական զարգացումների հետ, պետք է հպարտությամբ նշեմ, որ մեր հանրապետությունը առանձնանում է տնտեսության կայուն զարգացմամբ, հավասարակշիռ տնտեսավարման քաղաքականությամբ:

Սակայն, մյուս կողմից չպետք է բավարարվել ձեռքբերումներով և անհրաժեշտ է ուղիներ որոնել հանրապետության տնտեսության մրցունակության բարձրացման ուղղությամբ: Դատելով գիտաժողովի ծրագրի բովանդակությունից, մեզ սպասվում են քննարկումներ և բանավեճեր ՀՀ տնտեսության զարգացման հիմնախնդիրների շուրջ, որոնց արդյունքում վստահ եմ, որ կձևավորվեն նորամուծական առաջարկներ և գիտական բացահայտումներ՝ երկրում տնտեսավարման շրջանակի հետագա զարգացումների ուղղությամբ:

Մաղթում եմ ձեզ բեղմնավոր և ստեղծարար աշխատանք՝ ակնկալելով գիտաժողովի արդյունավետ արդյունքներ:

Հյուսիսային համալսարանի ռեկտոր

Բ.Մ. Մակիչյան

Արմեն Ճուղուրյան
Հյուսիսային համալսարան, պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր
Jarmen1@yandex.ru

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԵՐԸ

Հիմնաբառեր. անբարեխիղճ մրցակցություն, սփյուռքի կապիտալ, պետական արտաքին պարտք, տնտեսության պետական կարգավորում:

Նախաբան

Խորհրդային Հայաստանի տնտեսությունը ամբողջապես ինտեգրված էր ԽՍՀՄ տնտեսական համակարգին և անկախացումից հետո լուրջ հիմնախնդիրների առջև կանգնեց: Մի կողմից, ՀՀ տնտեսական համակարգը անկախության առաջին իսկ տարիներից կտրվեց տասնամյակների ընթացքում ձևավորված ավանդական շուկաներից, մյուս կողմից, ուղղակի “խեղդամահ” եղավ անհեռատես սեփականաշնորհման ճիրաններում՝ չկարողանալով մտնել առողջ մրցակցային դաշտ և միաժամանակ կիրառելով ապաշնորհ կառավարման գործիքակազմ: Արդյունքում, մինչ այսօր ունենք դանդաղ զարգացող, և երբեմն էլ՝ տեղում դոփող տնտեսություն, որի փոփոխման հետ դեռևս ռոմանտիկ սպասումներ ունեինք ազգային զարթոնքի տարիներին: Այս առումով, տեղին է անկախության շրջանի տնտեսության զարգացման դասերի վերլուծությունը, որի արդյունքները նախանշան պետք է հանդիսանան ՀՀ տնտեսական համակարգի հետագա բարեփոխումների գործընթացում:

Դաս առաջին. *պատրաստ չէինք տնտեսական անկախացման և եթե ունենայինք իրատես տնտեսավարման*

ռազմավարություն, չէինք հայտնվի փլուզվող համակարգի փլատակների տակ:

Անկախությանը առնչվող ազգային ռոմանտիկան այնքան մեծ էր, որ հասարակությունը կորցրել էր շուկայական առողջ տնտեսավարման իրատեսության զգացումը: Ի սկզբանե, պետությունը չպետք է ամբողջապես զիջեր իր դիրքերը տնտեսավարման համակարգում և չգնար շուտափույթ սեփականաշնորհման՝ ինչպես ագրարային, այնպես էլ ինդուստրիալ ոլորտում: Անհեռատես և հապճեպ սեփականաշնորհման արդյունքում գյուղացին "մենմենակ" մնաց իրեն սեփականաշնորհած հողով՝ առանց ֆինանսավորման ու տեխնիկական աջակցության, ու դրբանով, երբեմնի բերքաբեր հողատարածքները ուղղակիորեն մատնվեցին անգործության: Զուգահեռաբար, ինդուստրիալ ոլորտի սեփականաշնորհված կազմակերպությունները՝ կորցնելով իրենց շուկաները Խորհրդային Միության տարածքում, պարապուրդի մատնվեցին և ապամոնտաժման ու լուծարման գնացին:

Դաս երկրորդ. *պետական վերահսկողության անկատարությունը բարձիթողի վիճակի հասցրեց տնտեսության համակարգումը և նոր սեփականատերերի շրջանում մասնավոր տնտեսավարման քողի տակ անպատասխանատվության մթնոլորտ ձևավորվեց:*

Սեփականաշնորհման գործընթացում սեփականատերերի պարտավորվածության և ակտիվների արդյունավետ օգտագործման խնդիր չդրվեց: Արդյունքում, կարճ ժամանակ անց, պետական ակտիվների նոր տերերը ձգտեցին ոչ թե գործարանների և ֆաբրիկաների վերագործարկման ուղիների որոնմանը, այլ պարզապես դրանց ռոպեյահաճո շահ ստանալու նպատակով՝ ձեռք բերված ակտիվների լուծարմանը և վաճառահանմանը՝ ստանալով գերշահույթներ սեփականաշնորհված օբյեկտների

առքուվաճառքից: Անպատասխանատվության մթնոլորտը հանգեցրեց նրան, որ տասնամյակների ընթացքում ձևավորված ինդուստրիալ և ագրարային կապիտալը փոշիացավ և քայքայվեց լուծարային ճանապարհով:

Դաս երրորդ. *շուկայական տնտեսության միջավայրում մակրո և միկրո տնտեսական մենեջմենտի փորձի պակասը բերեց նրան, որ կառավարչական որոշումները կարճաժամկետ բնույթ ունեին, չէին թիրախավորվում ռազմավարական զարգացումներին, տեսանելի ապագային և տնտեսության հեռանկարային աճին:*

Գործարարությունը նպատակամիտված չէր տնտեսության կայուն զարգացմանը, նորաստեղծ անկախ պետությունը չուներ տնտեսության զարգացման երկարատև պլան և ամեն ինչ կապվում էր շուկայի կարգավորիչ գործառույթների հետ, շրջանցելով պետության դերակատարումը տնտեսության կառավարման գործընթացում: Շուկայական հարաբերությունները տնտեսավարման նոր կանոններ թելադրեցին, ուղղորդված մրցունակ գաղափարների իրագործմանը, օտարերկրյա ներդրումների գրավիչ միջավայրի բարելավմանը, որոնք այդպես էլ կյանքի չկոչվեցին արդյունավետ կառավարման փորձի պակասի շնորհիվ:

Դաս չորրորդ. *պետական վերահսկողական անարդյունավետ համակարգի առկայության և արդար մրցակցության բացակայության պարագայում, անարդարացված գերշահույթների ձևավորման պարարտ հող ստեղծվեց և ընդամենը մի քանի տարիների ընթացքում կազմավորվեց օլիգոպոլիկ տնտեսություն:*

Նորաթուխ հայ ձեռներեցները բացարձակապես գործելով սեփական շահերի տեսանկյունից և շրջանցելով պետական կառավարման կանոնները, հարկային ու մաքսային պարտավորությունների լիարժեք կատարումը՝

ձևավորեցին ոչ բարեխիղճ մրցակցային միջավայր, տնտեսական ոլորտներում ունեցան գերիշխող դիրք և արգելքներ ստեղծեցին ազատ շուկայական հարաբերությունների զարգացման համար: Տեղի ունեցավ կապիտալի կենտրոնացում, և այնուհետև՝ բևեռացում, որն ավելի վտանգավոր դարձավ՝ սերտաճելով իշխանական կառույցների հետ:

Դաս հինգերորդ. *տնտեսության զարգացման համատեքստում ի սկզբանե բացակայում էին ազգային մտածելակերպն ու հայրենական տնտեսության զարգացման մկրտումները, որը ձևավորեց օտարերկրյա տնտեսական ինտերվենցիաներից անպաշտպան տնտեսական միջավայր:*

Հայազգի ձեռներեցները նախընտրեցին գերշահույթներ ստանալ, ողողելով տեղական շուկան արտասահմանից ներկրվող ապրանքատեսակներով, որոնց զգալի մասը հնարավոր էր արտադրել ՀՀ-ում: Տեղական արտադրության ապրանքատեսակների դուրս մղումը հայրենական շուկայից հանգեցրեց աշխատատեղերի կրճատման, աշխատանքային միգրացիայի և երբեմնի ինդուստրիալ և բարձր արտադրողականություն ունեցող տնտեսությունը ուղղակիրոն վերածվեց սպառողական հարթակի, որտեղ իրենց գերշահույթներ են ապահովում մենաշնորհային դիրք ունեցող հայ գործարարները: Իսկ դրան զուգահեռ, պետությունը լուրջ քայլեր չձեռնարկեց ներկրման փոխարինիչների արտադրության զարգացման ուղղությամբ:

Դաս վեցերորդ. *տնտեսության զարգացման գործընթացում սփյուռքի ներուժը ոչ միայն թերագնահատվեց, այլև սփյուռքի տնտեսական նախաձեռնությունների հանդեպ անհեռատես քաղաքականությունը հասցրրեց*

նրան, որ սփյուռքահայության ներդրումների ակտիվություն չարձանագրվեց ՀՀ տնտեսությունում:

Իսրայելի «տնտեսական հրաշքը» վերլուծելիս, միշտ էլ կարևորագույն գործոն է դիտվել պետության կողմից հրեական սփյուռքի նկատմամբ խելամիտ դիրքորոշումն ու շահագրգիռ վերաբերմունքը, որի արդյունքում Իսրայելը աննախադեպ ֆինանսական օգնություն է ստացել սփյուռքից, կարողացել է ներդրումների բարենպաստ միջավայր ստեղծել աշխարհասփյուռ հրեաների համար: Մեր իրականությունում ունեցանք հակառակ պատկերը: Եթե անկախության առաջին տասնամյակում ՀՀ տնտեսությունում ինչ-որ չափով նկատվեց սփյուռքահայ կապիտալի ներհոսք, ապա հետագայում այն դադարեց՝ կապիտալի անպաշտպանվածության և տեղացի գործարարների կողմից անբարեխիղճ մրցակցության պատճառով: Արդյունքում, սփյուռքահայությունը նախընտրեց ոչ թե լայնածավալ ներդրումների ճանապարհը, այլ ընդամենը բարեգործական թիրախավորված օգնությունների իրականացումը, որը չէր կարող լուրջ ազդակ հանդիսանալ երկրի տնտեսության զարգացման համար:

Դաս յոթերորդ. *տնտեսության իրական հատվածի թույլ զարգացվածությունը հանգեցրեց լուրջ չափաբաժիններով արտաքին պարտքի ձևավորմանը, որի սպասարկումը զգալի ռեսուրսներ էին պահանջում, որոնք ի վերջո կարող էին ուղղվել երկրի տնտեսության զարգացմանը:*

Արտաքին պարտքի առկայությունը բացասական երևույթ չի դիտարկվում տնտեսական պրակտիկայում: Անգամ տնտեսապես զարգացած պետություններն են պարտքի դիմում, ներգրավելով արտաքին ֆինանսական ռեսուրսներ և դրանք վերաուղղելով տնտեսական աճին: Սակայն, ՀՀ-ում մինչ այժմ էլ, արտաքին պարտքը հանդես

է գալիս ոչ թե տնտեսության զարգացման ֆինանսական լծակ, այլ ընդամենը ֆինանսատնտեսական ցնցումներից երկիրը ապահովագրելու միջոց: Եվ ստացվում է այնպես, որ պետական արտաքին պարտքի կուտակումները չեն ծառայում տնտեսական աճին և ընդամենը նպաստում են երկրի տնտեսական անկախության կորստին: Դեռ ավելին, արտաքին պարտքի սպասարկմանը ուղղված ֆինանսական միջոցները եթե չեն փոխհատուցվում տնտեսական աճով, ապա դրանով իսկ սեղմում են երկրի տնտեսության զարգացման հեռանկարների շրջանակը:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ անկախության շրջանի տնտեսության զարգացման դասերը ցույց են տալիս, որ հեռանկարային առումով տնտեսական քաղաքականության մի շարք կարևորագույն դրույթներ պետք է առաջնահերթորեն կյանքի կոչվեն:

Տնտեսության պետական կարգավորումը գերիշխող դիրքերում պետք է հայտնվի տնտեսավարման այն ոլորտներում, որոնք լոկոմոտիվի դերակատարում են ստանձնելու տնտեսական կտրուկ աճի գործընթացում: Փորձը ցույց տվեց, որ ունենալով փոքր և որոշ դեպքերում էլ արտաքին ինտերվենցիաներից անպաշտպան շուկա, ՀՀ տնտեսությունը չի կարող սահուն զարգանալ ազատ շուկայական մրցակցային օրենքներով և պետական միջամտության և հոգածության կարիք ունի: Այս նպատակով, ռազմավարական տնտեսական օբյեկտներում պետականացման նպատակային գործընթաց պետք է սկսվի:

Ազգային և հայրենասիրական գաղափարախոսական հենքով տնտեսական զարգացման հայեցակարգի մշակումն ու իրագործումը առաջնահերթություն պետք է դիտարկվի առաջիկա տասնամյակներում: Հայազգի գործարարը պետք է գերշահույթների ստացման զիչումներ

կատարի ի հաշիվ նոր աշխատատեղերի ստեղծման, ներկրվող ապրանքատեսակների տեղական արտադրությամբ փոխարինման, օտարերկրյա կապիտալի հյուրընկալման ճանապարհով, որը պետք է ակտիվորեն խրախուսվի պետության կողմից:

Տնտեսավարման առողջ մրցակցային դաշտի ստեղծումը և օլիգոպոլիկ համակարգի վերացումը լուրջ խթան կհանդիսանան ՀՀ տնտեսության զարգացման համար: Այս առումով, քաղաքական կամք է պետք ստվերային տնտեսությունը հարկային դաշտ բերելու, գերիշխող դիրքերը վերացնելու, անբարերխիղճ մրցակցային միջավայրի ձևավորումը կանխարգելելու ուղղությամբ, որի պարագայում կսկսեն գործել ազատ մրցակցության կանոնները և պայմաններ կստեղծվեն տնտեսության առողջացման համար:

Armen Juguryan
Doctor of Science, professor of Northern University
Jarmen1@yandex.ru

ECONOMY DEVELOPMENT LESSONS IN POST – INDEPENDENCE PERIOD OF RA

Key words: unfair competition, Diaspora capital, state foreign debt, state regulation of ecocnomy

After independence Armenia is faced on economy development difficulties. Still, in republic free market relation is not taking entirely realization in economy. In article is discussed economy development lessons during independence period and submitted conceptual proposals on economic recovery in Republic of Armenia.

Армен Джугурян
доктор экономических наук, проф. Северного университета
Jarmen@1yandex.ru

УРОКИ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РА В ПЕРИОД НЕЗАВИСИМОСТИ

Ключевые слова: недобросовестная конкуренция, капитал диаспоры, государственный внешний долг, государственное регулирование экономики

После провозглашения независимости Армения столкнулась с трудностями экономического развития. До сих пор в экономике республики всесторонне не реализуются рыночные отношения. В статье рассматриваются уроки экономического развития в период независимости и представлены концептуальные предложения по восстановлению экономики Республики Армения.

Նարեկ Անդրեասյան
ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ
narekandreasyan@yahoo.com

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՏԻՊՈԼՈԳԻԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հիմնաբառեր. ֆինանսական ռիսկեր, բանկային համակարգ, կառավարչական որոշումներ, որոշումների կայացման տիպոլոգիա

ՀՀ տնտեսական համակարգում բանկային ոլորտը գնահատվում է կայուն, որը դրսևորվեց անգամ համաշխարհային վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի

տարիներին: Այնուհանդերձ, ներկայումս վարկային պորտֆելում մեծ կշիռ ունեցող ճյուղերից չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշռի զգալի աճ է արձանագրվում սպառողական և առևտրի վարկերում: Նախորդ կիսամյակում «չաշխատող» վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռներն աճել են համապատասխանաբար 3.4 և 4.3 տոկոսային կետով և կազմել 10.2% և 10.9%: Սպառողական և առևտրի չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռները ընդհանուր չաշխատող վարկերում և դեբիտորական պարտքերում ավելացել են համապատասխանաբար 2.6 և 3.8 տոկոսային կետով և կազմել 23.6% և 21.3%:[1]

Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում, հաշվարկված միջազգային մեթոդաբանության համաձայն, կիսամյակի ընթացքում ավելացել է 3.1 տոկոսային կետով և կազմել 13.1%: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ/ակտիվներ հարաբերակցության ցուցանիշն ավելացել է 0.9 տոկոսային կետով և կազմել1.6%:

Վարկային ներդրումների ճյուղային բաշխվածության տեսանկյունից, ըստ տնտեսության ճյուղերի վարկային ներդրումների՝ Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը մնացել է անփոփոխ՝ 0.11 միավոր: Այս ցուցանիշի մակարդակը փաստում է բանկային համակարգում վարկային ներդրումների բաշխվածության փոքր կենտրոնացվածության մասին: Նույն ցուցանիշի մեծությունը, հաշվարկված ըստ բանկերի միջինի, ևս մնացել է անփոփոխ՝ 0.18 միավոր: Բանկային համակարգի վարկային ներդրումների ճյուղա-

[1] www.CBA.am

յին կենտրոնացվածության ցուցանիշի համեմատ՝ բանկերի միջին ցուցանիշի բարձր արժեքը փաստում է որոշ բանկերում վարկերի ճյուղային կենտրոնացվածության համեմատաբար բարձր մակարդակի մասին: Ընդհանուր վարկային ներդրումներում խոշոր փոխառուներին տրամադրված վարկային ներդրումների տեսակարար կշիռը տարեսկզբի համեմատ ավելացել է 0.3 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 26.2%: Տարեսկզբին իրականացված սթրես-թեստերի արդյունքների համեմատ՝ 2015 թ. վարկային ռիսկի սթրես-թեստերի արդյունքները վատթարացել են՝ պայմանավորված վարկային պորտֆելի վերադարձելիության նվազմամբ:

Ընդ որում, իրականացված վատթարագույն սթրես-սցենարում որոշ բանկերում արձանագրվել են ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջի խախտման դեպքեր:[2] Այդուհանդերձ, վարկային ռիսկից հնարավոր վնասների դեպքում բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը շարունակում է գերազանցել պահանջվող նվազագույն 12% սահմանաչափը, և անվճարունակության խնդիրների ի հայտ գալու հավանականությունը գնահատվում է ցածր:

Սակայն մտահոգիչ է այն հանգամանքը, որ տրանսֆերտների կրճատման արդյունքում բանկային համակարգի վարկային ռիսկն աճել է, իսկ շահութաբերությունը՝ նվազել: 2015 թ. ընթացքում ՀՀ տնտեսության և ֆինանսական կայունության վրա ազդող հիմնական արտաքին ռիսկերը պահպանվել են, սակայն նկատվել է վերջիններիս ազդեցության աճ: Մասնավորապես, միջազգային շուկաներում գունավոր մետաղների գների, Հայաս-

[2] Ֆինանսական կայունության հաշվետվություն, Երևան, 2015, էջ 36

տանի կողմից արտահանվող հիմնական ապրանքատեսակների նկատմամբ պահանջարկի, ինչպես նաև ՀՀ փոխանցվող մասնավոր տրանսֆերտների նվազումը նպաստել է ներքին սպառման, տնտեսական աճի դանդաղմանը: Նշված զարգացումները բացասաբար են ազդել տնային տնտեսությունների եկամուտների, ձեռնարկությունների վարկունակության վրա:

Այս առումով, ներկայումս բանկային համակարգի գործունեության ռիսկայնության աստիճանը փոքր-ինչ բարձրացել է և հնարավոր ռիսկային վնասների կանխարգելման գծով անհրաժեշտ են արդյունավետ կառավարչական որոշումներ:

Տնտեսավարման համակարգում կառավարչական որոշումը ընտրություն է, որն իրականացնում է ղեկավարը կամ հանձնախումբը՝ կառավարման և որոշակի կազմակերպչական խնդիրների լուծման ժամանակ: Այդուհանդերձ, յուրաքանչյուր որոշման վերջնական արդյունքն զգում և կրում է վերջնական սպառողը[3]:

Կառավարչական որոշումների վրա ազդում են մի շարք գործոններ, որոնք ունեն հետևյալ ընդհանրությունները.

- ղեկավարի անձնական հատկանիշները (արհեստավարժություն, մասնագիտական մակարդակ, գաղափարական հայացքների շրջանակ, գիտագործնական ուղղվածություն և այլն),
- որոշումների ընդունման գործընթացի տեղեկատվական ապահովումը (ռելևանտային (գործին անմիջականորեն առնչվող) տեղեկատվության տեսակարար կշիռը տեղեկատվության ընդհանուր համակարգում),

[3] Աղասարյան Գ., Կառավարչական որոշումների ազդեցությունը առևտրային բանկերի հաճախորդների սպասարկման որակի ազդեցության վրա. // ՀՊՏՀ գիտաժողով, 2015, էջ 326-334

- կազմակերպական գործոններ (որոշումների ընդունման գործընթացում աշխատողների մասնակցության չափը, ընդունված որոշման հաղորդումն աստիճանակարգային կառուցվածքով, հաղորդվող հրամանների շղթան, վերահսկողության կազմակերպումը և այլն),
- տեխնիկական գործոններ (տեխնիկական զանազան միջոցների օգտագործում),
- հոգեբանական գործոններ (կազմակերպության կուլտուրան և սոցիալ-հոգեբանական մթնոլորտը),
- որոշումների մշակման, ընդունման և իրագործման ժամանակի տևողությունը,
- արտաքին միջավայրի ազդեցությունը կազմակերպության գործունեության վրա,
- հստակ նպատակների առկայությունը (նպատակների ծառի կառուցում),
- խնդրի կառուցվածքը,
- լուծումների բազմազանությունը:[4]

Կառավարչական որոշումների տիպոլոգիան ակտիվ մեկնաբանվում է մասնագիտական գրականությունում, սակայն հիմնականում առաջարկվում են դասակարգման միևնույն չափանիշները (տես գծապատկեր 1):[5]

---

[4] Սուվարյան Յու., Մենեջմենթ, Ե., «Տիգրանակերտ», 2009, էջ 251: Башкатова Ю., Управленческие решения, М., 2008, с. 18.

[5] Злобина Н., Управленческие решения. Тамбов, 2007, с. 6. Пирогова Е., Управленческие решения. Ульяновск, 2010, с. 18. Սուվարյան Յու., Մենեջմենթ, Ե., «Տիգրանակերտ», 2009, էջ 251:

Գծապատկեր 1. Կառավարչական որոշումների դասակարգման համընդհանուր հատկանիշները[6]

[6] Կազմվել է հեղինակի կողմից:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բանկային համակարգում կառավարչական որոշումների շրջանակը համահունչ է ավանդական դասակարգմանը, սակայն ունեն որոշակի առանձնահատկություններ: Նախ, որպես կանոն, դրանք իմպուլսիվ չեն և կրում են զգուշավոր բնույթ, ելնելով վարկային գործառույթների ռիսկայնության աստիճանից: Բացի այդ, վարկավորման ուղղություններով որոշումների կայացումը, որպես կանոն, բանկերում կայացվում է կոլեգիալ սկզբունքով, քանի որ ռիսկերից բխող պատասխանատվության բեռը միանձնյա բնույթ չի կրում: Եվ վերջապես, ելնելով բանկային գործունեության պահպանողական բնույթից, հազվադեպ են նորարարական բնույթի որոշումներ կայացումները և հիմնականում դրանք կրում են ավանդական բնույթ:

Narek Andreasyan
Post graduate student of Economy Institute after M. Kotanyana at the Academy RA
narekandreasyan@yahoo.com

DECISION MAKING TYPOLOGY IN BANKING RISKS MANAGEMENT SYSTEM

Key words: financial risks, banking system, managerial decisions, decision making typology

The framework of decision making in banking system is relevant to the existing traditional classification, nevertheless with some peculiarities. First of all, the decisions in banking system is making not in impulsive ways and taking conventional conditions, having consideration of crediting activity risk level. Besides, in banks credit risk managerial

decision is suggesting not individual, but collegial approaches, because the risk responsibilities are taking collegial decision. And finally, taking in account the conventional character banking activity, it is random innovative decision making and mostly they are formatting in traditional ways.

Нарек Андреасян
аспирант Института экономики им. М. Котаняна академии РА
narekandreasyan@yahoo.com

ТИПОЛОГИЯ ПРИНЯТИЯ УПРАВЛЕНЧЕСКИХ РЕШЕНИЙ ПО БАНКОВСКИМ РИСКАМ

Ключевые слова: финансовые риски, банковская система, управленческие решения, типология принятия решений

Круг управленческих решений в банковской системе идентичен традиционным литературным подходам, но вместе с тем, имеет некоторые особенности. Прежде всего, принятие управленческих решений не носит импульсивный характер и осуществляется по консервативному принципу. Кроме того, в банках управленческие решения по рискам принимаются на коллегиальной основе, поскольку ответственность за рисковые потери не носит индивидуального характера. И, наконец, консервативный характер банковской деятельности не позволяет принимать управленческие решения инновационного типа, и в основном они носят традиционный характер.

Նոննա Խաչատրյան
ԵՊՀ դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
nonnakhachatryan@yahoo.com

ՄՐՑՈՒՆԱԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ում

Հիմնաբառեր. աշխատաշուկա, գործատու, բակալավրիատ, կրթության որակի ապահովում, ուսումնառության վերջնարդյունքներ:

Անկախացումից հետո, մասնագիտական կրթության որակի ապահովումը որքան էլ որ դրվեց կրթական բարեփոխումների շուրջ քսանամյա գործընթացի առանցքում, այնուամենայնիվ, ՀՀ-ում լուրջ հաջողություններ չարձանագրեց: Թվում էր, թե մասնավոր կրթավճարներով կրթության կազմակերպումը պետք է որ նպաստեր ուսումնառության որակի բարձրացմանը, քանի որ վճարողը ցուցաբերելու էր հատուկ պահանջատիրություն մատուցվող կրթական ծառայությունների նկատմամբ:[7] Սակայն, հակառակ պատկերը ձևավորվեց, երբ վճարովի համակարգում սովորողները գիտակցելով իրենց ֆինանսական ներդրման կարևորությունը մասնագիտական կրթօջախներում, առավել «ապահով դիրքավորվեցին», հասկանալով, որ միևնույնն է, իրենց դժվարությամբ են համալսարաններից հեռացնելու չսովորելու համար:

Միացանք Բոլոնիայի համաձայնագրին, հուսադրվելով, որ օգտագործելու ենք որակի ապահովման միջազգային առաջավոր փորձը: Բայց դա էլ չօգնեց: Ընդամենը որակի ապահովման գործընթացում կատարվեցին մի քա-

[7] Երիցյան Ս., Մասնագիտական կրթության մարտահրավերները, «Էդիթ Պրինտ», 2012 թ., էջ 131

նի կոսմետիկ փոփոխություններ, և արդյունքում համալսարանները առավելապես արձանագրեցին մասնագիտական կրթության որակի առաջընթաց «թղթի վրա», և ոչ թե իրականում: Եվ ուրեմն հարց է առաջանում, թե որն է մասնագիտական կրթության որակի ապահովման հիմնական դեղատոմսը:

Իհարկե, հարցը բազմաշերտ պատասխաններ ունի և այն կարելի է ներկայացնել բազմաթիվ փաստարկներով: Բայց, մեր կարծիքով, ընդհանրական պատասխանը պետք է որոնել կրթական ծառայությունների արդյունքները սպառող աշխատաշուկայում: Այսօր, գործատուների հիմնական մասը չափազանց անտարբեր է մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման որակի հանդեպ: Նրանց համընդհանուր դիրքորոշումն է. «թող ավարտի, կգա ու մենք էլ կսովորեցնենք»: Դե եթե սպառողը այնքան էլ շահագրգիռ չէ ծառայության որակով, ապա այն մատուցող համալսարաններն էլ կորցնում են իրենց զգոնությունը կրթության որակի նկատմամբ և անգամ պատասխանատվություն չեն կրում «անորակ» շրջանավարտներ թողարկելիս:[8]

Ի դեպ, գործող օրենսդրությունն էլ առանաձնապես չի նպաստում որակի ապահովմանը: «Բարձրագույն մասնագիտության և հետբուհական կրթության» ՀՀ օրենքում նշվում է, որ մասնագիտական կրթության նպատակը անձի կրթության զարգացման պահանջմունքների բավարարումն է (հոդված 24): Սակայն, որակյալ կրթության մատուցումը արևմտյան զարգացած երկրներում վաղուց արդեն շուկայամետ է և թիրախավորված է ոչ թե սովորողի, այլ գործատուի պահանջմունքների բավարարմանը: Անհատի ազատ և համակողմանի զարգացումը, գիտելի-

[8] Ճուղուրյան Ա., Մասնագիտական կրթության տնտեսագիտություն, «Էդիթ Պրինտ», 2010 թ., էջ 36

քահենք աշխարհահայացքի ձևավորումը գործատուների համար արդեն առաջնային չեն համարվում: Նրանք առավելապես ակտիվ են մասնագիտական հմտություններով և կարողություններով շրջանավարտների փնտրտուքներում:[9]

Փոխվել են ժամանակները և համացանցի առկայությունն ու մարդու ինքնազարգացման ցանկությունը կարող են ի վերջո ձևավորել գիտելիքներով հարուստ անհատականություն, որն ի սկզբանե՝ համալսարանական կրթության հիմնական նպատակն էր: Սակայն այժմ, կրթության վեկտորն առավելապես ուղղված է ոչ թե ուսանողի, այլ աշխատաշուկայի պահանջմունքների բավարարմանը, որով էլ բնորոշվում է կրթական ծառայությունների որակը:

Մեր իրականությունում կրթական ծառայությունները հիմնական կտրված են աշխատաշուկայի պահանջներից: Բուհերը պետք է շահագրգիռ լինեն գործատուների՝ կրթական ոլորտին մասնակցության հարցում և նախաձեռնող լինեն, որ վերջիններս ավարտական կուրսերում ընտրեն լավագույն ուսանողներին՝ հետագայում աշխատանք առաջարկելու նպատակով: Գործատուն, քաջատեղյակ լինելով մասնագետների պատրաստման գործընթացին, պետք է ակտիվ մասնակցություն ցուցաբերի ոչ միայն ուսումնական ծրագրերի բարելավման գործին, այլև իր «ներկայությունը» ապահովի կրթական ծառայությունների ոլորտում: Դրա իրագործման հնարավոր ճանապարհներն են. գործատուների կողմից լավագույն ուսանողներին խրախուսական կրթաթոշակների նշանակումը, ոչ թե ձևական, այլ բովանդակային պրակտիկաների կազմակերպումը, համալսարաններում պրո-

[9] Anne, Kjersti, Supporting links between universities and industry, The Research Council of Norway, 2013, pp. 112-113

ֆիլային ուսումնական ստուդիաների և ուսուցման կենտրոնների ձևավորման աջակցումը, առարկայական ծրագրերի գրախոսությունների իրականացումը:[10]

Գործատուները աստիճանաբար պետք է գիտակցեն, որ առավել արդյունավետ է իրենց բաժնեմասով ռեսուրսներ ծախսել համալսարաններում՝ կրթական ծրագրեր իրականացնելիս, քան աշխատանքի ընդունված բուհի շրջանավարտների վերապատրաստման լրացուցիչ ջանքեր գործադրել: Իսկ բուհերում գործող կարիերայի կենտրոնների առանցքային խնդիրը պետք է լինի, «բուհ-աշխատաշուկա» փոխկապակցության կամրջումը, գործատուի պահանջմունքների բավարարումը, և ոչ թե միայն պրակտիկաների կազմակերպման հարցերի լուծումը:

Բոլոնիայի համաձայնագրի տրամաբանությամբ, ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության երրորդ մակարդակը արմատական բարեփոխումների պետք է ենթարկվեր: Սակայն, այդ գործընթացը դեռևս տեղապտույտի մեջ է և լուրջ ուշադրության չի արժանանում ինչպես համալսարաններում, այնպես էլ կառավարության մակարդակով: Փետրվարի 25-ին ՀՀ կառավարությունը ընդունեց ասպիրնատուրայում ընդունելության և ուսուցման 238 –Ն որոշումը, որը մեր կարծիքով, ոչ միայն ոչինչ չփոխեց, այլ նույնիսկ հետընթաց արձանագրեց ասպիրանտական համակարգում:

Մասնավորապես, համաձայն կառավարության որոշման, ասպիրանտուրայում ընդունելության պայման է ներկայացվում օտար լեզվի, ինֆորմատիկայի իմացությունը, որից վաղուց արդեն հրաժարվել են արևմտյան բուհերը: Ժամանակն է հասկանալու, որ լավագույն ասպիրանտներ հավաքագրելիս պետք է կարևորել ոչ թե օտար

[10] Զաքարյան Լ., Մասնագիտական կրթության որակի ապահովման ուղեցույց, «Հյուսիսային համալսարան», Եր., 2015 թ.

լեզվի իմացությունը, այլ դիմորդի կարողություններն ու հմտությունները՝ նախանշված հետազոտությունը կատարելիս: Եվ այս առումով անհասկանալի է, թե ինչ կապ ունի թեստային մակարդակով օտար լեզվի իմացությունը ասպիրանտուրա ընդունվելիս: Ասպիրանտը կարող է նաև հետազոտություն իրականացնել, փայլուն չտիրապետելով օտար լեզվին, կարողանալով կողմնորոշվել միայն օտարալեզու մասնագիտական գրականության շրջանակում:

Առավել անհասկանալի է նաև ասպիրանտուրա դիմելիս ինֆորմատիկայից թեստի հանձնումը: Եթե դիմորդը, մինչ այդ ստացել է բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններ, ապա ինչպես կարող է համակարգչային հմտություններին չտիրապետել: Այս առումով, ինֆորմատիկայից թեստ հանձնելը ավելորդ բեռ եմ համարում ասպիրանտական ընդունելության ժամանակ: Այս դեպքում հարց է առաջանում, թե ասպիրանտուրայի ընդունելության ժամանակ ինչը պետք է կարևորել:

Երբ ուսումնասիրում ենք բարձրագույն մասնագիտական կրթության երրորդ մակարդակի արևմտյան փորձը, ապա պարզ է դառնում, որ համալսարաններին առավելապես հետաքրքրում է ոչ թե դիմորդի օտար լեզուների իմացությունը կամ համակարգչային հմտությունները, այլ մագիստրատուրայում թողած նրա հետազոտական հետագիծը:[11] Այնտեղ լավ են հասկանում, որ հաջողության կհասնեն այն դիմորդները, որոնք հետազոտական աշխատանքի ջիղ ունեն, օժտված են ստեղծարար մտածողությամբ, այլ ոչ թե նրանք, ովքեր շատ խելացի են ու բազմակողմանի զարգացած: Այս առումով, դոկտորանտուրայի ընդունելության ժամանակ առավելապես հաշվի են առնում ոչ թե մասնագիտական քննությունները, այլ հարցազրույցները, պարզելու համար դիմորդի կարողութ-

[11] Ճուղուրյան Ա., Մխիթարյան Ա., Ասպիրանտուրայից դոկտորանտուրա, «Հյուսիսային համալսարան», 2016 թ., էջ 68-69

յունները՝ իր առջև դրված ստեղծարար խնդիրները լուծելիս:

Կարծում ենք ժամանակն է, որ ասպիրանտուրայում բարեփոխումները խորքային բնույթ կրեն և չներկայանան ենթաօրենսդրական “կարկատաններ”-ով: Այս առումով, առաջին հերթին պետք է գնալ օրենսդրական արմատական փոփոխությունների, և անցում կատարել անցյալ դարի 30-ականներին ձևավորված ու մինչ այժմ գրեթե փոփոխություն չկրած ասպիրանտական համակարգից՝ ժամանակակից դոկտուրանտուրայի: Ի վերջո, Բոլոնիայի համաձայնագիրն է մեզ հուշում, որ անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել բարձրագույն մասնագիտական կրթության որակին՝ հրաժարվելով կոսմետիկ փոփոխություններից և կիրառելով դոկտորական կրթության Զալցբուրգյան սկզբունքները: Իսկ դրանք առնչվում են հետազոտությունների ֆինանսավորմանը, հետազոտողի կարգավիճակին, դոկտորանտուրայի միջազգայնացմանը, սովորողների շարժունությանը, միջգիտակարգային հետազոտություններին, որոնց առկայության դեպքում է ձեվավորվում մրցունակ դոկտորանտուրա: Ահա թե ինչ առանցքային դրույթներ պետք է կարգավորվեն ասպիրանտական համակարգին առնչվող ենթաօրենսդրական ակտերը, որով այդ կրթական աստիճանը ի վերջո մեզ մոտ կդառնա մրցունակ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մրցակցային կրթական շուկայում ուսումնառության վերջնարդյունքները ուղղորդվում են առավելապես շրջանավարտի մասնագիտական հմտություններին ու կարողություններին: Համալսարանական կրթական ծրագրերը առավելապես հաշվի են առնում աշխատաշուկայի պահանջները, հաշվի առնելով ուսումնառության վերջնարդյունքների ընդունումն ու սպառումը, և ոչ թե

նպատակադրվում են «խելացի և գիտելիքներով հարուստ» շրջանավարտների թողարկմանը:

Nonna Khachatryan
assistant professor, PhD in Economics, Yervan State University
nonnakhachatryan@yahoo.com

ISSUES OF COMPETITIVE PROFESSIONAL EDUCATION IN RA

Key words: labor market, employer, bachelor, quality assurance in education, learning outcomes

In framework of competitive education market learning outcomes usually are targeted more often than not to the skills and abilities of graduate students. Educational programs in universities mostly taking into account labor market demands, than preparing «smarts and science full» graduate students, which is keeping competitive position educational activity.

Нонна Хачатрян
доцент, кандидат экономических наук, Ереванский государственный университет
nonnakhachatryan@yahoo.com

ПРОБЛЕМЫ КОНКУРЕНТОСПОСОБНОГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ В РА

Ключевые слова: рынок труда, работодатель, бакалавриат, обеспечение качества образования, конечные результаты обучения

На конкурентом рынке образования конечные результаты в основном нацелены на навыки и способности

выпускников вузов. Университетские образовательные программы в основном учитывают требования рынка труда, имея цель подготовки не только «умных и всесторонне развитых студентов», но и формирования образовательных конечных результатов, исходя из потребостей работодателей.

Bahareh Tajfirouz
European Regional Educational Academy, post graduate student
baharehtajfirooz1363@gmail.com

Women`s Empowerment Influence in Sustainable Development Process

Abstract: Sustainable development is defined as a development that meets the needs of present without comprising the ability of future generation to meet their own needs. In this paper women`s role in advancement of sustainable development and their empowerment influence in sustainability goals with consideration of three pillars of economics, society and environment will be discussed.

Keywords: sustainable development, women's empowerment, gender equality, higher education, labor market, sustaining resources

Women`s empowerment is one of the important factors of sustainable development. Women are the major victims of poverty, violence, aggression, malnutrition, hence paying more attention to improving women`s social and economic condition will lead to public health. Nowadays studies concerning women`s empowerment are vastly conducting and most of the countries have realized that without empowering women, the sustainable development is not attainable.

Nurturing children, household responsibilities, sustaining environment, and correct utilization of resources

and energy conservation are the main issues that women are directly connected to. Women are continuing to be among the world`s most vulnerable groups, as access to the resources and powers are highly bended toward men, Gender equality is an aim and important factor for sustainable economic growth, social and environmental development. By providing the same opportunities for both sexes in making decision in all activities related to sustainable development a path to a better future can be attained where the women`s and men`s interests are both taken into account in the allocation of the resources.

Women`s empowerment can help society to reach to its sustaining goals and on the other hand as the women make up half of the world`s population, their empowerment will lead to the development and progression of half of the society. Since women`s empowerment is a social phenomenon and social phenomena has multi-dimensional cause. On the other hand internal factors such as physical, mental and economic conditions of the family have determining roles in individual empowerment, and in the existing social structures can have determining roles in this case.

One of the factors which has an important role in individual empowerment is the support of the society. Thus the effect of social and economic supports on women`s empowerment is being studied according to a survey conducted by Mahmoud Ketebi et al.(2003)about influential factors on women`s empowerment shows that higher education, health condition improvement, property rights, reducing discrimination in labor market and eliminating the traditional beliefs have influential roles in women`s empowerment. Among these variable higher education has direct influence on women`s empowerment. Women with higher level of education are in a better economic and

property right conditions.[12] This survey shows that women as influential factors have the most share of the society in different areas of agriculture, economic and social affairs.

Sara Hlupekile Longwe, one of the theorists on women`s empowerment, believes that in order to gain women`s empowerment following steps should be taken, welfare , availability, access conscientisation, mobilization and control. In the welfare step, improvement in socio-economics status is studied, such as income, better nutrition and etc. In this level gender discrimination is considered. In the access level, women should access to resources (lands, labor, and capital), labor which generate income, education and services. In this step women increase their access relative to men. In consciensitation step, women should recognize that their social problems are structural forces that disadvantage and discriminate against women, and this discrimination are cultural and therefore are changeable. Conscientisation in this case means to have faith in equality. In mobilization actions related to the conscientisation should be implemented and this mobilization should be equivalent to the numbers of women who are active in the society, and finally control step means equilibrium of power between men and women.[13]

Distribution of resources between men and women and protection of these resources for the next generation describe one of the objectives of gender dimensions of sustainable development which is satisfying need of present and hand theses resources to the next generation.[14]Economics, environment and society are three

---

[12] Journal of Iranian Social development Studies 2012(Autumn),Vol.4,No.4

[13] From Sara Longwe-2002."Spectacles for Seeing Gender in Project Evaluation."

[14] Empowering Women for Sustainable Development, Lisa Warth , Malinka Koparanova, UNITED NATIONS ECONOMIC COMMISSION FOR EUROPE, Geneva, Switzerland,No.2012.1 January 2012

pillars which have equal importance in attaining sustainable development. Stressing on one or two pillars in absence of third pillar causes the neglect in the progression of sustainable development. For example Focusing on economics and environment without paying attention on the social factors can lead to gender gap and prevents to reach to a somehow gender equality . But why connecting women`s empowerment to sustainable development is important; first achieving human rights of diverse groups of women is a requirement of a sustainable world. Second to correct disproportionate impact of social, economic and environmental stresses on women. Third to bring about an effective synergy between gender equality and sustainable development.[15]

The economics is male leading because women do not participate to the same extend as men do, and women`s works are mostly undervalued in all countries and we see few women reach the top ranks of business and management. There are lots of factors and problems which barrier women`s progression, one of the greatest problems is the lack of adequate child care for women who work and have children. Studies show that countries with government funded child care like Scandinavian countries have more working women in top ranks of management and business and higher birth rate.

Nowadays we see increasing presence of women in workplaces; however they have not yet their potential share in economics and political leadership. Studies conducted by Catalyst, Mckinsey show companies with more women in the leadership positions have better performances and higher

[15] Gender Equality and Sustainable Development. World Survey on the Role of Women in Development 2014 p.12

profits.[16] On the other hand United Nations and World Bank studies indicate presence of women in sustainable development leads to the poverty reduction and a faster growth in economics.[17] However, with this constant and steady growth in gender gap and social and income disparity how women can help to enhance sustainable development. In order to answer this question we have to evaluate women`s role in three pillars of sustainable development.

Social pillar of sustainable development is the most sensitive aspect as it emphasizes on equity and equality. Raising the education level of women is one of the important factors in increasing female productivity and enhancing well-being of families and Children. In developing countries increasing women`s literacy level will lead to reduction of gender inequality and poverty. In social pillar of sustainable development investment in welfare programs, increasing education level of women and enhancing women`s presence in all sectors of society and economics will help next generation to do better than present.

Economic pillar of sustainable development have to ensure that all resources are distributed and allocated fairly and efficiently. Sustainable economic growth in one hand needs efficient use of skills and qualification of female labor force, and on the other hand to be cautious of reduction of fertility rate and aging population. As have been discussed previously government funded child care brings more women in business and work sectors and increases fertility rate.

---

[16] How advancing Women`s equality can add $12 trillion to Global Growth. Report- Mckinsey Global institute-September 2015

[17] Are women Keys to Sustainable Development? Author :Candice Steven ,Boston University ,Sustainable development Insights-003,April 2010

Environment pillar of sustainable development takes care of issues like recycling, waste management, renewable energies and so on. According to the surveys conducted by OECD between men and women, it is shown that women are more likely to buy recyclable products and they leave smaller footprints on ecology. Women spend more time to seek information regarding recyclable products and lifestyle alternatives. Above all women are behind the organizations support the enhancement of ecological and recyclable products to sustain the environment.

Conclusion:

Gender gap and lack of an efficient management system encouraging fuller participation of women in economic, business and social sectors are barriers in speeding up the advancement of sustainable development. Empowering and involving women in all aspects of education, management, production and decision making will help to a faster achievement of sustainability goals in economics, society and environment. However, women`s empowerment requires a reinforcing economics, society and environment which support the reduction and eventually elimination of obstacles to gender equality.

Բահարեհ Թաջֆիրուզ
Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիա, ասպիրանտ
baharehtajfirooz1363@gmail.com

ԿԱՆԱՆՑ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հիմնաբառեր. կայուն զարգացում, կանանց ներազդեցություն, գենդերային հավասարություն, բարձրագույն կրթություն, աշխատաշուկա, բավարար ռեսուրսներ

Գենդերային խնդիրները, արդյունավետ կառավարման համակարգի բացթողումները, կանանց ոչ լիարժեք մասնակցությունը տնտեսական, գործարար և սոցիալական ոլորտներում՝ խոչընդոտներ են առաջացնում կայուն զարգացման համար: Ներգրավելով կանանց կրթության, կառավարման, արտադրության և որոշումների կայացման բոլոր ասպեկտներում, հնարավորություն կստեղծվի ավելի արագ հասնելու տնտեսության, հասարակության և շրջակա միջավայրի կայունության գործընթացում: Սակայն, կանանց ներազդեցությունը իր հերթին պահանջում է զարգացնելու սոցիալ-տնտեսական միջավայրը, որը ի վերջո վերացնելու է գենդերային անհավասարության խոչընդոտները:

Баарей Таджвироуз
Европейская региональная академия образования, аспирант
baharehtajfirooz1363@gmail.com

ЗНАЧИМОЕ ВЛИЯНИЕ ЖЕНЩИН НА ПРОЦЕСС УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ

Ключевые слова: устойчивое развитие, влияние женщин, гендерное равенство, высшее образование, рынок труда, устойчивые ресурсы

Гендерный разрыв и отсутствие эффективной системы управления, а также неполноценное участие женщин в экономической, деловой и социальной жизни являются барьерами в ускорении продвижения устойчивого развития. Расширение прав и возможностей и вовлечение женщин во все аспекты образования, управления, производства и принятия решений будет способствовать более быстрому достижению целей устойчивого развития в области экономики, общества и окружающей среды. Тем не менее, расширение прав и возможностей женщин требуют развивающую экономику, общество и окружающую среду,

которые поддерживают сокращение, и в конечном итоге устранение препятствий на пути гендерного равенства.

Նինա Հաջոյան
Հյուսիսային համալսարանի մագիստրոս
ninahajoyan@yahoo.com

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հիմնաբառեր. Հանրային կառավարում, հանրային ֆինանսներ, ծրագրային բյուջետավորում, մրցակցային առավելություններ, գործարար միջավայրի բարելավում, արտահանման խթանում:

Ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն ստեղծելու վճռականությամբ ՀՀ կառավարությունը տնտեսության մեջ որդեգրեց շուկայական հարաբերություններին անցնելու քաղաքականությունը, որի իրականացման նպատակով սկիզբ դրվեց ազատական արժեքների վրա հիմնված տնտեսական բարեփոխումների գործընթացին: Տնտեսության ազատականության, ներդրումային և գործարար ակտիվության բարձրացման, ազատ առևտրային ռեժիմի ապահովման և համաշխարհային տնտեսության մեջ երկրի լիարժեք ինտեգրման քաղաքականության անշեղ և հետևողական իրականացման արդյունքում բարձրացել է Հայաստանի տնտեսության կանխատեսելիության աստիճանը և նվազել է ռիսկայնության մակարդակը, ինչն ակնհայտորեն դրական է անդրադարձել մեր երկրի վարկանիշի վրա:

Այս առումով, տնտեսական քաղաքականությունը, քանակական աճին զուգընթաց, ներկայումս ուղղված է

որակական տնտեսական զարգացման ապահովմանը: Հայաստանի համար ներկա փուլի ռազմավարական գերխնդիրը գիտելիքահեն տնտեսության կառուցումն է՝ հիմնված գիտատեխնիկական առաջընթացի համար առավել լուրջ նախադրյալների առավելագույնս իրացման վրա: Տնտեսությունը որակապես նոր մակարդակի վրա փոխադրելու, այսինքն՝ նոր ստեղծված արժեքում գիտատար ապրանքների, տեխնոլոգիաների, ծառայությունների տեսակարար կշիռն ավելացնելու միջոցով տնտեսական զարգացման քաղաքականությունն իրականացվում է հետևյալ ռազմավարական ուղղություններով:

Մրցակցային առավելությունների ձևավորում: Մրցակցային առավելությունների ձևավորման գործընթացը հանրապետությունում ընթանում է այն հիմնական ռազմավարական սկզբունքի ընկալմամբ, համաձայն որի մրցունակությունը ոչ թե ժառանգվում, այլ ձեռք է բերվում ժամանակի հետ համընթաց: Տնտեսության մրցունակությունը կախված է իրական հատվածում արդիականացման և նորարարությունների ներդրման հնարավորությունից: Մրցունակության բարձրացման քաղաքականությունը Հայաստանում կենտրոնացած է տնտեսության առանձին ոլորտների և բնագավառների վրա: Գերխնդիրն այնպիսի ճյուղերի գերակշռության ապահովումն է, որտեղ արտադրության գործոնները բարձր որակավորում ունեցող կադրերն են և հզոր գիտատեխնիկական հենքը, որոնք խոշոր ներդրումներ ներգրավելու և անընդհատ արդիականանալու հատկություն ունեն:

Ինովացիոն գործընթացների զարգացում: ժամանակակից գլոբալացման պայմաններում, երբ կապիտալի հոսքերը համաշխարհային շուկայում աննախադեպ աճել են և մեծապես ուղղված են բարձր տեխնոլոգիաների ոլորտ, իսկ նորարարությունների ներմուծումը դարձել է

շուկայական տնտեսության առանցքային գործոն, ինովացիոն զարգացման քաղաքականությունը պետք է ուղղել այդ հոսքերի համար Հայաստանը գրավիչ դարձնելուն՝ առավելագույն կարճ ժամանակաշրջանում երկիրը դարձնելով եթե ոչ բարձր տեխնոլոգիաներ ստեղծող, ապա գոնե այն սպասարկող երկիր: Նման երկրորդային դերից առաջնայինի (սպասարկողից՝ ստեղծողի) անցման համար պետք է իրականացվի ժամանակակից համակարգերին ինտեգրվելու ունակ գիտահետազոտական համակարգի ձևավորմանն աջակցման քաղաքականություն:

Գործարար միջավայրի շարունակական բարելավում: Գործարար միջավայրի բարելավման և գրավչության մակարդակի շարունակական բարձրացման հիմնական գրավականը համապատասխան նպաստավոր և կայուն իրավական դաշտի առկայությունն է, որի պայմաններում տնտեսվարողը, կրելով միայն գործարար ռիսկեր, ջանքերը կուղղի դեպի կառավարման հմտությունների կատարելագործումը: Այս նպատակով պետք է իրականացվեն ինստիտուցիոնալ բարեփոխումներ (ֆինանսական, ապահովագրական, ստանդարտացման և այլ հատվածներում), որոնք կերաշխավորեն տնտեսության մեջ երկարաժամկետ և լայնածավալ ներդրումների ներգրավում: Ներքին և արտաքին ներդրումների ներգրավման նպատակով պետք է իրականացվող քաղաքականության գերակայություն հանդիսանա ներդրումների ներգրավման ակտիվ քաղաքականության վարումը, որի իրականացման հիմնական արգելքներն են Հայաստանի Հանրապետության օրենսդրության փոփոխման և պաշտոնական մեկնաբանությունների անկանխատեսելիությունը, դատական համակարգի նկատմամբ անբավարար վստահությունը, ֆինանսական միջնորդության ցածր մակարդակը, հարկային և մաքսային վարչարարության ան-

բավարար որակը: Ուստի պետությունը պետք է ձեռնարկի միջոցներ նշված արգելքները վերացնելու ուղղությամբ:

Արտահանման խթանում: Արտահանման առաջանցիկ տեմպեր ապահովելու համար հանրապետությունում որդեգրվել է արտահանման ուղղակի խրախուսման քաղաքականություն: Շարունակաբար վարչարարության պարզեցում կատարելուց բացի անհրաժեշտ է ձեռնարկել խթանմանն ուղղված որոշակի միջոցառումներ՝ մի կողմ թողնելով արտահանման օբյեկտիվ սահմանափակումները: Արտահանման ծավալների մեծացման և ներմուծման նկատմամբ դրա առաջանցիկ աճի ապահովման առումով ձևավորված բավականին ազատական դաշտը շարունակաբար բարելավվում է՝ շեշտադրում անելով հատկապես գիտատար և տեխնոլոգիատար արտադրության արդյունքների արտահանման խրախուսման վրա: Այս քաղաքականության հետագա զարգացումը Հայաստանում ընթանալու է տրանսպորտային հարցի այլընտրանքային լուծման ապահովման, արտահանողների սուբսիդավորման և արտոնյալ վարկավորման գործուն համակարգի, արտահանողների ռիսկերի ապահովագրման, մարքետինգային և որակի կառավարման համակարգերի լիարժեք ներդրման, անդրազգային ընկերությունների ներգրավման ճանապարհով:

Տարածքային զարգացում: Հանրապետության կայուն տնտեսական զարգացման համար անհրաժեշտ է, որ տնտեսությունը հավասարակշռված բաշխում ունենա նաև աշխարագրական առումով: Որդեգրված քաղաքականությունը խնդրի կարգավորումը պայմանավորում է տարածքներում գործարար միջավայրի որակի բարձրացմամբ և տարածքների համաչափ սոցիալ և մշակութային զարգացմամբ, որոնց իրականացման գործում առաջնահերթ լուծումներ են պահանջում կառավարման համա-

կարգի կատարելագործման և ենթակառուցվածքների գործունեության բարելավման խնդիրները:

Ելնելով հիմնախնդիրների լուծման առաջնահերթությունից և տարածքային քաղաքականության գերակայություններից՝ ՀՀ տարածքների տնտեսական զարգացման մակարդակների միջև առաջացած անհամամասնությունների հաղթահարումն իրականացվում և հետագայում ևս ծավալվում է տարածքներում կլաստերների ձևավորման և զարգացման, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման, ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծման և ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման միջոցով:

Այդ նպատակով պետք է իրականացնել Հայաստանի այլ քաղաքների զարգացման տեմպերի կտրուկ արագացմանը և ներդրումային ակտիվության էական աճին նպատակաուղղված միջոցառումներ, որոնք կներառեն ազգային ծրագրերի ստեղծումը, տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների ուժեղացումը՝ միջհամայնքային միավորումների ստեղծման միջոցով, պետական և մասնավոր հատվածների գործընկերության խրախուսումը:

Արդյունաբերության զարգացում: Արդյունաբերական քաղաքականությունը միջոցառումների համակարգ է, որն ուղղված է ազգային տնտեսության զարգացմանը, նրա ինտեգրմանը համաշխարհային տնտեսությանը, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների, ժամանակակից տեղեկատվական և այլ ծառայությունների, մարդկային կապիտալի զարգացմանը: Նրա ակտիվ և հետևողական իրականացումը, որն ուղղված է տնտեսության նորացման և տնտեսավարման ինովացիոն եղանակներին, հնարավորություն կտա բարձրացնել բնակչության կենսամակարդակը, կրճատել աղքատությունը և արժանի տեղ գրա-

վել համաշխարհային տնտեսության մեջ: Արդյունաբերության քաղաքականության հիմնական նպատակն է՝ առավելապես պետական կարգավորման անուղղակի միջոցներով ապահովել արդյունաբերության ներդաշնակ զարգացումը և վերացնել տնտեսական աճը արգելակող խոչընդոտները:

Հանրային կառավարման համակարգի բարեփոխումները բացառիկ նշանակություն ունեն Հայաստանը մրցունակ, ազատական տնտեսավարման սկզբունքների վրա խարսխված, միջազգային չափանիշներին համապատասխանող ժողովրդավարական երկիր դարձնելու գործում: Այս ոլորտում հիմնախնդիրների լուծման ուղիներն են՝

- պետական կառավարման մարմինների գործունեության բարձր արդյունավետության, վերահսկելիության և թափանցիկության ապահովումը,
- հասարակության առջև հաշվետու լինելու մակարդակի էական բարձրացումը, պետական ու մասնավոր հատվածների համագործակցության զգալի խորացումը,
- օրենսդրության կայունության սկզբունքի վրա տնտեսության մեջ պետության կարգավորիչ գործառույթների շարունակական հստակեցումը:

Հայաստանի հարկային քաղաքականությունը երկրի տնտեսական, համակարգային և հասարակական զարգացման ներկա փուլին անհամապատասխան է և մեծապես խոչընդոտում է արտադրողականության աճին: Հարկային համակարգի կատարելագործման հիմնական ուղղություններն են՝

- հարկային օրենսդրության պարզեցումը և պահանջների հստակեցումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ առկա անհստակութ-

յունները և երկիմաստությունները վերացնելու միջոցով,

- հարկման բազայի ընդլայնումը և հարկային բեռի հավասարաչափ բաշխումը, ինչը կիրագործվի հատկապես տնտեսական գործունեության ստվերային և ոչ ֆորմալ մասի կրճատման միջոցով և նոր հարկային արտոնություններ չսահմանելով,
- հարկման մեխանիզմների կատարելագործումը՝ վերացնելով հարկումից խուսափելու օրենսդրական սողանցքները, ինչպես նաև պարզեցնելով և հստակեցնելով իրավական նորմերը,
- գործունեության առանձին տեսակների համար սահմանված հարկման այլընտրանքային համակարգերի փոխարինումը հարկման ընդհանուր համակարգով,
- արտոնությունների առավելագույն կրճատումը, առանձին ոլորտների, գործունեության առանձին տեսակների, առանձին ձեռնարկությունների համար որևէ բնույթի հարկային արտոնությունների բացառումը,
- հարկային վարչարարության շարունակական բարելավումը՝ շեշտը դնելով հատկապես խոշոր հարկատուների վրա:

Ֆինանսական եկամուտ ստանալու համար Հայաստանը մեծապես հենվում է ԱԱՀ-ի վրա (աղյուսակ 1): Հարկերի հավաքագրման համակարգը շատ թույլ է. մշակված չեն որոշակի առավելություններ հարկատուներին մոտիվացնելու համար: Այս ամենը հանգեցնում է մրցակցային դաշտի փլուզմանը, մասսայական անօրինականությունների, օրենքով աշխատող ընկերությունների ցածր շահութաբերությանը և խանգարում է նոր ընկերությունների մուտքը թե ներքին և թե արտաքին շուկաներ:

ԱԱՀ-ն պետք է աստիճանաբար կրճատվի մինչև ավելի կայուն մակարդակ (10 և 15%) տեղական շուկայի ոլորտների համար, վերանա հյուրանոցներում և խըստորեն փոխհատուցվի արտահանման համար արտադրված բոլոր ապրնքների համար: Այդ ամենի հետ մեկտեղ պետք է բարելավվի ընկերությունների կամավոր հարկերի հանձնման գործընթացը: Շահութահարկի հավաքագրման ցածր տոկոսը ասում է այն մասին, որ շահութահարկը պիտի կրճատվի (նույնիսկ եթե ժամանակավորապես), իսկ օրենսդրությունը պետք է բարելավվի, որպեսզի Հայաստանը ունենա բարենպաստ հիմք օտարեկրյա ընկերությունների հետ գործարքների համար: Բարձր եկամտային հարկը, հնացած պետական սոցիալական ապահովության վճարումների բաշխման հետ միասին, արհեստականորեն բարձրացնում են աշխատուժի գինը ընկերությունների համար և խթանում անօրինականությունների աճը՝ միաննույն ժամանակ չլուծելով թոշակների նորմալ բաշխման հարցը:

Կառավարությունը նախատեսում է հասնել հարկային եկամուտների անհրաժեշտ մակարդակին՝ հատկապես հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման միջոցով:

Աղյուսակ 1.

ՀՀ բյուջեի ձևավորման հարկային եկամուտներ (մլն դրամ)[18]

Հարկային եկամուտներ	2011	2012	2013	2014
Ավելացված արժեքի հարկ	254 158.1	301 724.5	328 482.8	369 661.6
Շահութահարկ	80 800.5	77 813.8	97 842.3	118 653.4
Եկամտային հարկ	60 204.7	73 939.8	81 210.6	91 667.3
Ակցիզային հարկ	42 767.1	48 140.5	39 404.5	49 323.8
Գույքահարկ	10 263.4	11 262.0	11 793.6	12 089.0
Հողի հարկ	4 974.3	4 585.7	4 429.0	4 209.3
Մաքսատուրք	25 111.3	29 366.7	36 289.4	43 040.1
Հաստատված վճարներ	23 815.6	21 976.4	20 741.9	14 859.7
Բօգտագործման վճարներ	6 120.5	9 102.5	12 199.7	26 133.1
Պարզեցված հարկ	330.4	-50.4	-50.0	- 44.6
Այլ հարկային եկամուտներ	9 998.3	12 039.4	15 463.9	12 202.6

Այս ուղղությամբ կկարևորվեն տնտեսական գործունեության ստվերային մասի կրճատմանն ուղղված միջոցառումները՝ դրանով իսկ ամրապնդելով գործունեության համահավասար պայմաններ: Այն կիրակա-

[18] www.armstat.am, էլեկտրոնային ռեսուրս, դիտվել է 25.03.15թ.

նացվի ստուգումների գործընթացի արդյունավետության բարձրացման, ապօրինի և ստվերային տնտեսական գործունեության բացահայտման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների ուժեղացման և պատասխանատվության խստացման մեխանիզմների հետևողական իրագործմամբ:

Երկրում օրենքի գերակայություն հաստատելու, պետական կառավարման համակարգում կարգապահություն եւ պաշտոնատար անձանց աշխատանքային թերացումների համար պատասխանատվություն սահմանելու հարցում գործադիր իշխանությունն այսօր ավելի քան վճռական է: Իր գործունեության ծրագրում կառավարությունն ընդգծում է նաև, որ միջոցներ են գործադրվելու գործարարության նկատմամբ անհարկի ու ապօրինի միջամտությունն արգելակելու, վարկային ու դրամաշրջանառային միջոցների նկատմամբ վերահսկողություն սահմանելու ուղղությամբ, ըստ ամենայնի պաշտպանվելու են սեփականատիրոջ իրավունքներն ու օրինական շահերը պաշտոնատար անձանց կամայականություններից ու ոտնձգություններից:

Վերոնշյալ միջոցառումներն իրականացնելու և կոռուպցիայի դեմ պայքարն արդյունավետ դարձնելու համար կարևոր ու առաջնային է դատահիրավական մարմինների աշխատանքը, քանի որ խնդիրները փոխկապակցված են եւ պետք է լուծվեն միասին: Այդուհանդերձ, տնտեսական բարեփոխումների ծրագրի եւ իրավական համակարգի վերափոխման համատեղ իրականացումը առաջնային եւ անհրաժեշտ խնդիր է, հատկապես, եթե հաշվի են առնվում կառուցվածքային հարցերը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տնտեսության զարգացման համար էական նշանակություն ունի հանրային կառավարման բարելավումը:

Այսօր հանրային կառավարման ոլորտում ողջ աշխարհում լայն տարածում է գտել մասնավոր կառավարման բաղադրիչների և սկզբունքների կիրառումը, որն ապահովում է գործունեության արդյունավետության կարևորումը: Այս միտումները տեղ են գտնում նաև Հայաստանի պետական կառավարման համակարգում՝ հանրային կառավարման ոլորտի բարեփոխումների և ծրագրային բյուջետավորման սկզբունքների ներդրման միջոցով: Հայաստանի տնտեսության հեռանկարային զարգացման համար պետությունը իր ուշադրությունը պետք է սևեռի Հայաստանում ինովացիոն գործընթացների զարգացմանը, մրցակցային առավելությունների ձևավորմանը, արտահանման խթանմանը, գործարար միջավայրի շարունակական բարելավմանը, այդ թվում՝ հարկային քաղաքականության և վարչարարության բարելավման միջոցով, արդյունաբերության խթանմանը և տարածքային համաչափ զարգացմանը:

Nina Hajoyan
Master program student of Northern University
ninahajoyan@yahoo.com

THE WAYS OF IMPROVING THE MANAGEMENT OF ECONOMY

Key words: public administration, public finance, program budgeting, competitive advantages, enhancement of business environment, export stimulation

Improving public administration is essential for economic development. There is currently a wide-spread global tendency towards using the elements and principles of private sector

management in public administration, which leads to a greater focus on efficiency. These trends are also developing in the public administration system in Armenia through implementation of public administration reforms and introduction of program budgeting. To ensure long-term and sustainable economic development the Government should focus on fostering competitive advantages, stimulating export and innovation, continuous improvement of business climate, including, inter alia, improvement of tax policy and administration, stimulating industrial growth and proportionate regional development.

Нина Аджоян
магистрант Северного университета
ninahajoyan@yahoo.com

ПУТИ УЛУШЕНИЯ УПРАВЛЕНИЯ ЭКОНОМИКОЙ

Ключевые слова: государственное управление, публичные финансы, конкурентные преимущества, улучшение бизнес среды, стимулирование экспорта

Улучшение системы государственного управления играет значительную роль в развитии экономики. В настоящее время во всем мире имеют широкое распостранение тенденции применения элементов и принципов частного управления в системе государственного управления, которое обеспечивает повышенное внимание на вопросы эффективности. Эти тенденции намечаются также в системе госуправления Армении, путем реформ системы государственного управления и внедрения принципов программного бюджетирования. Для

перспективного развития экономики Армении необходимо, чтобы государство в первую очередь обратило внимание на стимулирование экспорта и инновационных процессов, формирование конкурентных преимуществ, постоянное улучшение бизнес среды, в том числе посредством усовершенствования налоговой политики и администрирования, стимулирование индустриального и равномерного регионального развития.

Ստեմ Մխիթարյան
ՀՀ ԲՈՀ-ի փոխնախագահ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու
mkhitaryan@yahoo.com

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

Հիմնաբառեր. ասպիրանտուրա, դոկտորանտուրա, ատենախոսություն, զալցբուրգյան սկզբունքներ

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո խնդիր դրվեց ձևավորելու գիտական աստիճանաշնորհման ազգային կառույց: Ռուսական գիտական իրականությունում, ի տարբերություն արևմտաեվրոպականի, ավելի մեծ ուշադրություն է դարձվել ատենախոսություններին[19], որտեղ լուծվում էին առավել ընդգրկուն ու բարդ խնդիրներ: Այն սկսել է ձևավորվել մինչհեղափո-

[19] Иванов А.Е. 1994. Ученые степени в Российской империи ХУШ в. — 1917 г. М., РАН инст. Российской истории, 200 стр., Кричевский Г.Г. 1985. Ученые степени в университетах дореволюционной России // История СССР. № 2. М. «Наука». С. 141-153.

խական Ռուսաստանում ու համապարփակ տեսք ստացել XX դարի 50-ական թվականներին՝ ԽՍՀՄ-ում: «Ատենախոսություն» (диссертация) եզրույթը առաջին անգամ հանդիպում է Մ. Լոմոնոսովի աշխատություններում: Այն դիտարկվում էր որպես գիտական շարադրանք՝ անհրաժեշտ գիտական աստիճան ստանալու համար: Հրապարակային պաշտպանությունը տեղի էր ունենում տվյալ ֆակուլտետի ընդհանուր նիստի ժամանակ:

Առաջին ատենախոսությունները պաշտպանվել են Մոսկվայի համալսարանում՝ 1755 թ., և հայցորդներն էլ եղել են այդ համալսարանի դասախոսները: Ատենախոսությունները ներկայացվում էին լատիներենով, ձեռագիր կամ հրատարակված գրքի տեսքով: Ավելի ուշ՝ 1819թ. թույլատրվել է մագիստրոսական ատենախոսությունները ներկայացնել ռուսերենով: Պաշտպանությունից հետո հայցորդները ստանում էին մագիստրոսի և դոկտորի գիտական աստիճաններ: Ընդ որում, մագիստրոսները ստանում էին արծաթյա, իսկ դոկտորները՝ ոսկյա կրծքանշաններ: 1864 թ. «Գիտական աստիճանների մասին» որոշմամբ սահմանվեց, որ ատենախոսությունը պետք է ունենա առնվազն 300 տպաքանակ և պաշտպանության ներկայացվի մինչև 4 էջանոց թեզիսների հետ միաժամանակ: Վերջինը, փաստորեն, հետագայում դարձավ այսօրվա սեղմագիրը:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո, 1918 թ վերացվում են Ցարական Ռուսաստանում գործող գիտական աստիճաններն ու գիտական կոչումները և սահմանվում է միայն մեկ՝ մասնագետ-գիտնականի կոչում: Այն գործում է մինչև 1934թ., երբ ընդունվում է «Գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին» Սովնարկոմի որոշումը: Դրանով սահմանվում են գիտությունների թեկնածուի ու գիտությունների դոկտորի գիտական աստիճանները, ասիստենտի, կրտսեր գիտաշխատողի, դո-

ցենտի ու պրոֆեսորի գիտական կոչումները: 1936 թ. հունվարի 1-ի դրությամբ ԽՍՀՄ-ում արդեն կային շուրջ 3000 գիտությունների թեկնածուներ ու 1800 գիտությունների դոկտորներ, ավելի քան 3800 դոցենտներ ու 2500 պրոֆեսորներ[20]: Նույն թվականին «Բուհերի նախարարությանն» առընթեր ստեղծվում է Բարձրագույն որակավորման հանձնաժողովը (ԲՈՀ, ВАК), որը շնորհում էր գիտությունների դոկտորի գիտական աստիճանն ու պրոֆեսորի գիտական կոչումը միայն: Մինչև Հայրենական Մեծ պատերազմը գիտությունների թեկնածուի աստիճանն ու դոցենտի կոչումը շնորհում էին բուհերի գիտական խորհուրդները[21]: Պատերազմից հետո ԽՍՀՄ-ում ի հայտ եկավ հայցորդի ինստիտուտը, որ ներդրվեց որպես գիտական կադրերի պատրաստման ժամանակավոր միջոց՝ լրացնելու առաջացած բացը, սակայն այն մնում է մինչ մեր օրերը…

Անցյալ դարի 60-70-ական թթ. գիտական հանրությունը, հարմարվելով ԽՍՀՄ ԲՈՀ-ի պահանջներին, ոչ բարձր որակի ատենախոսությունների պաշտպանությունների արդյունքում սկսեց թողարկել մեծ քանակի գիտական աստիճան ունեցող կադրեր: Գործընթացի վրա ազդելու համար ԽՍՀՄ Նախարարների Խորհուրդը 1975թ. հաստատեց ԲՈՀ-ի նոր կարգը: Դրա հիման վրա միայն խոշոր գիտական հաստատություններում ձևավորվեցին ատենախոսությունների պաշտպանությունների մասնագիտական խորհուրդները: Դա հանգեցրեց նրան, որ պաշտպանած դոկտորական ատենախոսությունների քանակը կրճատվեց երկու անգամ:

---

[20] Милов Л.В. (ред.) 2006. С. 451.

[21] http://rumchten.rsl.ru/2006/docs, Кабанова Н.М., К ИСТОРИИ ДИССЕРТАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В ДОРЕВОЛЮЦИОННОЙ РОССИИ.

Առաջ եկավ ևս մեկ խնդիր. ատենախոսությունների գիտական արդյունքները գործնականում չէին կիրառվում: ԲՈՀ-ը կայացրեց «ատենախոսությունների գիտական արդյունքների ներդրման մասին» որոշումը, որից հետո այդ կառույցը հեղեղվեց «ներդրման» մասին ձևական տեղեկանքներով: Ատենախոսությունների պաշտպանությունը ավելի կարևոր էր, քան գիտական արդյունքները գիտական պարբերականներում հրատարակելը: 1980-ական թթ. գիտական աստիճան ունեցող շարքային բուհական դոցենտի աշխատավարձը 320 ռուբլի էր, որը երկրում շուրջ երկու անգամ մեծ էր միջին աշխատավարձից: Գիտությունների դոկտորների համար էլ նպատակ էր դարձել որքան հնարավոր է շատ գիտությունների թեկնածուներ պատրաստելը, որը հնարավորություն էր ընձեռելու հասնել ակադեմիկոսի կոչմանը: Ըստ էության, գիտությունը զարգանում էր ինքնուրույն՝ առանց հաշվի առնելու դրա արդյունքների կիրառելիության կարևորությունը: Գիտնականները մտածում էին գիտական աստիճանների ու կոչումների ձեռքբերման համար ԲՈՀ-ի կողմից դրված ձևական խոչընդոտների հաղթահարման ուղղությամբ և դրա համար ստանում էին աշխատավարձ:

ԽՍՀՄ փլուզումից հետո գաղափարական առումով մեզանում շատ բան չի փոխվել: Պաշտպանվող ատենախոսությունների թիվը Հայաստանում նույնն է մնացել, չնայած, որ գործող գիտնականների թիվը պակասել է շուրջ երեք անգամ: ՀՀ ԲՈՀ-ն էլ դարձել է անորակ ատենախոսությունների «շքերթը» կանգնեցնող միակ կառույցը (պաշտպանվող ատենախոսությունների շուրջ 17% չեն հաստատվում ՀՀ ԲՈՀ-ի կողմից)[22]:

Վերադառնալով գիտական աստիճանների շնորհման ժամանակակից համակարգերին, նշենք, որ դոկտորի **(PhD)** կամ դրան համարժեք գիտական աստիճան

[22] www.boh.am

շնորհվում է համալսարանների ու գիտահետազոտական կազմակերպությունների կողմից: ԱՄՆ և Կանադայի համալսարաններից շատերը (օրինակ՝ Հարվարդի համալսարանը)[23] շնորհում են գիտության դոկտորի աստիճան ըստ տարբեր ոլորտների՝ Sc.D., D.Sc., S.D., D.Lit., LL.D. կամ Dr.Sc.: Ֆրանսիայում ու Գերմանիայում շնորհվում է կոնկրետ համալսարանի դոկտորի **(docteur, doktor)** աստիճան և, ընդհանրապես, աշխարհում գոյություն ունի ավելի քան 20 անվանում, որ համարժեք է PhD-ին: 2011 թ. նոյեմբերին UNECSO-ի 36-րդ համաժողովն հաստատեց «Կրթության միջազգային ստանդարտ դասակարգումը» (ISCED) [24] , որտեղ դոկտորի (կամ դրան համարժեք) աստիճանը համարվում է ամենաբարձր՝ 8-րդ կրթական աստիճանը: Այն սովորաբար ավարտվում է գրավոր ատենախոսության պաշտպանությամբ, որը պետք է կատարված լինի ինքնուրույն և էական ներդրում ունենա գիտության կոնկրետ բնագավառում գիտելիքի ընդլայնման ուղղությամբ: Այդ պատճառով դոկտորանտուրայում կրթությանը զուգահեռ զգալի ժամանակ է տրամադրվում հետազոտական աշխատանքին: Սահմանված է, որ դոկտորանտուրայում առկա ուսանելու ժամկետը պետք է առնվազն երեք տարի լինի, իսկ ընդունվելու համար անհրաժեշտ է մագիստրոսի կամ դրան համարժեք որակավորում:

Երբ առնչվում ենք Հայաստանում վարվող գիտության զարգացման քաղաքականության և գիտական աստիճանաշնորհման համակարգի հետ, հանդիպում ենք դիրքորոշումների, թե, իբր, շուտով վերանալու է երկրորդ գիտական աստիճանը, լինելու է միայն մեկ՝ Դոկտորի (PhD) աստիճան, ինչպես Արևմուտքում է[25]: Ավելին, հա-

[23] http://www.harvard.edu/on-campus/commencement/degree-abbreviations
[24] http://www.uis.unesco.org/Education/Documents/isced-2011-en.pdf
[25] http://www.noopolis.ru/articles/1051.shtml

մոզմունք է ձևավորվում նաև, թե Բոլոնիայի համաձայնագիրն է դա պահանջում ու Հայաստանն ուզի, թե չուզի՝ պետք է գնա այդ ճանապարհով: Կարելի է նաև հակառակ տեսակետն էլ լսել, թե՝ Հայաստանն այլևս ԵՏՄ անդամ է ու մեր գիտական աստիճանաշնորհման համակարգը պետք է կրկնի, կամ շատ մոտ լինի ռուսականին: Այս մասին իրենց տեսակետներն են հայտնել ՀՀ ԿԳ նախարարը, ՀՀ ԳԱԱ նախագահը, ՀՀ ԲՈՀ նախագահը[26]:

Նշենք, որ Բոլոնիայի հռչակագիրը շատ խիստ սահմանափակումներ չի առաջադրում համաձայնագրին միացած երկրներին, թույլ է տալիս ընտրության հնարավորություն: Առավել զարգացած երկրներից, ինչպիսիք են Ֆրանսիան, Շվեդիան կամ Գերմանիան, չհեռանալով սեփական ավանդույթներից, օգտվում են այդ հնարավորությունից: Մենք, նաև ողջ հետխորհրդային տարածքի երկրները, անվերապահորեն ընդունում ենք Բոլոնիայի համաձայնագիրը՝ ոչինչ չառաջարկելով սեփական փորձից, ձևավորված ավանդույթներից: Մինչդեռ, մեր կարծիքով, գիտական աստիճանաշնորհման երկաստիճան համակարգը մեր յուրօրինակ ներդրումը կարող է լինել: Այս տեսակետը կիսում են բազմաթիվ գիտնականներ, ոլորտի պատասխանատուներ և՛ Հայաստանից, և՛ Ռուսաստանից[27]: Անիմաստ կլինի ուղղակի հրաժարվել դրանից, քանզի տրամաբանորեն մեզ համար անհատը մտնում է գիտության ասպարեզ թեկնածուականով, իսկ դոկտորականով իր ուրույն ներդրումն է ունենում գիտության մեջ: Դրանք որակապես տարբեր մակարդակներ են:

Գոյություն ունի նաև «առասպել», իբր թե այժմյան երկաստիճան համակարգը խանգարում է Արևմուտքում

---

[26] http://www.edu.am/index.php?id=-7907&topMenu=2&menu1=-1&menu2=2&arch=0

[27] Егоров В. В., Ступени научной карьеры: история и современность. Известия УрГЭУ 3-4 (47-48) 2013.

մեր վկայագրերի փոխճանաչմանը: Դա իսկապես առասպել է, որովհետև այս հարցում Արևմուտքում չկա միասնական մոտեցում: Օրինակ, իտալական կամ իսպանական դոկտորի աստիճանը մեխանիկորեն չի համարվում անգլիական PhD: ԱՄՆ մի նահանգում ստացված բժշկագիտության դոկտորի վկայագիրը կարիք ունի հաստատման՝ մեկ այլ նահանգ տեղափոխվելիս:

Միշտ չէ, որ բարձրագույն կրթության եվրոպական տարածքի (ԲԿԵՏ) երկրները նույն մոտեցումներն են ցուցաբերում դոկտորանտուրան կազմակերպելիս: Նրանց մեծ մասը հրաժարվել է ակադեմիական կրեդիտների օգտագործումից (Իսպանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան), մյուս մասը՝ կրեդիտներ է կիրառում ոչ թե հետազոտական աշխատանքի, այլ միայն կազմակերպվող դասընթացների գծով (ՄԹ, Լեհաստան, Ֆինլանդիա), որոշ երկրներում էլ (Շվեդիա, Իտալիա, Լիտվա, Հայաստան) դոկտորանտուրայում ամբողջական կրեդիտային համակարգ է ներդրված: Եթե ԲԿԵՏ երկրների հիմնական մասը դոկտորանտուրան կազմակերպում է 3 տարով, ապա Շվեդիան, Հոլանդիան, Լատվիան դոկտորանտուրան ընդունում են 4 տարով: Միասնական մոտեցում չի ցուցաբերվում նաև դոկտորանտուրայի ընդունելության ժամանակ (ընդունելության քննություններ, հարցազրույցներ, երաշխավորություններ): Անգամ որոշ երկրներում, դոկտորանտուրա հնարավոր է ընդունվել բակալավրիատից, որտեղ ուսանողը ցուցաբերել է բարձր առաջադիմություն և հասցրել է կուտակել 300 և ավելի ակադեմիական կրեդիտներ (Իսպանիա, Ռումինիա, Մոնտենեգրո): Բելգիայում այդ հնարավորությունը տրվում է միայն արտասահմանցի դիմորդներին[28]

[28] The European Higher Education Area in 2015: Implementation Report, page 66-68

ԱՄՓՈՓՈՒՄ

Բոլոնիայի գործընթացի շրջանակներում դոկտորանտուրայի զարգացման գծով սահմանվող Զալցբուրգյան սկզբունքները նպատակ չեն հետապնդում ԲԿԵՏ երկրներում միասնական և ստանդարտ համակարգով կազմակերպելու բարձրագույն մասնագիտական երրորդ մակարդակի կրթություն: Դոկտորանտուրան առավել ինքնավարություն և ակադեմիական ազատություն է պահանջում և այստեղ տեղին չէ ստանդարտացումը, սակայն միաժամանակ կարևորվում է համակարգի զարգացման նպաստավոր ուղենիշերի սահմանումը, որոնք արտացոլված են հենց Զալցբուրգյան սկզբունքներում:

Атом Мхитарян
Заместитель ВАК РА, кандидат
физико-математических наук,
mkhitaryan@yahoo.com

ЭВЕЛЮЦИЯ ПРИСВОЕНИЯ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ

Ключевые слова: аспирантура, докторантура, диссертация, Зальцбургские принципы

Зальцбургские принципы развития докторантуры в странах Болонского соглашения не имеют цели становления третьего уровня высшего профессионального образования по единому стандарту. Докторантура, традиционно требует все больших академических свобод и самоуправления, и тем самым не нуждается в стандартизации. Вместе с тем, становится необходимым представление благоприятных ориентиров развития системы, которые отражены в рамках Зальцбургских принципов.

Atom Mkhitaryan
Deputy of President SCC RA, PhD in physics

EVOLUTION OF SCIENTIFIC DEGREE AWARDING

Key words: aspirantura, doctorate, dissertation, Salzburg principles

Implementation of Salzburg principles is proposed non standardization of third level study within Bologna agreement countries. Traditionally, doctorate is in need more academic freedom's and self-governess, and therefore is not requiring standardization approaches. However, is coming urgent establishing favorable orientations study development, relevant to Salzburg principles.

Աշոտ Ավետիսյան
Հյուսիսային համալսարանի դոցենտ, տ.գ.թ.
controlchamber@gmail.com

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Հիմնաբառեր. ագրարային, ներդրումներ, պետական աջակցություն, արդյունավետություն, ներուժ, գրավչություն:

Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) Հայաստանի անդամակցության ներկա փուլում, երբ սրտեղծվել է պարենային ապրանքների արտահանման լայն հնարավորություններ, ամենահրատապ խնդիրներից է ագրարային ոլորտում ներդրումների նպաստավոր միջավայրի ձևավորումը և հատկապես արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերում ներդրումային ներուժի ավելացման պետական աջակցությունը: Ներդրումային

նպաստավոր միջավայրը դա երկրում այնպիսի քաղաքական, տնտեսական, իրավական և սոցիալական պայմանների առկայությունն է, որոնք ձեռնարկատիրության բնականոն զարգացման և ներդրումների անվտանգության ու արդյունավետ փոխհատուցման երաշխիքներ են ստեղծում:

Որպես կանոն, ներդրումային ռիսկերը մեծանում են քաղաքական անկայունության, հակամարտությունների սրման, տնտեսական ճգնաժամների, ազատ տնտեսական մրցակցության բացակայության և իրավա-օրենսդրական համակարգի անկատարության դեպքերում: Ուստի երկրի իշխանության բոլոր թևերի արդյունավետ գործունեության կարևոր գնահատականներից մեկն էլ՝ ներդրումային ներուժի լիարժեք օգտագործման և ներդրումային գրավչության բարձրացման համար նպատակամետ քաղաքականության իրականացումն է: Վերջինս պահանջում է հետևողականորեն բարձրացնել Հայաստանի միջազգային դիրքը և հնարավորինս մեղմացնել վերոհիշյալ բացասական գործոնների ազդեցությունը: Այս տեսանկյունից բավականին խնդրահարույց է հայ-ադրբեջանական ավելի քան քառորդ դար գոյություն ունեցող արցախյան հակամարտությունը, որի պատճառով Հայաստանի արտաքին հաղորդակցության ուղիների շրջափակումը և սահմանային միջադեպերի առկայությունը թուլացնում է երկրի ներդրումային գրավչությունը:

Առավել կառավարելի են տնտեսական, իրավական և սոցիալական գործոնները: Օրինակ, 2008-2010թթ. Համաշխարահային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որը ՀՀ-ի վրա բացասական ներգործություն ունեցավ հատկապես 2009-2010 թվականներին, կառավարությանը դրդեց իրականացնել հակաճգնաճամային քաղաքականություն հետևյալ սկզբունքներով.

- ֆինանսական կայունության միջոցով մակրոտնտեսական կայունության ապահովում,
- փոխարժեքի արդյունավետ քաղաքականության իրականացում,
- հասարակության և բիզնեսի հետ արդյունավետ հաղորդակցության ապահովում,
- ընդլայնող դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության իրականացում,
- ենթակառուցվածքներին ուղղված լայնածավալ ծրագրերի իրականացում,
- գործարար միջավայրի բարելավում և գործարարությանը ժամանակավոր աջակցության տրամադրում,
- սոցիալական ուղղվածություն ունեցող ծրագրերի իրականացման առաջնահերթություն:

Պետք է նշել, որ վերոհիշյալ սկզբունքներին համապատասխան իրականացված միջոցառումների, հատկապես գործարարության աջակցության և սոցիալական ուղղվածության ծրագրերի շնորհիվ, 2011թ-ից սկսած նկատելիորեն բարձրացավ տնտեսության ներդրումային ակտիվությունը (աղյուսակ 1): Ի դեպ, ճյուղային նախապատվությունների շրջանակներում կարևորվեց.« գյուղատնտեսությունում՝ պետություն-մասնավոր համագործակցության սկզբունքի ներքո նոր ներդրումային ծրագրերի իրականացումը 29 »: Բավականին արդյունավետ ընթացք ունեցան՝ «Թամարա Ֆրութ» ՓԲԸ. «Արտադրության առողջացման, վերակառուցման նպատակով վերաֆինանսավորման և շրջանառու կապիտալի համալրման գործարար ծրագիր», «Վայք գրուպ» ՓԲԸ. «Գինու արտադրության ընդլայնման գործարար ծրագիրը», «Արտա-

[29] http://www.gov.am/files/docs/1525.pdf

շատի պահածոների գործարան» ԲԲԸ. «Պահածոների արտադրության ընդլայնման և զարգացման ծրագիրը», «Գոլդեն Գոուլթ» և «Բիոկաթ» ՍՊԸ-ների պետական աջակցությամբ զարգացման ծրագրերը:

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների շարժընթացը 2005-2014թթ. (մլն. դոլար)*

Աղյուսակ 1

Տարիները	Ներդրումներ ՀՀ տնտեսությունում		Ներդրումներ գյուղատնտեսության ոլորտում	
	ընդամենը	որից՝ ուղղակի ներդրումներ	ընդամեը	որից՝ ուղղակի ներդրումներ
2005	431.2	275.3	0.06	-
2006	601.0	407.6	0.4	-
2007	845.4	582.3	-	-
2008	1257.6	1000.9	23.7	22.9
2009	935.5	732.1	7.9	6.7
2010	702.7	483.0	5.6	4.8
2011	816.3	631.4	3.7	2.8
2012	751.8	567.4	36.4	36.1
2013	597.4	271.2	8.4	7.1
2014	2017.7	840.9	15.2	11.5

* Աղյուսակը կազմվել է ՀՀ ԱՎԾ օտարերկրյա ներդրումների 2005-2014թթ. հաշվետվությունների հիման վրա

ՀՀ ԱՎԾ օտարերկրյա ներդրումների 2005-2014թթ. հաշվետվությունների տվյալների վերլուծությունից երևում է, որ 2005-2009թթ. միջին տարեկան ներդրումները կազմել է 814.4, որից ուղղակի ներդրումները՝ 599.6 մլն. դոլար, իսկ 2010-2013 թթ. միջինը՝ համապատասխանաբար 717.1 և 488.2 մլն. դոլար: 2014 թ.-ին օտարերկրյա ներդրումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման համակարգում տեղի են ունեցել մեթոդաբանական

փոփոխություններ, ինչի հետևանքով 2014 թ. վիճակագրությունը համադրելի չէ նախորդ ժամանակահատվածների վիճակագրության հետ: Համեմատվող ժամանակահատվածներում գյուղատնտեսական ճյուղում ընդամենը օտարերկրյա ներդրումները և ուղղակի օտարերկրյա ներդրումները համապատասխանաբար կազմել են՝ ընդամենը 7.5 և 13.5, իսկ ուղղակի ներդրումները՝ 5.9 և 12.7 մլն. դոլար: Ինչպես նկատվում է հատկապես գյուղատնտեսության մասով հետճգնաժամային ավելացումը շոշափելի է: Պատահական չէ, որ «ճգնաժամ» բառը չինարենում գրվում է երկու հերոգլիֆներով, որոնցից առաջինը կարդացվում է «վտանգ», իսկ երկրորդը՝ «նպաստավոր հնարավորություն»: Քանի որ ճգնաժամային իրավիճակն ավելի տեսանելի է դարձնում տնտեսության թույլ կողմերը և հնրավորություն է տալիս ցանկության դեպքում միջոցներ ձեռնարկել դրանց հաղթահարման համար: Ուրեմն այն համալիր միջոցառումները, որոնք իրականացվեցին «Հակաճգնաժամային միջոցառումների ծրագրով» որոշակի նախադրյալներ ստեղծեցին ներդրումների ավելացման համար:

Օտարերկրյա ներդրումների գրավչության առումով կարևոր նշանակություն ունի նաև երկրի ներդրումնային միջավայրին միջազգային կազմակերպությունների գնահատականը: Օրինակ, Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի Doing Business-2016 վարկանիշում Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցրել է 35-րդ տեղը, որը բավականին բարձր ցուցանիշ է: Ընդ որում այս վարկանիշը որոշելիս 10 ցուցանիշների հիման վրա գնահատվում է գործարարությամբ զբաղվելու հարմարությունը: Մասնավորապես կարևորվում է՝ ձեռնարկության գրանցման պարզեցումը, շինարարության թույլտվություն ստանալը, էլեկտրական ցան-

ցին միանալը, վարկեր ստանալը, ներդրողների իրավունքների պաշտպանվածությունը, հարկերի վճարումը, արտաքին առևտուրը, պայմանագրերի կիրառման ապահովումը, անվճարունակության (սնանկության) մասին որոշումը:

ՀՀ տնտեսության իրատեսական գնահատումը պահանջում է արձանագրել, որ միջազգային կազմակերպությունների գնահատականները երբեմն հակասական են: Օրինակ, նույն Համաշխարհային բանկը մի կողմից Հայաստանին շնորհում է բարձր վարկանիշ և մյուս կողմից արձանագրում, որ Հայաստանում ազատ ձեռնարկության և նախաձեռնության զարգացման հիմնական խոչընդոտներն են՝ կոռուպցիան, մենաշնորհները, բյուրոկրատական ամենաթողությունը և տնտեսության օլիգարխիկ կառուցվածքը: Այստեղ լուրջ խոչընդոտ է նաև Հայաստանի դատական համակարգի անկատարությունը, որը միջազգային փորձագետների գնահատմամբ դեռևս չի փայլում դատական որոշումների արդարացիության և պետական կառույցների ազդեցությունից անկախ լինելու առումով[30]:

ՀՀ ներդրումային գրավչության համար ուղենիշային նշանակություն ունի նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) Համաշխարհային մրցունակության զեկույցը, որի համաթիվը ձևավորվում է 12 չափորոշիչների գնահատման հիման վրա: Համաձայն Մրցունակության 2015-2016թթ. համաշխարհային զեկույցի, Հայաստանը 4.01 միավորով 140 երկրների շարքում զբաղեցնում է 82-րդ տեղը: Շվեյցարիան 5.76 միավորով շարունակում է մնալ առաջատարի դերում: Առաջին հնգյակի մեջ են մտնում նաև Սինգապուրը, ԱՄՆ-ը, Գեր-

[30] http://www.finport.am/full_news.php?id=23191&lang=1

մանիան և Նիդերլանդները[31]:

Աղյուսակ 2

Հայաստանի համար Մրցունակության համաշխարհային համաթվի չափորոշիչների արժեքների փոփոխությունը*

ՀԱՄ հենասյուները	2014-2015թթ. 144երկրների շարքում	2015-2016թթ. 140երկրների շարքում	Փոփոխությունը
Ինստիտուտներ	72	76	-4
Ենթակառուցվածքներ	78	82	-4
Մակրոտնտեսական միջավայր/կայունություն	77	72	5
Առողջապահություն և տարրական կրթություն	99	95	4
Բարձրագույն կրթություն և վերապատրաստում	75	72	3
Ապրանքների շուկայի արդյունավետություն	64	50	14
Աշխատուժի շուկայի արդյունավետություն	74	58	16
Ֆինանսական շուկայի զարգացվածություն	97	94	3
Տեխնոլոգիական պատրաստվածություն	71	75	-4
Շուկայի չափ	118	116	2

31 Schwab K. “The Global Competitiveness Report 2015-2016”, World Economic Forum. 2015

Գործարարության կատարելագործվածություն	93	97	-4
Նորարարություն	104	107	-3

* Աղբյուրը. Schwab K. “The Global Competitiveness Report 2015-2016”, World Economic Forum. 2015, p. 98-99.

Ինչպես երևում է 2-րդ աղյուսակի ցուցանիշներից Հայաստանը դեռևս մրցունակության մի շարք չափորոշիչներով 140 երկրների շարքում զբաղեցնում է 94-116-րդ տեղերը, որը բավականին ցածր ցուցանիշ է և բացասաբար է անդրադառնում երկրի ներդրումային գրավչության վրա: Ի դեպ, խոսքը վերաբերում է այնպիսի կարևոր չափորոշիչների, ինչպիսիք են՝ շուկայի մեծությունը, նորարարությունը, գործարարության կատարելագործվածությունը, առողջապահությունը և ֆինանսական շուկայի զարգացվածությունը: Հետաքրքիր է, որ այս միջակայքում է գտնվում նաև տարրական կրթությունը: Բանն այն է, որ ՀՏՖ-ի փորձագետները գնահատում են ոչ միայն չափորոշիչի քանակական, այլև որակական մակարդակները: Կարծում ենք, որ հատկապես որակական առումով Հայաստանի տարրական կրթության համակարգը միջազգային մակարդակին զգալիորեն զիջում է: Մինչդեռ այս այդ համակարգը անգամ միջնաժամկետ հեռանկարում երկրի մրցունակության բարձրացման կարևոր ազդակներից մեկն է, որի վրա կառուցվում են կրթության և գիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, գործարարության կատարելագործվածության և այլ համակարգեր:

Ինչպես նշվեց, երկրի մրցունակության և օտարերկրյա ուղղակի ներդրումների գրավչության վրա բացասաբար է ազդում նաև նորարարության կամ նորամուծական զարգացման համեմատաբար ցածր մակարդակը: Վերջի-

նս հատկապես վերաբերվում է գյուղատնտեսության ոլորտին, որտեղ տեխնոլոգիական մակարդակն ընդհանուր առմամբ զիջում է անգամ խորհրդային վերջին տասնամյակների տեխնոլոգիաներին: Դրա ցայտուն վկայությունը գյուղատնտեսական տեխնիկայի անբավարարությունն ու ծայրահեղ մաշվածությունն է: Իհարկե, սննդի վերամշակման կազմակերպությունների արտադրական տեխնոլոգիաները համեմատաբար արդիական են, բայց հոսքագծերի նորացման գործընթացը բավականին երկարատև է:

Ագրարային ոլորտում նորամուծական տեխնոլոգիաների զարգացմանը խոչընդոտում են գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և վերարտադրողական ներուժի սահմանափակությունը, ճյուղի ցածր եկամտաբերությունը և փոխառու միջոցների բարձր տոկոսադրույքը, գյուղատնտեսական հումք արտադրող և վերամշակող սյուբեկտների միջև փոխշահավետ գործընկերային հարաբերությունների բացակայությունը և այլն: Այս խոչընդոտների հաղթահարման լավագույն օրինակներ են գյուղացիական տնտեսությունների հետ Երևանի կոնյակի գործարանի, «Մուլտի Ագրո» ՍՊԸ-ի համագործակցությունը և արգենտինահայ գործարար Էդուարդո Էռնեկյանի ներդրումներով Արմավիրի մարզի Բաղրամյանի տարածաշրջանի՝ նախկինում անմշակ հողերի վրա իրականացվող «Տիեռաս դե Արմենիա»ՓԲԸ-ի ծրագիրը:

Սփյուռքի աջակցությամբ գյուղի և գյուղատնտեսության զարգացման կարևոր ծրագրեր են իրականացվում ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում: «Հայաստան» համահայկական հիմնադրամի Գյուղերի զարգացման ծրագրի հենքի վրա, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի և Ֆրանսիայի Օ-դը-Սեն նահանգի Գլխավոր խորհրդի նա-

խաձեռնությամբ 2011թ. հուլիսին ստեղծվեց «Հիմնա-Տավուշ» զարգացման հիմնադրամը:

ՀՀ ագրարային ոլորտում նորամուծական տեխնոլոգիաների զարգացման և ներդրումների խթանման նպատակով Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» վարկային ծրագրի՝ «Գյուղական ֆինանսավորում» բաղադրիչի շրջանակներում 2009թ. հիմնադրվեց Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամը (ՀԳՏՏԶՀ – FREDA):

ՀԳՏՏԶՀ-ն առաջին ներդրումային հիմնադրամն է Հայաստանում, որը նորարարական ֆինանսական գործիքների միջոցով ներդրումներ է կատարում ագրարային ոլորտի ձեռնարկություններում՝ միաժամանակ տրամադրելով նաև պետական աջակցություն, որն էլ հնարավորություն է ընձեռում այդ ձեռնարկություններին բարելավել իրենց մրցակցային դիրքերը և դրանով էլ խթանել գյուղական տարածքների արագ զարգացումը: Հիմնադրամի աջակցությունը տրամադրվում է այն ձեռնարկություններին, որոնք գործունեություն են իրականացնում հետևյալ ուղղություններով.

- գյուղմթերքների վերամշակում և պահածոյացում,
- կաթնամթերքի արտադրություն,
- գինեգործություն,
- ձկնաբուծություն,
- ջերմոցային տնտեսություններ
- տոհմային կենդանիների բուծում,
- սառնարանային տնտեսություններ[32]:

32«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ՀԳՏՏԶՀ) և ՀԳՏՏԶ ՀԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ» ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, էջ 9:

ՀԳՏՏԶՀ-ն կատարում է ներդրումներ սեփական կապիտալում՝ սովորական և արտոնյալ բաժնետոմսերի գնման միջոցով, տնտեսապես կենսունակ և դրական զարգացման միտում ունեցող ձեռնարկություններում: ՀԳՏՏԶՀ-ն տրամադրում է նաև ստորադաս և ապահովված փոխատվություններ: Ընդ որում, ստորադաս փոխառությունները տրամադրվում են միայն շրջանառու միջոցների համալրման համար:

Հարկ է նշել, որ ներդրումները արտոնյալ բաժնետոմսերի գնման և փոխառությունների տրամադրման միջոցով հնարավոր են միայն սովորական բաժնետոմսերում ներդրումների առկայության դեպքում [8]:

ՀԳՏՏԶՀ-ի կողմից ներդրումներն իրականացվում են որոշակի սահմանաչափով: Մասնավորապես, հիմնադրամի կողմից կատարված ներդրումը չի կարող գերազանցել ձեռնարկության սեփական կապիտալի 70%-ը և կապիտալի ու պարտավորությունների հանրագումարի 50%-ը: Սովորական բաժնետոմսերում ներդրումներն իրականացվում են կանոնադրական կապիտալի 25-45%-ի սահմաններում, ընդ որում նվազագույն ներդրումի չափը 20 մլն. դրամ է, իսկ առավելագույնը՝ 200 մլն. դրամ: Արտոնյալ բաժնետոմսերում կատարված ներդրումը չի կարող գերազանցել ձեռնարկության կանոնադրական կապիտալի 25%-ը, իսկ ներդրումների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը կազմում են համապատասխանաբար 20 մլն. և 100 մլն. դրրամ:Անհրաժեշտության դեպքում ՀԳՏՏԶՀ-ը տրամադրում է տեխնիկական աջակցություն կազմակերպություններին, նրանց կողմից նախաձեռնած տեխնիկական, տեխնոլոգիական և այլ նորամուծությունների իրականացման կամ կազմակերպությունների գործունեությանը նպաստող տարաբնույթ միջոցառումներին մասնակցության օժանդակության հարցում:

ՀԳՏՏԶՀ-ի ընդհանուր ներդրումային պորտֆելը 2015թ. դրությամբ կազմել է 1883.0 մլն. ՀՀ դրամ, որից 1375.0 մլն. դրամը ներդրվել է ընկերությունների բաժնեհավաք կապիտալում, իսկ 508.0 մլն. դրամը՝ տրամադրվել որպես ստորադաս փոխառություն:

Թեև հիմնադրամի գործունեության սկիզբը համընկավ ֆինանսատնտեսական ճգնաժամի ամենադժվարին ժամանակահատվածին, բայց ներդրումային գործունեության արդյունքնեն ակնհայտ են: Մասնավորապես, հաճախորդ ընկերությունների կողմից ֆերմերներից հումքի լրացուցիչ գնումները 2010-2013թթ. ընթացքում կազմել է 1601 մլն. դրամ, ապրանքային արտադրանքի աճը՝ 3486 մլն. դրամ, իսկ արտահանումների աճը՝ 2608 մլն. դրամ:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ ներդրումային գրավչությունը դեռևս բարձր չէ և հատկապես ագրարային ոլորտում ներդրումների խթանումը պահանջում է պետական աջակցություն և պետություն-մասնավոր հատված գործընկերային հարաբերությունների զարգացում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) Հայաստանի անդամակցության ներկա փուլում, երբ ստեղծվել է արտահանման ծավալների ավելացման լայն հնարավորություններ, ամենահրատապ խնդիրներից է ագրարային ոլորտում ներդրումների նպաստավոր միջավայրի ձևավորումը և ներդրումային գրավչության բարձրացումը: Հոդվածում դիտարկվել է Հայաստանի ներդրրումային գրավչության ներկա վիճակը, առկա խոչընդոտները և դրանց հաղթահարման հնարավորությունները: Ագրարային ոլորտի օրինակով կարևորվել է արտաքին ներդրումների խթանման պետական աջակցությունը:

Ашот Аветисян
Доцент Ереванского Северного Университета
controlchamber@gmail.com

ИНВЕСТИЦИОННАЯ ПРИВЛЕКАТЕЛЬНОСТЬ В АГРАРНОМ СЕКТОРЕ РА

Ключевые слова: аграрный, инвестиции, государственная поддержка, продуктивность, потенциал, привлекательность

На нынешнем этапе членства Армении в Евразийском Экономическом Союзе (ЕЭС), когда созданы широкие возможности для увеличения экспорта, одна из наиболее актуальных проблем является формирование благоприятного инвестиционного климата и повышение инвестиционной привлекательности в аграрном секторе. В статье рассмотрено нынешнее состояние инвестиционной привлекательности Армении, а также возможности для преодоления существующих препятствий. На примере аграрного сектора, выделена важность государственной поддержки для поощрения иностранных инвестиций.

Ashot Avetisyan
Docent of Yerevan Northern University
controlchamber@gmail.com

INVESTMENT ATTRACTIVENESS OF THE AGRARIAN SECTOR OF RA

Keywords: agrarian, investment, government support, productivity, potential, attractiveness

At the current stage of Armenia's membership to the Eurasian Economic Union (EEU), while creating wide

opportunities for the increasing export volume, one of the most urgent problems is the creation of favorable investment climate and increase of investment attractiveness in the agricultural sector. The article observes the current state of Armenia's investment attractiveness, as well as the opportumities to overcome the existing obstacles. The importance of government support for the promotion of foreign investment was highlighted, by the example of the agricultural sector.

Մարգարիտա Պողոսյան
Հյուսիսային համալսարան, տ.գ.թ.
maga.am@mail.ru

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հիմնաբառեր. մարդկային զարգացման համաթիվ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, հիվանդությունների կանխարգելում, ակտիվ կյանքի տևողություն:

Մարդկային ներուժի զարգացմանն առնչվող խնդիրները բազմիցս քննարկվել են հայ հետազոտողների կողմից (Գ. Ղարիբյան, Հ.Գալստյան, Մ.Եղիազարյան, Կ. Ավետիսյան և այլոք): Նրանց աշխատություններում, ինչպես և շատ արևմտյան տեսաբանների մոտ, մարդկային ներուժի զարգացման հիմնական բաղադրիչներ են դիտվում կրթությունը, առողջապահությունը, միգրացիան և այլն: Որպես յուրահատուկ բաղադրիչ որոշ գիտնականներ առանձնացնում են մարդու, այսպես կոչված, ներքին էներգետիկան, որը ծառայում է ոչ միայն իրենց, այլև փո-

խանցվում է շրջապատին:[33] Ներքին էներգետիկայի ապահովման արդյունավետ միջոց է Ֆիզիկական կուլտուրան, քանի որ, հայտնի է, որ ֆիզիկական կուլտուրայով պարբերաբար զբաղվելիս մարդու արյան մեջ ադրենալինի աճ է նկատվում, ինչը ապահովում է էմոցիոնալ, էներգետիկ մեծ լիցք, և նույնիսկ, կախվածություն է առաջացնում ֆիզիկական ծանրաբեռնումներից:

Խոսելով մարդկային զարգացման համաթվի, և ընդհանրապես մարդկային զարգացման հայեցակարգի մասին, պետք նկատել, որ ֆիզիկական կուլտուրան և սպորտը ակնհայտ ազդեցություն ունեն համաթվի գնահատման երեք ցուցանիշներից յուրաքանչյուրի ձևավորմանը՝ և՛ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի, և՛ կրթության մակարդակի, և՛ կյանքի սպասվելիք տևողության:

Բնակչության առողջությունը՝ որպես մարդկային զարգացման բաղադրամաս, դրա կորուստները ՀՀ-ում հանգամանալի քննարկվել է Գ.Ղարիբյանի, Մ. Եղիազարյանի, Ռ. Իսահակյանի կողմից: Նրանք մասնավորապես նշում են. «Մարդկային զարգացման համաթվում գլխավոր ցուցանիշը կյանքի տևողությունն է, սակայն միաժամանակ նկատի է առնվում, որ մարդու հնարավորությունների ու ազատությունների ընդլայնման տեսանկյունից կարևոր է ոչ միայն կյանքի տևողությունը, այլև նրա առողջ ընթացքը, քանի որ հիվանդությունները խոչընդոտում ու սահմանափակում են մարդու ինքնահաստատման ու ինքնաիրացման հնարավորությունները:

---

[33] Գ. Ա. Ղարիբյան , Կ. Ռ. Ավետիսյան, Մարդկային կապիտալի տեսության ձևավորումը և զարգացումը, 2003 «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (109), Երևան 2003թ., էջ 37-42

Այս առումով առողջական կարիքների բավարարումը հիմնարար նշանակություն ունի մարդկային զարգացման համար և առողջապահական համակարգի խնդիրը ոչ միայն հիվանդությունների բուժումը պետք է լինի, այլև, առաջին հերթին, դրանց կանխարգելումը, քանի որ հիվանդությունն ինքն արդեն իսկ հնարավորության սահմանափակում է:»[34] Հետազոտությունը բացահայտում է ՀՀ-ում բնակչության առողջապահական ծառայություններից օգտվելու խիստ սահմանափակ հնարավորությունները և դրանցից բխող հետեևանքները: Եկամուտների անբավարարությունը, ինչպես նաև, անվստահությունը բժիշկների նկատմամաբ հանգեցրել են հիվանդների ախտորոշման նպատակով բնակչության բժշկի չդիմելու *(70%)* խնդրին, ինչը ավելի հրատապ է դարձնում ֆիզիկական կուլտուրայի, որպես առողջության պահպանման միջոցի, դերի կարևորման հարցը: Սակայն, վերը նշված հետազոտություններում հիմնականում չի առանձնացվում ֆիզիկական ակտիվությունը՝ որպես բնակչության առողջությանը նպաստող գործոնի, որպես հիվանդությունների կանխարգելման և ակտիվ կյանքի երկարացման միջոցի:

Նախ, ֆիզիկական կուլտուրայի ոլորտը որպես ժողովրդական տնտեսության ենթաճյուղ, նույնպես մասնակցում է երկրում ՀՆԱ արտադրությանն ու բաշխմանը, երկրորդ, ֆիզիկական կուլտուրան կրթական համակարգի պարտադիր բաղադրիչ է, և երրորդ, ֆիզիկական կուլտուրան, առաջին հերթին բնակչության առողջության և կյանքի տևողության ապահովման գործոն է, ինչպես ուղ-

---

[34] Ղարիբյան Գ. , Եղիազարյան Մ., Իսահակյան Ռ., Բնակչության առողջությունը՝ մարդկային կապիտալի բաղադրամաս. կորուստները և կանխման հիմնախնդիրները 2014 | Հոդված ԵՊՀ Տարեգիրք 2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր.: ԵՊՀ հրատ. 2014, էջեր 180-193

ղակի իմաստով, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես բնակչությանը վնասակար սովորություններից զերծ պահելու միջոց:

Կյանքի սպասվելիք տևողության վրա ֆիզիկական կուլտուրայի ազդեցությունը քննարկվել է մի շարք գիտնականների հետազոտություններում:

Վ.Մ. Զացիորսկու աշխատությունում (1988) կան արտասահմանյան հեղինակների ընդհանրացված տվյալներ: Ըստ ամերիկյան հետազոտողների 1828-1928 թթ. ընթացքում թիավարող մարզիկների կյանքի միջին տևողությունը կազմել է 67.9 տարի, այն դեպքում, երբ նրանց համալսարանական ընկերներինը ընդամենը եղել է 61.6 տարի: Կարվոների հետազոտության մեջ վերլուծության է ենթարկվել Ֆինլյանդիայի 1845-1910թթ ծնված 396 դահուկասպորտի չեմպիոնների կյանքը, որոնք մինչև կյանքի վերջին տարիները ակտիվ մարզումներով են զբաղված եղել: Պարզվել է, որ նրանց կյանքի միջին տևողությունը կազմել է 73 տարի՝ գերազանցելով երկրում տղամարդկանց միջին տարիքը ամբողջ 4.3 տարով: Հետագայում, 45-64 տարեկան 600 տղամարդկանց շրջանում 20 տարի տևած մեկ այլ հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ակտիվ շարժողական կյանք վարողների կյանքի միջին տևողութունը 2.1 տարով գերազանցում է իրենց հասակակիցների ցուցանիշը ի հաշիվ ինֆարկտից մահացության կրճատման: Այստեղից հեղինակը գալիս է հետևության, որ շարժողական բարձր ակտիվությունը կարող է կանխել վաղաժամ մահացությունը ինֆարկտից, սակայն չի կարող մեծացնել կյանքի մաքսիմալ տևողությունը: Ամերիկյան հայտնի կարդիոլոգ պրոֆեսոր Ուայթն առաջարկում է. «Եթե մենք չենք կարող տարիներ ավելացնել մեր կյանքին, ավելացնենք կյանք մեր տարիներին»:

Հետաքրքիր տվյալներ են բերվում Դալլասի Կուպերի անվան աէրոբիկայի կենտրոնի կողմից: 10 տարվա ընթացքում հետազոտելով 10000 մարդու, բացահայտել են առավել բարձր է ֆիզիկական ցածր պատրաստվածությամբ մարդկանց մահացության մակարդակը՝ 64 դեպք 10000 մարդ/տարում, և առավել ցածր է նույն ցուցանիշը ֆիզիկական պատրաստվախության ամենաբարձր մակարդակի մարդկանց մոտ՝ 18.6 մահվան դեպք: Ֆիզիկապես պատրաստված մարդկանց շրջանում ռիսկային այլ գործոնների առկայությունը, ինչպիսիք են արյան մեջ շաքարի կամ խոլեստերինի մակարդակի ավելցուկը, հիպերտոնիան, գիրությունը, մահացության մակարդակը բարձրացնում են 1.5-2 անգամ, այն դեպքում, երբ ֆիզիկական ցածր պատրաստությամբ մարդկանց մոտ դրանց առկայությունը նույն ցուցանիշն ավելացնում է 3,4 անգամ: [35]

Պետք է նշել, որ ֆիզիկական կուլտուրան և սպորտը ոչ միայն առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման և ակտիվ կյանքի երկարացման միջոց են, այլև բազմաթիվ հիվանդությունների արդյունավետ բուժման միջոց: Շնորհիվ իր առողջարարական և վերականգնողական ֆունկցիաների ֆիզիկական կուլտուրան, առողջապահության մեջ կիրառման մեծ սպեկտր ունի՝ սկսած հենաշարժական համակարգի հիվանդություններից մինչև սրտանոթային հիվանդություններ, գեղձերի ախտահարում (շաքարախտ) և այլն:

Ընդհանրապես, ֆիզիկական կուլտուրայի (ՖԿ) և սպորտի ոլորտի առընչությունները առողջապահության համակարգի հետ կարելի է ներկայացնել հետևյալ կետերով.

---

35 http://www.km.ru/referats/EFAE7DBFA12F4C6F8183CB8E3EC50695

- ֆԿ համակարգը այլընտրանք է առողջապահության համար՝ հիվանդությունների բուժման փոխարեն դրանց կանխարգելման՝ ֆիզիկական առողջության և դիմադրողականության բարձրացման հաշվին:
- ՖԿ-ն նաև առողջապահության համակարգի բաղադրիչ է՝ լայնորեն կիրառվում է բազմաթիվ հիվանդությունների բուժման գործընթացում:
- Ֆիզիկական կուլտուրայի և առողջապահության ոլորտներն առնչվում են նաև սպորտային բժշկության հարթությունում՝ երբ բժշկությունը օգնում է հասնել սպորտային բարձր նվաճումների:

Ինչպես արդեն նշվել է, մարդկային ներուժի զարգացման հիմնախնդիրը քննարկելիս կարևորվում են դրա տարբեր բաղադրիչներ՝ կրթության, առողջության կապիտալ, մասնագիտական պատրաստվածության կապիտալ՝ որակավորում, հմտություն, արտադրական փորձ, միգրացիայի կապիտալ (Գ. Բեքեր), տնտեսապես կարևոր տեղեկատվության տիրապետում,[36] հարգանք քաղաքական և սոցիալական կայունության նկատմամբ[37] (Լ. Թուրոու), ինչպես նաև այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ակտիվությունը, պատասխանատվությունը, աշխատանքային կարգապահությունը, ազնվությունը, ընդհանուր կրթական և մշակութային մակարդակը:[38] Չնայած նրանց արտահայտած տարբեր, երբեմն իրարամերժ տեսակետներին, մարդկային ներուժի զարգացման հիմնախնդրի հետազոտողների աշխատություններում կարե-

---

[36] Becker G.S. Human Capital: a Theoretical and Empirical Analysis, N.Y. 1964, p. 16.
[37] Thurow L. Investment in Human Capital. Belmont, 1970. p. 104.
[38] Марцинкевич В. И., Соболева И.В. Экономика человека. М.,1995, с.14.

լի է համակարծություն տեսնել հատկապես կրթության հարցում: Այս համատեքստում առանձնակի կարևորություն է ստանում ֆիզիկական կուլտուրա առարկայի դասավանդումը, քանի որ հանրակրթական առարկաների բազմազանության մեջ այն միակն է, որն ուղղված է երեխայի ոչ միայն մտավոր, այլև ֆիզիկական ունակությունների զարգացմանը, առողջության ամրացմանը, սոցիալ-հոգեբանականան որակների ձևավորմանը:

Պետք է նշել, որ ֆիզիկական կուլտուրա առարկան անվերապահորեն եզակի լինելով իր բնույթով, ներառված է կրթական բոլոր մակարդակներում՝ նախադպրոցականից մինչև բուհ և նախատեսված է դասավանդել բոլոր կիսամյակներում և սեմեստրներում: Կրթական բոլոր մակարդակներում առարկայի ներգրավումը պայմանավորված է նաև նրա մեթոդաբանական նշանակությամբ՝ երեխաների մոտ ձևավորում է կամքի ուժ, նպատակասլացություն, համբերատար աշխատելու ունակություն, հավասարակշռություն, սերմանում է առողջ ապրելակերպի գաղափարը: Ֆիզիկական կուլտուրայի դասավանդումն ունի նաև գաղափարախոսական նշանակություն: Ինչպես նշում է Մարշալը. «Բնակչության ուժն ու առողջությունը արտադրողականության հիմքն են, որից կախված է նյութական հարստության ստեղծումը, երբ՝ իր հերթին նյութական հարստությունն է օգտագործվում խելամիտ, ապա նրա գլխավոր նշանակությունն այն է, որ վերջինս ավելացնում է մարդկային ցեղի ուժն ու առողջությունը՝ ֆիզիկական, մտավոր և բարոյական »:[39]

Բնական ռեսուրսներով սակավ օժտված այնպիսի երկրի համար, ինչպիսին Հայաստանն է, տնտեսության զարգացման կարևորագույն ռեսուրսը լավագույն գիտելիքների տիրապետող, կենսունակ և ստեղծագործ մարդն

[39] Маршал, Принцыпы экономической науки /М., 1993, с. 268.

է, իսկ դրան հասնելու միակ ուղին միջազգայնորեն մրցունակ կրթական ու առողջապահական համակարգերի ստեղծումն է, որոնց կարևորագույն բաղադրիչն է ֆիզիկական կուլտուրան: Մենք ավանդաբար բարձր ենք գնահատել կրթությունը և կրթվածությունը, որոշակի վերապահումներով ֆիզիկական կրթության նկատմամբ, սակայն անտարբերությունը վերջինիս նկատմամբ կարող է վտանգել ազգային անվտանգության ամենակարևոր արժեքները՝ հասարակական առողջությունն ու մարդու ակտիվ կյանքի տևողությունը, և մարտահրավերների առջև կանգնեցնել հասարակությանը՝ չվերականգնվող աշխատուժի կամ դեգրադացված, բարոյազուրկ սերնդի առկայության պատճառով: Այս արժեքների անտեսումը փոխհատուցման ենթական չէ: Իսկ երիտասարդության այսօրվա իդեալները, և այն գաղափարախոսությունը, որով նրանք դաստիարակվում են, ավելի շուտ դրա բացակայությունը, կասկածի տակ են դնում և կրթության արժեքն ու կարևորությունը, և՛ մեր ազգի անվտանգությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եկամուտների անբավարարությունը, ինչպես նաև, անվստահությունը բժիշկների նկատմամբ հանգեցրել են հիվանդների ախտորոշման նպատակով բնակչության բժշկի չդիմելու *(70%)* խնդրին, ինչը ավելի հրատապ է դարձնում ֆիզիկական կուլտուրայի, որպես առողջության պահպանման միջոցի, դերի կարևորման հարցը: Պետք է նշել, որ ֆիզիկական կուլտուրան և սպորտը ոչ միայն առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման և ակտիվ կյանքի երկարացման միջոց են, այլև բազմաթիվ հիվանդությունների արդյունավետ բուժման գործիք: Հետազոտությունում ֆիզիկական ակտիվությունը քննարկվում է որպես մարդկային ներուժի ընդլայնման և զարգացման հզոր գործոն:

М.Р.Погосян
Северный университет, к.э.н.
maga.am@mail.ru

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ФИЗИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ В РАЗВИТИИ ЧЕЛОВЕЧЕСКОГО ПОТЕНЦИАЛА

Ключевые слова: физическая культура и спорт, индекс человеческого развития, профилактика заболеваний, активная фаза жизни.

Низкий уровень доходов, а также недоверие пациентов к врачам в РА привело к тому, что население, в большинстве случаев, не обращается в здравоохранительные органы с целью диагностики (70%). Эта проблема делает еще более актуальной роль физического воспитания как средства сохранения здоровья, профилактики заболеваний и продления активной фазы жизни населения. Следует отметить, что физическая культура и спорт также являются эффективным методом в лечении многих заболеваний.

В исследовании, физическая активность рассматривается как мощный фактор расширения и развития человеческого потенциала.

M.R.Poghosyan
Northern University, P.h.D.
maga.am@mail.ru

THE ROLE AND IMPORTANCE OF THE PHYSICAL EDUCATION IN DEVELOPMENT OF HUMAN POTENTIAL

Keywords: physical culture and sports, the index of human development, disease prevention, the active phase of life.

The low income and lack of confidence of patients to doctors in Armenia has meant that the population, in most cases, does not apply to health authorities for diagnostic purposes (70%). This

issue makes the role of physical education even more significant as a means of maintaining health, preventing disease and prolonging the active phase of life. It should be noted that the physical culture and sport are also an effective method in the treatment of many diseases.
In the study, physical activity is viewed as a powerful factor in the expansion and development of human potential.

Բակուր Մարտիրոսյան
Հյուսիսային համալսարանի դասախոս, տ.գ.թ.
Economical@list.ru

ՀԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. հարկ, հարկային համակարգ, հարկման գործառույթ, հարկատեսակ:

Հարկերի միջոցով ժամանակակից պետությունները լուծում են թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ հասարակական բնույթի ամենատարբեր հարցեր և խնդիրներ: Հարկերի գործնական կիրառությունը հնարավոր է դառնում դրանց գործառույթների շնորհիվ: Հարկի գործառույթը կարելի է սահմանել՝ որպես հարկի առավել էական և կարևոր հատկությունների դրսևորման եղանակ:

Հարկերը հանդես գալով որպես ժամանակակից քաղաքակիրթ պետությունների զարգացման անհրաժեշտ պայման՝ իրականացնում են մի շարք գործառույթներ[40],

[40] Перов А.В., Толкушин А.В., Налоги и налогообложение: Учебное пособие.-5-е изд., перераб. и доп. -М.: Юрайт-Издат, 2005, С. 23-24
Налоги и налогообложение / Под. ред. Романовского М.В., Врублевской О.В.-СПБ: Питер, 2000, С. 12-18

որոնցից հատկապես կարելի է առանձնացնել հետևյալ-ները.

Ֆիսկալ գործառույթի էությունը կայանում է նրա-նում, որ հարկերի օգնությամբ ձևավորվում են պետութ-յան ֆինանսական ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են համապետական ծրագրերի իրականացման համար: Այս գործառույթն ունի գերակայող նշանակություն մյուս գոր-ծառույթների նկատմամբ, քանի որ այս գործառույթի մի-ջոցով ստեղծվում է պետության գոյատևման համար անհ-րաժեշտ նյութական բազան, որի վրա կառուցվում է ամ-բողջ պետական վերնաշենքը:

Հարկերի կարգավորող գործառույթի էությունը կայանում է նրանում, որ հարկերը պետական անհրա-ժեշտությունից ելնելով՝ ուղղորդվում են տնտեսական տարբեր երևույթների ֆինանսավորմանը՝ հանդես գալով որպես տնտեսական աճի ապահովման, տնտեսության առանձին ճյուղերի և ոլորտների վրա ներազդման, ներդը-րումների կատարման կարևոր գործիք: Հարկերի կարգա-վորող գործառույթը կարող է տնտեսական գործընթ-ացների վրա ունենալ ինչպես խթանող, այնպես էլ հա-կախթանող ազդեցություն:

Տնտեսական գործընթացների վրա հարկերի կար-գավորող գործառույթի հակախթանող ազդեցության օրի-նակ կարող է լինել առանձին հարկատուների համար

Зрелов А.П., Налоги и налогообловение: конспект лекций / А. П. Зрелов.-5-е изд., испр. и доп.- М.: Издательство Юрайт: ИД Юрайт. 2010, С. 16

Налоги и налогообловение: учеб. пособие / Е.Ю. Жидкова. – 2-е изд., перераб. и доп. – М.: Эксмо, 2009, С. 32-35

Налоги и налоговое планирование: учеб. пособие: А.Н. Акжигитова “Пензенский государственный университет”, Пенза 2008, С. 6

Налоги и налогообложение в схемах и таблицах: учеб. пособие / Е.С. Вылкова, И.А. Кацюба, Р.А. Петухова, Е.А. Фирсова; под ред. Р.А. Петуховой.-СПб.: Изд-во СПбГУЭФ, 2012, С. 8

բարձր հարկային դրույքաչափերի սահմանումը: Այսպես, օրինակ, պետությունը կարող է հարկման բարձր դրույք սահմանել ներմուծվող որևէ տեսակի ապրանքի համար՝ նպատակ հետապնդելով մրցակցային բարենպաստ պայմաններ ստեղծել տեղում այդ նույն ապրանքի արտադրության համար:

Տնտեսական գործընթացների վրա հարկերի կարգավորող գործառույթի խթանող ազդեցության օրինակ կարող է լինել պետության համար ռազմավարական նշանակություն ունեցող գյուղատնտեսության ոլորտում կիրառվող հարկային արտոնությունները:

Որպես հարկերի կարգավորման ենթագործառույթ կարելի է համարել վերարտադրական գործառույթը, որը ենթադրում է հարկերի հաշվեգրում բյուջետային դասակարգման հատուկ հաշիվներին, և այդ միջոցների օգտագործում, նախ և առաջ, բնապահպանական և ճանապարհային տնտեսության միջոցառումների իրականացման համար: Այդպիսի հարկերից են ջրային ռեսուրսների օգտագործման հարկը, անտառանյութի օգտագործման հարկը, շրջակա միջավայրի պահպանման վճարները, ճանապարհային ֆոնդին ուղղվող հարկերը և այլն:

Հարկերի բաշխման գործառույթը դրսևորվում է նրանով, որ հարկերի միջոցով համախառն ներքին արդյունքը բաշխվում և վերաբաշխվում է իրավաբանական և ֆիզիկական անձանց, տնտեսության հատվածների և ոլորտների, ամբողջությամբ վերցրած պետության և նրա առանձին տարածական միավորների միջև:

Բաշխման գործառույթի դերն ու նշանակությունն առավելապես մեծ է այն երկրներում, որտեղ պետությունն ավելի շատ դերակատարություն ունի երկրի տնտեսական և հասարակական հարցերի կարգավորման գործում:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տարբեր երկներում հարկերի բաշխման գործառույթը տարբեր չափերի է հասնում՝ կախված նրանից, թե ՀՆԱ-ի որ մասն է վերաբաշխվում հարկերի միջոցով:

Հարկերի միջոցով ՀՆԱ-ի բաշխման մասնաբաժինը կախված է նաև կոնկրետ երկրում գործող ազգային տնտեսական մոդելից: Ներկայումս որպես քաղաքակիրթ աշխարհի առաջադեմ մոդելներ՝ հայտնի են գերմանական ազգային տնտեսական մոդելը, որտեղ պետությունը չի սահմանում տնտեսական նպատակներ, այլ ստեղծում է հուսալի իրավական և սոցիալական պայմաններ՝ տնտեսական նախաձեռնության իրականացման համար [41], ճապոնական մոդելը, որը հիմնված է արտադրության կազմակերպման կոլեկտիվ սկզբունքների իրագործման վրա, անգլո-սաքսոնականը, որտեղ գործում են ազատական-շուկայական մոդելի սկզբունքները, սկանդինավյանը, որտեղ մեծ է պետության դերը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում[42]: Գերմանական մոդելի երկրներում (Շվեյցարիա, Հոլանդիա, Ավստրիա, Բելգիա) ՀՆԱ-ի մոտ 50%-ը վերաբաշխվում է պետական կառույցների կողմից, անգլո-սաքսոնականի դեպքում (Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Կանադա)՝ ավելի քան 40%-ը, իսկ սկանդինավյանի դեպքում (Դանիա, Շվեդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա)՝ 50%-ից 60%-ը[43]: Բոլոր այս մոդելներն զգալի ներդրում են ունեցել նշված երկրների տնտեսական վերելքի գործում՝ քանի որ նրանցում հաշվի են առնված պատմական,

---

[41] Ламперт Х., Социальная экономика: Германский путь, М., Дело, 1993, С. 73

[42] Нестеренко А., Социальная рыночная экономика: Концептуальные основы, исторический опыт, уроки для России, “Вопросы экономики”, № 8,1995, С. 71-84

[43] Ламперт Х., Социальная экономика: Германский путь, М., Дело, 1993, С. 77-78

ազգային-հոգեբանական, մշակութային և այլ բնույթի զարգացման առանձնահատկությունները:

Հարկերի սոցիալական գործառույթը դրսևորվում է նրանում, որ հարկային մեթոդներով պետությունը սոցիալական ապահովության և ապահովագրության աջակցություն է ցուցաբերում երկրի բնակչությանը:

Հարկերի սոցիալական գործառույթի դրսևորման օրինակ կարող է լինել ծխախոտի նկատմամբ կիրառվող ակցիզային հարկի բարձր դրույքաչափը, որը նպատակ է հետապնդում զսպել առողջության համար վնասակար ազդեցություն ունեցող ծխախոտի սպառումը:

Սոցիալական գործառույթի դրսևորման օրինակ է նաև հարկային եկամուտների հաշվին պետության կողմից սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը:

Հարկերի գործառույթները միմյանց փոխկապակցված են, և մեկը մյուսին լրացնում են: Այն դեպքում, երբ խախտվում է հարկերի գործառույթների միջև առկա հավասարակշռությունը, ցածր է լինում նաև հարկային համակարգի արդյունավետության մակարդակը:

Հայաստանի Հանրապետությունում ինքնուրույն հարկային քաղաքականություն սկսվեց իրականացվել 1992 թվականից, երբ աստիճանաբար ձևավորվեց այն օրենսդրական բազան, որն անհրաժեշտ նախադրյալ էր հանդիսանում հարկային քաղաքականության իրականացման համար: Օրենքում տեղ գտան տարբեր հարկատեսակներ, որոնցից մի մասը ժամանակի ընթացքում ցույց տվեցին իրենց անարդյունավետությունը: Այս ժամանակահատվածում օրենսդրական կարգավորում ստացան նաև հիմնական հարկատեսակները, որոնք էին՝ շահութահարկը, ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, եկամտահարկը և գույքահարկը, սակայն հարկ է նշել, որ ուժի մեջ մտած տարբեր հարկատեսակների մա-

սին օրենքները, բավականին հաճախակի ենթարկվում էին փոփոխությունների, ինչը խոսում էր դրանց անկատարության մասին: Անհրաժեշտ էր կատարել հարկային համակարգի արմատական բարեփոխումներ, ինչն էլ իրեն երկար սպասեցնել չտվեց:

Բարեփոխումների առաջին տարիներին ՀՀ հարկային օրենսդրությունն առավելապես հիմնված էր խորհրդային շրջանին բնորոշ տնտեսական հայեցակարգի վրա, այսինքն՝ վարվող հարկային քաղաքականությունը հետապնդում էր հիմնականում ֆիսկալ և կարճաժամկետ նպատակներ, և հաշվի չէին առնվում երկրի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները: Արդյունքում՝ հարկային քաղաքականությունը խոչընդոտում էր տնտեսության զարգացմանը, իսկ ստվերայնությունը և հարկային ապառքները հասնում էին մեծ ծավալների:

ՀՀ հարկային քաղաքականության ձևավորման փուլը բնորոշվում էր հետևյալ ընդհանուր գծերով. նախ՝ սաղմնավորվող հարկային համակարգը զգալի ընդհանրություններ ուներ ՌԴ հարկային համակարգի հետ, երկրորդ՝ հարկային օրենսդրության մեջ կիրառական էր հաճախակի փոփոխություններ կատարելու պրակտիկան, երրորդ՝ այս շրջանում հաճախակի խախտվում էր հարկման համընդհանրության սկզբունքը, որի պատճառներից մեկն էլ այն էր, որ հարկային արտոնությունները բավականին շատ էին և հիմնականում՝ չհիմնավորված, չորրորդ՝ հարկային օրենսդրության խախտման համար կիրառվում էին խիստ պատժամիջոցներ և բացի այդ, դրան գումարվում էր նաև այն, որ օրենքի առջև հարկատուների պաշտպանվածությունն անբավարար մակարդակի վրա էր, հինգերորդ՝ հարկային մուտքերում գերակշռում էին ուղղակի հարկերը:

ՀՀ հարկային բարեփոխումների երկրորդ փուլի սկիզբ կարելի է համարել 1997թ-ը, երբ սկսվեցին հարկային օրենսդրության փոփոխության ծավալուն գործընթացներ՝ պայմանավորված ինչպես ողջ տնտեսության, այնպես էլ հարկային վարչարարության ոլորտում առաջացած խնդիրներով: 1997-1998թթ. Ընդունվեցին «Հարկերի մասին», «Ակցիզային հարկի մասին», «Եկամտահարկի մասին», «Շահութահարկի մասին», «Գույքահարկի մասին», «Հաստատագրված վճարների մասին» նոր օրենքներ, որոնք նոր շունչ հաղորդեցին հարկային իրավահարաբերությունների կարգավորման օրենսդրական դաշտի կայացման գործին:

ՀՀ-ում հարկային համակարգի ներկա մակարդակը բավականին տարբերվում է իր ձևավորման շրջանից. այսօր արդեն հարկային համակարգ են ներմուծված այն հիմնական հարկատեսակները, որոնք գործում են նաև զարգացած շատ երկրներում, հարկային պրակտիկայում արդեն լայնորեն կիրառվում են զարգացած տեխնոլոգիաները, որպիսիք են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, ինտերներտը, գործում են հարկատուների սպասարկման ծառայությունների համար նախատեսված գրասենյակները, որտեղ հարկատուներին տրամադրվում է տեղեկատվություն, աջակցություն է ցուցաբերվում էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման գործում և այլն:

Չնայած բոլոր այս ձեռքբերումներին, սակայն, այսօր էլ ՀՀ հարկային համակարգում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը կարևոր նշանակություն ունի երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, տնտեսական անվտանգության ապահովման առումով:

ՀՀ հարկային համակարգի դիտարկումը ցույց է տալիս, որ այստեղ հարկային քաղաքականության մեջ

հիմնական հարկատեսակների առումով գերակշռում է ֆիսկալ գործառույթը: Սրա մասին են վկայում նաև ՀՀ հարկային պրակտիկայում այնպիսի հարկատեսակների հաճախակի կիրառումը, որպիսիք են հաստատագրված վճարները, շրջանառության հարկը, պարզեցված հարկը: Նման հարկատեսակները թեև ունեն հաշվարկման պարզություն և վերահսկման ավելի մեծ հուսալիություն, սակայն դրանցում չեն պահպանվում այնպիսի կարևոր սկզբունքներ, որպիսիք են ըստ ստացված օգուտների հարկման սկզբունքը, արդարության սկզբունը և այլն:

Մինչ դեռ զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ հարկատուների օրինապահության մակարդակը բարձր է հատկապես այն երկրներում, որտեղ հարկային համակարգի մյուս գործառույթները ևս ունեն առաջնակարգ դեր: Այսինքն՝ այն երկրներում, որտեղ հարկային համակարգում գերակշռում են հարկման մյուս՝ խթանիչ, կարգավորիչ, սոցիալական և այլ գործառույթները, հարկատուների մոտ ձևավորվում է այն գիտակցությունը, որ հարկերն այն վճարն են կամ գինը, որն իրենց համար ապահովում է պետական աջակցության երաշխիքներ:

Իսկ դա, իր հերթին, բարձրացնում է հարկատուների օրինապահության աստիճանը, պայմաններ է ստեղծում տնտեսության ստվերայնության կրճատման և անհրաժեշտ միջոցներով պետական եկամուտների համալրման համար և, առհասարակ, նպաստում է հարկային համակարգի արդյունավետության բարձրացմանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժամանակակից քաղաքակիրթ պետություններում արդյունավետ հարկային քաղաքականության մշակման ժամանակ մեծ դեր ունի հարկման գործառույթների ճանաչումը և դրանց գործունակության գնահատումը: Զար-

զացած երկրների փորձը ցույց է տալիս, որ հարկատուների օրինապահության մակարդակը բարձր է հատկապես այն երկրներում, որտեղ հարկային համակարգի բոլոր գործառույթներն ունեն առաջնակարգ դեր և հանդես են գալիս հավասարակշռված ձևով:

ՀՀ հարկային համակարգի գնահատումը ցույց է տալիս, որ այստեղ հարկային քաղաքականության մեջ հիմնական հարկատեսակների առումով շարունակում է գերակշռել ֆիսկալ գործառույթը, իսկ մյուս գործառույթներն ունեն ավելի թույլ արտահայտվածություն, ինչը խոսում է հարկային համակարգի անարդյունավետության մասին:

Bakur Martirosyan
Northern University, PHD
Economical@list.ru

FUNCTIONS OF TAXATION AND EVALUATION OF THEIR FUNCTIONALITY IN RA

Keywords: tax, tax system, tax function, types of taxes.

The recognition of taxable operations and evaluation of their effectiveness has a great role in the development of effective tax policy in modern civilized countries. The experience of developed countries shows that the level of compliance of taxpayers is especially high in countries where all tax functions have a significant role and act in a balanced way.

The assessment of tax system of RA shows that here in tax policy continues to prevail in the fiscal function, and other functions are weaker manifestations, which speaks of the inefficiency of the tax system.

Бакур Мартиросян
Северный университет, к.э.н
Economical@list.ru

ФУНКЦИИ НАЛОГООБЛОЖЕНИЯ И ОЦЕНКА ИХ ФУНКЦИОНИРОВАНИЯ В РА

Ключевые слова: налог, налоговая система, налоговая функция, виды налогов

Понимание налоговых функций и оценка их эффективности играет большую роль в развитии эффективной налоговой политики в современных цивилизованных странах. Опыт развитых стран показывает, что уровень законопослушания налогоплательщиков особенно высока в тех странах, где все налоговые функции имеют значительную роль и действуют в сбалансированной форме.

Оценка налоговой системы РА показывает, что здесь, в налоговой политике продолжает преобладать фискальная функция, а другие функции выражены более слабо, что говорит о неэффективности налоговой системы.

Карапетян Ромик
к.э.н., доцент, ЕСУ
rkarapetyanmail.ru

ГОСУДАРСТВЕННОЕ ПРАВЛЕНИЕ И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ РАЗВИТИЕ СТРАНЫ

Ключевые слова: экономическое управление, макроэкономические поаказатели, формы правления

В современной литературе проблема форм государства нашла достойное отражение. Это понятно, так как на постсоветском пространстве возникла острая необходимость по переустройству, а порой, фактически, созданию государственности. Выбор той или иной

формы правления, территориального устройства, четкого определения политического режима потребовал концептуального подхода с учетом прошлого, настоящего, национального, религиозного и т.д.. Об этом свидетельствуют исследования Чиркина В.Е., Рябова С.В., Макова Г.И., Омеляченко О.Я. и многих других.

Таким образом становится понятно, что избранная тема является актуальной и разработанность ее в большей или меньшой степени наличествует. Несмотря на это, на наш взгляд, требуют более тщательного рассмотрения проблемы, возникающие на современном этапе, в частности взаимосвязь формы правления с уровнем экономического развития государства, форм устройства многонациональных государств. Требуется выявление новых тенденций развития форм политического режима, особенно для стран переходного периода, трансформации тоталитарных и авторитарных режимов в демократические с учетом взаимосвязи между политическим и экономическим развитием страны.

Исходя из этого и ставится задача раскрыть проблему взаимосвязи между формой государственного правления, типом политического режима и уровнем социально-экономического развития страны, обратив при этом внимание на тенденции трансформации тоталитарных и авторитарных режимов в демократические.[44]

Исследование формы государств происходило с древнейших времен, начиная с античности. Государственно-правовая наука держала в центре два вопроса:

---

[44] Российский экономический журнал. 1993г. N 5.

1. какие формы государств знает история и современность
2. какая из известных государственных форм наилучшим образом подходит для данного народа в данное время.

Древние греки не случайно подчеркивали значение формы. Платон, например, отводил форме определенную активную роль. Сама идея государства неотделима от ее формы, на что указывает этимология термина (форма, эйдос, идея, морфэ). Форма у Аристотеля также ползуется приоритетом перед содержанием. Forma dat esse rei (форма дает бытие вещи), считали римские юристы.

История породило множество государственных форм, но нельзя претендовать на составление их исчерпывающего перечня. Такая попытка невозможна, так как исторический ход развития со всеми его объективными закономерностями, порой и случайностями, породил множество конкретных государств, которые имеют такие особенности своих форм, которые до сих пор являются объектом исторических исследований. Следует отметить, что существующие в современном мире государства находятся в таком динамическом состоянии (в силу самых различных причин они изменяются в своих формах), что наука едва успевает отражать главные моменты революции и эволюции государственных форм. Следовательно, в будущем развитие политической жизни может породить такие новые формы, о которых ныне можно судить лишь сугубо предположительно, в порядке теоретического предвидения.

Актуализация темы обусловлена тем, что выявления проблемы взаимосвязи формы правления и полити-

ческого решения с уровнем социально-экономического развития страны показывает как организована власть, что является основной в порядке образования государственных органов, какими методами при этом происходит осуществление государственной власти, что приводит к эффективности государственного руководства, управления, стабильности власти, законности и правопорядке в стране. История общественного развития высветила ряд общих направлений взаимосвязи между формой правления и уровнем экономического страны. История и практика доказали, что республиканская форма правления с хорошо развитым демократическим политическим решением обеспечивает благоприятные условия для экономического развития, для подъема уровня благосостояния народа. Становится понятным, что совсем не случайно наиболее развитые экономические современные государства – это республиканские демократические страны.

Можно считать, что когда происходит смена форм правления, то значительно снижаются темпы экономического развития государств в эти периоды. Об этом свидетельствуют все те процессы, которые почти в одинаковой степени, проходят во всех без исключения бывших иные формы правления.

Выбор той или иной формы правления во многом зависит и от специфики исторических, национальных, экономических, политических, социальных и даже природных условий.

Это разнообразие создает и такие ситуации, которые невозможно объяснить закономерностями. Известны в мире несколько государств с достаточно высоким уровнем жизни населения, преуспевающей экономикой, которые по форме являются абсолютными монархиями. Многие это объясняют природными условиями, т.к. эти

страны являются нефтедобывающими. Но в то же время такая страна как Гонконг, которая не имеет никаких полезных ископаемых и практически пригодных для обработки земель, создала условия для экономического процветания более пяти миллионам гражданам.

Историческая действительность показала, что республиканская форма правления, а также парламентская монархия типа Великобритании с демократическим политическим режимом, создают наиболее благоприятную основу для экономического прогресса, для решения многих проблем, естественно, в известных границах. В то же время практика свидетельствует, что многое зависит от конкретных властвующих структур. Существующий механизм, хотя и создает благоприятные условия, но многое зависит от способности власти четко оценить экономическую ситуацию, выработать программу конкретных мер, обеспечить ее выполнение. В качестве примера может служить Южная Корея, которая смогла выйти на новый, достаточно высокий уровень экономического развития.[45]

Другим подходам к решению вопроса о соотношении формы правления с уровнем экономического развития является современный Китай. Не меняя формы государства, не осуществляя перемен политического характера, а провозгласив либерализацию экономики и осуществив переход к рынку, основываясь на тезисе, что бедная экономика – плохая основа демократии, Китай обеспечил значительный экономический подъем. Реформы в Китае осуществлялись на той основе, что

---

[45] К. Фридрихс и З. Бжезинский. Тотальная диктатура и демократия. М., 1993, с.64-67.

надо сначала создать богатую экономику, а на ее основе уже думать о создании среднего класса, о развитии политических прав и свобод граждан, политической демократизации общества.

И теоретически, и практически, развитые демократические страны, прогрессивные республиканские формы правления имеют несомненные преимущества по развитию экономики и повышению благосостояния граждан. При этом, эти преимущества используются разнообразно в зависимости от того, кто находится у власти.

В то же время на современном этапе происходит сближение многих позиций различных сил. Так, например, социал-демократы признали необходимость свободного рынка, а либералы, консерваторы признали необходимость регулирования экономических процессов. И все это строится на признании всех форм свободы, которые создавались государственными формами правления.

Таким образом, становится очевидным, что исторический опыт развития различных форм правления создает на современном этапе различные проблемы, в частности зависимость форм государственного правления от уровня экономического развития государств.

Не менее важным представляется выяснение порядка и условий формирования государственной власти, т.е. выявление политических государственных режимов. Существуют такие проблемы, развитие которых протерпело существенные изменения. Это касается вопроса о перерастании тоталитарных авторитарных режимов в демократические. Как известно, в 70-х годах К. Фридрихс и З.Бжезинский сделали вывод , что тоталитарный режим не способен меняться, что его можно уничтожить лишь извне. Они доказывали, что все то-

талитарные государства обречены на гибель. Например, погиб тоталитарный режим в Германии, развязав вторую мировую войну. Однако жизнь показала ошибочность такой точки зрения. Тоталитарные режимы способны эволюционировать. Так произошло после 1953 г. В бывшем СССР, когда политический режим стал эволюционировать от тоталитаризма к авторитаризму. На основе имеющейся литературы можно сказать, что переход к демократии, как показывает опыт, наиболее вероятен в условиях мирных перемен и происходит в трех формах.

Первая форма – реформа сверху. Так случается, когда власти решают по своей воле воплотить программу демократических перемен. Например, в Бразилии группа генералов, захвативших в 1964 г. Власть, спустя некоторое время пошла на создание гражданского демократического правительства. Также было и в Чили. Однако следует отметить, что реформы сверху – нечастое явление.

Вторая форма - трансформации тоталитарных и авторитарных режимов связаны со стремительным их крушением и отказом от существующих режимов в пользу демократии. В 1982 г. Аргентинские генералы захватили Мальвинские острова. Известно, что через короткое время английские ВВС полностью разгромили аргентинские силы. Это настолько дискредитировало аргентинских генералов, что они вынуждены были уйти в отставку и передать власть гражданскому правительству.

Можно привести и другого рода примеры отказа от существующих тоталитарных и авторитарных режимов в пользу демократии. Так было с реформами, начатыми в СССР, Чехословакии, ГДР и др. Государствах Восточной Европы.

Третья форма – постепенное проведение реформ, основанное на согласии сил, стоящих у власти, и оппозиции. Примером может послужить трансформация политического режима в Испании после смерти Франко. Здесь совместные усилия правительства и короля Хуана Карлоса положили начало длительному пути прогрессивных преобразований в стране.

Переход от тоталитарных и авторитарных режимов к демократии связан с большими трудностями, прежде всего экономическими. Переход к демократическому режиму существенно облегчается в случаях, когда экономика находится в хорошем состоянии, и затрудняется в условиях ее кризиса. Состояние экономики – это первая проблема, с которой сталкиваются страны при переходе к демократии.

Другой проблемой является радикализация оппозиции, что существенно дестабилизирует экономическую и политическую обстановку. Современная Россия в этом смысле дает показательный пример. Пока не было демократии. Оппозиция ставила цели, которые достигались сравнительно легко: право свабодно выражать свае мнение, освобождение политзаключенных, право свободного передвижения, - однако с развитием процесса демократизации радикальная оппозиция выдвигает все более трудно решаемые и дестабилизирующие ситуацию требования, вплоть до отставки правительства и президента. Пока ситуация чревата прекращением демократических преобразований и возвратом к авторитаризму.

Проблемы демократизации существенно усложняются в связи с многонациональным характером многих государств. В частности, движениями за установление суверенных национальных единец. И вновь

примеры такогорода мы найдем в России, например вопрос Чечни.

Большая опастность для демократизации состоит в том, что в каждом государстве есть люди (и немало), которые, находясь в оппозиции к прошлему (тоталитарному) режиму, вместе с тем не являются сторонниками демократии. Их идеал – авторитаризм. Таким образом, процесс перехода тоталитарного и авторитарного режимов к демократии сложный, но возможный.

Становится очевидным, что различные режимы обуславливают разные типы организации власти и прежде всего функционирование экономической сферы. Так, например, тоталитарному режиму в бывшем СССР соответствовала планируемая из центра экономическая, что само собой предполагало отсуствие частной собственности, т.е. наличие общественной собственности в двух ее формах – государственной и колхозно-кооперативной. Тоталитарный режим в Германии не упразднил частную собственность.

Авторитарный режим предпологает свободу рыночных отношений, однако ее ограниченность очевидна, поскольку данный тип политического режима обычно установливается в государствах, находящихся в государствах, находящихся в нестабильной политической и экономической ситуации. Соотвественно, слабой также является законодательная база экономических процессов, нередко отсуствуют гарантии от разного рода рисков.

Демократические политические режимы обеспечивают свободную рыночную экономику при достаточно хорошо разработанных формах государственного вмешательства в систему ее функционирования.

Очевидно, что разные политические режимы дают разные результаты в экономическом развитии госу-

дарств. Зависимость между типом политического режима и уровнем экономического развития, несомненно, существует. Заметим при этом, что говорить можно лишь о тенденции, а не о зависимости, имеющей универсальный характер. Известно, например, что немало стран с выдающимися экономическими показателями сохранили стойкую авторитарную политическую систему.

В качестве показателей обычно используются темпы экономического роста страны и уровень среднегодового совокупного общественного продукта на душу населения в сопоставлении с политическим режимом. В соотвествии с данными, приведенными в литературе, из 32 стран с низким уровнем экономического развития 75% имели авторитарный режим, а 25% полудемократический. Стран с демократическим политическим режимом в этой группе не было. В то же время 19 индустриальных стран с развитой рыночной экономикой имеют демократический режим.[46]

Таким образом, демократический политический режим благоприятно воздействует на экономическое развитие, темпы экономического роста и уровень доходов населения.

В связи с проблемой взаимосвязи уровня экономического развития государств и политического режима следует рассмотреть еще один важный вопрос. Как показывают исследования западных специалистов, переход стран к демократическому режиму, его темпы и масштабы во многом зависят от уровня экономической системы государства.

---

[46] Международный журнал социальных наук. 1993г. N 5. с.6. Исследование темпов экономического роста в ряде стран. Государство и право 2001. N 7

При этом прослеживаются определенные закономерности:

1. Для перехода к демократическому политическому режиму наиболее благоприятна децентрализованная экономика с ограниченным государственным контролем. И соответственно наименее благоприятные условия складываются при жесткой системе государственного управления экономикой.

2. Большое значение имеет базовый уровень экономического развития.

Чем он выше, тем легче страна встает на путь экономических перемен.

Вышеизложенное позволяет утверждать, что проблемы взаимосвязи между формой государственного правления, типом политического режима и уровнем социально экономического развития страны имеет не только важное теоретическое, но и практическое значение особенно для новых суверенных государств, в том числе для России и Армении. Простое декларирование более прогрессивной формы правления не создает благоприятных условий для решения проблем социально-экономического характера, а требует такой организации власти, особенно в социальной и экономической сферах, что позволила бы разрешить наболевшие проблемы. Движение в этой области есть – это и более содержательные реформы в России и те изменения, которые были внесены в Конституцию Республики Армения, что позволит, на наш взгляд, создать мощное законодательство в названных сферах и разрешить многие задачи.

Կարապետյան Ռոմիկ
Հյուսիսային համալսարան, տ.գ.թ., դոցենտ
rkarapetyanmail.ru

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հիմնաբառեր. տնտեսության կառավարում, մակրոտնտեսական ցուցանիշներ, կառավարման ձևեր:

Պետության կառավարման ձևերի հետազոտությունները կատարվել են հնագույն ժամանակներից սկսած: Հիմնականում քննարկման առարկա է հանդիսացել պետության կառավարման ձևերից լավագույնի ընտրությունը: Հոդվածում վերլուծվում են անցումային շրջանում կառավարման ձևերի փոխադարձ կապը պետության սոցիալ-տնտեսական մակարդակի հետ, երբ պահանջվում են զարգացման նոր ձևեր, տոտալիտար և ավտորիտար ռեժիմների տրանսֆորմացիա՝ ժողովրդավարական ձևերի:

Հաշվի առնելով երկրի քաղաքական և տնտեսական զարգացման միջև գոյություն ունեցող փոխադարձ կապը, խնդիր է դրվում բացահայտել պետության կառավարման ձևի, քաղաքական ռեժիմի և երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միջև փոխադարձ կապի հիմնախնդիրը:

Լուիզա Հունանյան
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հայցորդ
hunanyan-85

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. ծրագրեր, բյուջետային, արդյունավետություն, ծախսեր, գին, բնական աղետներ:

Ագրարային ոլորտի, մասնավորապես՝ գյուղատնտեսության բյուջետային ծրագրերի տնտեսական արդյունավետության գնահատումն առանձնահատուկ նշանակություն ունի պետության ագրարային քաղաքականության արդյունավետության կանխորոշման համար: ՀՀ պայմաններում այս խնդիրը բավարար լուծում չի ստացել, քանի որ Ազգային վիճակագրական ծառայությունը գյուղատնտեսության ապրանքային արտադրանքի, արտադրական ծախսերի և եկամտի տվյալներ չի հրապարակում[47]: Միակ ելքը հարցումների կամ ընտրանքային հետազոտությունների միջոցով անհրաժեշտ ելակետային ցուցանիշների բազայի ստեղծումն է: Բայց այդ տվյալների հիման վրա բյուջետային ծրագրերի տնտեսական արդյունավետության ամբողջական գնահատում դժվար է իրականացնել: Ուստի սույն հոդվածում ներկայացվում է ագրարային ոլորտի բյուջետային ծրագրերի տնտեսական արդյունավետության գնահատման առավել կիրառական մեթոդաբանություն: Խոսքը վերաբերում է ներքոհիշյալ

[47] http://waw.sworld.com.ua/konfer31/189.pdf

բանաձևով պետական աջակցության ֆինանսական արդյունքի (ՖԱ) հաշվարկմանը.

$$ՖԱ = \frac{ՀԱ \cdot ԸՊԱ}{ԾՀԱ}, \text{ կամ } ՖԱ = \frac{ԱպԱ \cdot ԸՊԱ}{ԾԱպԱ} \quad (1)$$

որտեղ՝

ՖԱ- պետական աջակցության ֆինանսական արդյունքն է,

ՀԱ - գյուղատնտեսության համախառն արտադրանքն է,

ԱպԱ- գյուղատնտեսության ապրանքային արտադրանքն է,

ԸՊԱ-ընդամենը պետական աջակցության գումարն է,

ԾՀԱ-համախառն արտադրանքի վրա կատարված ծախսերն է,

ԾԱպԱ-ապրանքային արտադրանքի վրա կատարված ծախսերն է:

Այս հաշվարկի հիմքում այն մոտեցումն է, որ արտադրության մեջ առանց տարբերակման օգտագործվում է արտադրողի սեփական և բյուջետային ներդրումները: Ոստի բյուջետային աջակցության տնտեսական արդյունքը (**ԲԱ**) կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$ԲԱ = ՖԱ/ԸՊԱ \quad (2)$$

Ինչպես նշվեց ՀՀ ԱՎԾ-ի կողմից վերոհիշյալ ելակետային տվյալների հավաքագրում և հրապարակում չի կատարվում, սակայն զուտ փորձագիտական և պայմանական մոտեցումներով կատարվել է գյուղատնտեսության բյուջետային ծրագրերի տնտեսական արդյունավետության գնահատման հաշվարկ (աղյուսակ 1):

Հաշվարկային տվյալները վկայում են, որ բյուջետային աջակցության տնտեսական արդյունքն ըստ համախառն արտադրանքի դիտարկվող ժամանակահատվածում ունեցել է աճի միտում, իսկ ըստ ապրանքային արտադրանքի որոշակի աճ է գրանցվել 2012թ.-ին, 2013թ.

առկա է փոքր նվազում, իսկ հետագա տարիներին շատ փոքր աճ է արձանագրվել:

Բացի գյուղատնտեսության ոլորտին բնորոշ բյուջետային ծրագրերից, որոնք ավանդաբար իրականացվում են հետխորհրդային գրեթե բոլոր երկրներում, անհրաժեշտություն է առաջանում արտակարգ ծրագրեր իրականացնել նաև բնական աղետների հետևանքով պատճառված վնասների, եթե ոչ փոխհատուցման, ապա կորուստների մասնակի վերականգման նպատակով: Գործնականում այդպիսի իրավիճակներում լուրջ դժվարություններ ու դժգոհություններ է առաջանում բնական աղետների պատճառած վնասի գնահատման ընդունելի մեթոդաբանության բացակայության պատճառով: Այս հիմնախնդիրը բազմիցս բարձրացվում է մարզային իշխանությունների կողմից, սակայն համապատասխան լուծում չի ստանում: Մինչդեռ, գյուղատնտեսության ոլորտին բնական աղետներից պատճառված վնասների հետևանքների մեղմմանն ուղղված բյուջետային ծրագրերի արդյունավետության ապահովման համար չափազանց կարևորվում է այդ աղետներից պատճառված տնտեսական վնասի առավել ճշգրիտ գնահատումը:

Վերջինիս իրականացման համար անհրաժեշտ է վնասի գնահատման հիմնավորված և միասնական մեթոդական մոտեցման կիրառում: Խնդրի կարևորություններից ելնելով, առաջարկում ենք բնական աղետներից գյուղատնտեսությանը պատճառած տնտեսական վնասի գնահատման մեթոդական մոտեցումներ:

Աղյուսակ 1

Գյուղատնտեսության բյուջետային ծրագրերի տնտեսական արդյունավետության գնահատման հաշվարկային տվյալներ (մլրդ դրամ)

	Ցուցանիշները	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.
1	2	3	4	5	6	7
1.	Գյուղատնտեսության համախառն արտադրանքը[48]	795.0	841.5	919.1	993.5	1002.2
2.	Գյուղատնտեսության ապրանքային արտադրանքը[49]	445.2	472.1	518.3	558.3	565.2
3.	Գյուղատնտեսության բյուջետային հատկացումները	42.4	21.9	21.9	23.8	29.1
4.	Համախառն արտադրանքի ծախսերը[50]	596.2	614.0	643.3	685.5	681.5
5.	Ապրանքային արտադրանքի ծախսերը[51]	378.4	387.1	419.8	446.6	446.5

[48] Հայաստանի վիճակագրական տարեգիրք: ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015թ., էջ 290: ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ, Երևան 2016թ., էջ 18

[49] Գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից 2014թ.: ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015թ., էջ 2: Ապրանքայնության միջին կշռված մակարդակը 2011թ. 56.0%,2012թ. 56.1%, 2013թ. 56.4%, 2014թ. 56.2%

[50] Ծախսերը հաշվարկվել է համախառն արտադրանքի արժեքի 2011թ. 75.0%,2012թ. 72.0%, 2013թ. 70.0%, 2014թ. 69 %, 2015թ. 68 %

[51] Ծախսերը հաշվարկվել է ապրանքային արտադրանքի արժեքի 2011թ. 85.0%,2012թ. 82.0%, 2013թ. 81.0%, 2014թ. 80 %, 2015թ. 79 %

6.	Պետական աջակցության ֆինանսական արդյունքը (ըստ համախառն արտադրանքի)	56.5	30.0	31.3	34.5	42.8
7.	Պետական աջակցության ֆինանսական արդյունքը (ըստ ապրանքային արտադրանքի)	49.9	27.0	27.0	29.8	36.8
8.	Բյուջետային աջակցության տնտեսական արդյունքը 1 մլրդ դրամի հաշվով (ըստ համախառն արտադրանքի)	1.33	1.37	1.43	1.45	1.47
9.	Բյուջետային աջակցության տնտեսական արդյունքը 1 մլրդ դրամի հաշվով (ըստ ապրան-քային արտադ-րանքի)	1.17	1.24	1.23	1.25	1.26

Այդ նպատակով նախ դասակարգվել է ըստ գյու-ղատնտեսության ճյուղերի վնասի աղբյուրները: Հայտնի է, որ դրանք կարող են լինել բնական և տեխնածին, իսկ ըստ հիմնական ճյուղերի վնասները հետևյալն են.

Բուսաբուծությունում՝ ցրտահարություն (ձմռան ամիսներին, վաղ գարնանային), կարկտահարություն, երաշտ, ջրհեղեղ, կայծակ, ուժեղ քամիներ (պտտահողմ),

սողանք, անբավարար ջրապահովվածություն, բույսերի կարանտին վնասատուների և հիվանդությունների բռնը-կումներ, հրդեհ և այլն:

Անասնաբուծություն՝ հիվանդությունների բռընկումներ (տավարի՝ սիբիրախտ, ժանտախտ, բրուցելյոզ, մանր եղջերավար կենդանիների՝ սիբիրախտ, բրուցելյոզ, խոզերի՝ աֆրիկական ժանտախտ, էնզոտիկ էնցեֆալոմիելիտ, ձիերի՝ աֆրիկական ժանտախտի, թռչունների գրիպ), թունավորումներ, ջրհեղեղ, կարկտահարություն, ուժեղ քամիներ (պտտահողմ), կայծակ, վայր ընկնելու, գլորվելու պատճառով անասնագլխաքանակի անդամների վնասվածք և անասնագլխաքանակի կորուստ, գազանների հոշոտում և այլն:

Ներկայացնենք գյուղատնտեսության ճյուղերում վնասի գնահատման հիմնական մոտեցումները: Գյուղատնտեսության ոլորտի առանձնահատկություններից, ենթաճյուղերի բազմազանությունից ելնելով՝ վնասը հնարավոր է գնահատել յուրաքանչյուր կոնկրետ դեպքի ուսումնասիրության հիման վրա (ըստ առանձին տընտեսավարողների), որին պետք է իրենց մասնակցությունն ունենան տարբեր մասնագետներ, տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների և այլ ներկայացուցիչներ:

Ինչպես բուսաբուծությունում, այնպես էլ անասնապահությունում վնասի գնահատման համար անհրաժեշտ է ձևավորել մասնագիտական (մարզային) հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողով), որում պետք է ընդգրկվեն ՀՀ արտակարգ իրավիճակների, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների, մարզպետարանների, գյուղատնտեսության հետ առնչվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, տեղական ինք-

նակառավարման մարմինների ղեկավարներ և այլ մասնագետներ: Հանձնաժողովները նպատակահարմար է ձևավորել ՀՀ վարչապետի որոշումով:

Բուսաբուծությունում հանձնաժողովի կողմից վնասի չափը պետք է գնահատվի ըստ առանձին մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տեսակների համար:

Դաշտային մշակաբույսերի համար գնահատվելու է սպասվող բերքի կորստի չափը (%), տվյալ տարում վերականգնման հնարավորությունները և վերականգնման համար պահանջվող լրացուցիչ ծախսերը:

Բազմամյա տնկարկների համար գնահատվում է ինչպես տվյալ տարվա բերքի կորուստի չափը (%), տվյալ տարում վերականգնման հնարավորությունները և վերականգնման համար պահանջվող լրացուցիչ ծախսերը, այնպես էլ տվյալ վնասի հետևանքով հետագա տարիներին բերքի հնարավոր կորուստները, ըստ տարիների մինչև բերքատվության վերականգնվելը կամ բազմամյա տնկարկի ամբողջական վնասման դեպքում, համապատասխան նոր այգիների հիմնման, մինչև բերքատվության մեջ մտնելը խնամքի ծախսերը՝ դրան հավելելով այդ տարիներին միջին բերքից ստացվող շահույթի չափը:

Անասնաբուծությունում հանձնաժողովի կողմից վնասի չափը պետք է գնահատվի հաշվի առնելով կենդանու սեռահասակային խումբը, հասակը, կենդանի զանգվածը, դրանցից ստացվող մսի ելունքը: Անհրաժեշտ է հաշվի առնել գյուղատնտեսական կենդանու տոհմային լինելու հանգամանքը:

Անասնագլխաքանակի անկման դեպքում վնասը հաշվարկվում է տվյալ անասնատեսակի, սեռահասակային խմբի համար շուկայում ձևավորված գնի մակարդակից ելնելով:

Անասունների մթերատվության կորստի դեպքում հանձնաժողովի կողմից գնահատվում է ըստ առանձին անասնապահական մթերքների կորստի չափը տվյալ տարվա համար (%):

Մթերքի կորստից առաջացած վնասը գնահատվում է տվյալ տարում կոնկրետ մթերքի համար շուկայում ձևավորված գնից ելնելով:

Բուսաբուծության ճյուղում վնասի գնահատման համար մեր կողմից առաջարկվում է կիրառել հետևյալ բանաձևերը:

Դաշտային մշակաբույսերի համար.

$$Վ_{դ1} = Ց \cdot Բ_{միջ} \cdot Գ_{վ} \cdot ԳՆ \qquad (3)$$

որտեղ՝

$Վ_{դ_1}$ -ն՝ վնասի չափն է այն դեպքում, երբ վնասվում են մշակաբույսերը և վերականգնումը տվյալ տարվա համար հնարավոր չէ, դրամ,

Ց -ն՝ վնասված ցանքատարածությունն է, հա,

$Բ_{միջ}$ -ը՝ տվյալ դաշտային մշակաբույսի, տվյալ համայնքի (կամ տարածաշրջանի) միջին բերքատվությունն է վերջին 5 տարիների համար, ց/հա,

Գվ-ն՝ վնասվածության գործակիցն է, հիմք է ընդունվում վնասվածության %-ային գնահատականը հանձնաժողովի կողմից,

ԳՆ -ն՝ տվյալ մշակաբույսի 1 ցենտների իրացման գինն է գյուղատնտեսությունում տնտեսավարողների (գյուղացիական տնտեսությունների) կողմից, դրամ:

$$Վ_{դ2} = Ց \cdot (Վ_{կե} + Բ_{միջ} \cdot Գ_{կե} \cdot ԳՆ) \qquad (4)$$

որտեղ՝

$Վ_{դ2}$ -ն՝ վնասի չափն է այն դեպքում, երբ վնասվում են մշակաբույսերը և վերականգնումը տվյալ տարում հնարավոր է, դրամ,

$Վ_{վծ}$ -ն՝ վնասից հետո վերականգնման աշխատանքների համար պահանջվող ծախսերն են 1 հա-ի հաշվով, դրամ,

$Գ_{վհ}$-ն՝ վերականգնումից հետո սպասվող միջին բերքից պակաս սպասվող բերքի գնահատման գործակիցն է, հիմք է ընդունվում պակաս սպասվող բերքի %-ային գնահատականը, որը տրվում հանձնաժողովի կողմից:

Բազմամյա տնկարկների համար.

$$Վ_{բ1} = Տ \cdot Բ_{միջ} \cdot Գ_{վ} \cdot ԳՆ \qquad (5)$$

որտեղ՝

$Վ_{բ1}$ -ն՝ վնասի չափն է այն դեպքում, երբ վնասվում է բազմամյա տնկարկի բերքը տվյալ տարում, և վնասը հետագա տարիների բերքի վրա էական ազդեցություն չի ունենում, դրամ,

Տ -ն՝ վնասված տարածությունն է, հա:

Բազմամյա տնկարկների համար առաջարկվում են նաև 6-րդ և 7-րդ բանաձևերը:

$$Վ_{բ2} = Տ \cdot ԳՆ \cdot Բ_{միջ} \cdot \left(Գ_{վ1} + Գ_{վ2} \cdot Ե_{գ} + Գ_{վ3} \cdot Ե_{գ} + \cdots + Գ_{վn} \cdot Ե_{գ} \right) \qquad (6)$$

որտեղ՝

$Վ_{բ2}$ -ն՝ վնասի չափն է այն դեպքում, երբ վնասվում է բազմամյա տնկարկի բերքը տվյալ տարում, և դրա հետևանքները շարունակվում են հետագա տարիներին, դրամ,

$Գվ,1$, $Գվ,2$, $Գվ,3$ - վնասի հետևանքով հաջորդող տարիներին պակաս սպասվող բերքի գնահատման գործակիցն է, տրամադրվում է հանձնաժողովի կողմից,

$Եգ$ -ն՝ գործակից է, որը որոշվում է տվյալ գյուղատնտեսական մթերքի իրացումից ստացված շահույթի և հասույթի հարաբերակցությամբ, տրամադրվում է հանձնաժողովի կողմից:

$$Վբ3 = Տ \cdot ԳՆ \cdot Բմիջ + Տ \cdot Հծ + Տ \cdot Բմիջ \cdot ԳՆ \cdot Բտարի \quad (7)$$

$Վբ_3$ -ն՝ վնասի չափն է այն դեպքում, երբ վնասվում է բազմամյա տնկարկն ամբողջությամբ, առկա է տվյալ տարվա բերքի ամբողջական կորուստ և պահանջվում ամբողջությամբ նոր այգետնկում իրականացնել, դրամ,

$Հ_ծ$ -ն՝ տվյալ բազմամյա տնկարկի 1 հա-ի հիմնման ծախսերը, դրամ,

$Բ_{տարի}$ -ն՝ նորատունկ այգին բերքատվության մեջ մտնելու ժամկետը, տարի:

Անասնաբուծության ճյուղում վնասի գնահատման համար առաջարկվում է կիրառել հետևյալ բանաձևերը:

$$Վկ1 = Uգ \cdot (ԳՆ - Եմ \cdot ԳՆ_1) \quad (8)$$

որտեղ՝ $Վկ_1$-ն՝ վնասի չափն է գյուղատնտեսական կենդանու անկման դեպքում, դրամ,

$Uգ$ -ն՝ անկած անասնագլխաքանակն է

ԳՆ-ն՝ անկած տվյալ անասնագլխաքանակի շուկայական գինն է, դրամ,

$Եմ$ -ն՝ անասնագլխաքանակի անկումից հետո օգտահանման ենթակա ենթամթերքի զանգվածն է 1 գլխի հաշվով, կգ,

$ԳՆ_1$-օգտահանված ենթամթերքի 1 կգ-ի շուկայական գինը, դրամ:

$$Վկ2 = Uգմ \cdot (Uմիջ \cdot Գկ \cdot ԳՆմթերք) \quad (9)$$

որտեղ՝ $Վ_{կ2}$ -վնասի չափն է մթերատվության անկման դեպքում, դրամ,

$Ա_{գմ}$ -ն՝ մթերատվության անկում դրսևորած գյուղատնտեսական կենդանու տվյալ տեսակի անասնագլխաքանակն է, գլուխ,

$Մ_{միջ}$ -ն միջին մթերատվության ցուցանիշն է վերջին 5 տարիների համար, կաթնատվություն, քաշաճ, կգ

Գվ-ն՝ մթերատվության կրճատման գործակիցն է, հիմք է ընդունվում մթերատվության կրճատման %-ային գնահատականը, տրվում է հանձնաժողովի կողմից,

$ԳՆ_{մթերք}$ - ն՝ մթերքի 1 կգ-ի շուկայական գինն է 1 կգ-ի համար:

Վնասների գնահատման համար ելակետային տվյալներ են հանդիսանալու մասնագիտական հանձնաժողովի կողմից գնահատված վնասի չափը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները, մարզերի և տարածաշրջանների կտրվածքով բերքատվության և մթերատվության վերաբերյալ, բուսաբուծական և անասնապահական մթերքների շուկայական գները:

Առաջարկված մեթոդական մոտեցումները կարող են երաշխավորել բնական աղետներից գյուղատնտեսության ոլորտին պատճառած տնտեսական վնասների հիմնավորված գնահատման և ելակետ կհանդիսանա այդ վնասների մեղմմանն ուղղված հիմնավորված պետական բյուջետային ծրագրերի մշակման և իրականացման համար: Առաջարկվող մեթոդական մոտեցումները կարևոր են նաև բնական աղետների պատճառներով գյուղատընտեսության ոլորտին հասցված տնտեսական վնասների մեղմման ուղղված բյուջետային ծրագրերի իրականացման ընթացքի մոնիթորինգի կազմակերպման գործընթացում:

Luiza Hunanyan

Armenian National Agrarian University
hunanyan-85@mail.ru

Methodology of the Effectiveness of Budget Programs Agriculture and The Assessment of Post-Natural Disaster Damage

Key words: programs, budget, effectiveness, expenses, price, natural disaster.

The assessment of the effectiveness of the agrarian policy of the Republic of Armenia requires the prior decision of the state direct support, i.e. the effectiveness of budget programs of agriculture. Since besides the periodically implemented budget programs, in emergency situations there is a need for the implementation of budget programs aimed at the softening of post-disaster damage, the importance of the elaboration of methodology of damage assessment is highlighted. This article is dedicated to the resolution of abovementioned issues.

Луиза Унанян
Национальный аграрный университет Армении
hunanyan-85

Методология эффективности бюджетных программ сельского хозяйства и оценки ущерба от природных чрезвычайных бедствий.

Ключевые слова: программы, бюджетный, эффективность, расходы, цена, природные бедствия.

Оценка эффективности аграрной политики РА требует приоритетного определения прямой государственной поддержки, то есть эффективность бюджетных программ

сельского хозяйства. Так как кроме регулярно реализуемых бюджетных программ в чрезвычайных ситуациях возникает реализация бюджетных программ направленных на смягчение ущерба от природных чрезвычайных бедствий, важно разработать методологию по оценке ущерба от природных чрезвычайных бедствий. Эта статья посвящена решению этих проблем.

Բոյաջյան Կարապետ
ՏԳԹ. դոցենտ, Հյուսիսային համակլսարանի դասախոս
karapetboyajyan@gmail.com
Պիվազյան Վարդինե
Մոսկվայի կապի և ինֆորմատիկայի տեխնիկական համալսարանի մագիստրոս
vartine@yandex.ru

ՏԵՂԵԿՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ում

Հիմնաբառեր. տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ, տեղեկատվական հասարակություն, ռազմավարություն, ՏՀՏ ապրանքային նշան, ՏՀՏ ոլորտի ցուցանիշներ

Վերջին տասնամյակում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունա-բերության զարգացումն ու տեղեկատվական հասարակության կայացումը կարևորագույն խթան են հանդիսացել աշխարհի բոլոր զարգացած երկրների տնտեսության մրցունակության և արտադրողականության բարձրացման, կառավարման, ինովացիոն և գիտակրթական համակարգերի, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքների զարգացման համար, և

այն ճանաչվել է գերակա ուղղություն՝ որպես գիտելիքահենք տնտեսության կառուցման հիմնաքար:

ՀՀ կառավարության գործունեության առաջնայնություններից մեկը եղել և մնում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը: Այս ոլորտը Հայաստանի տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից է:

Շուկայական ժամանակակից պայմաններում Հայաստանը նպատակ ունի ՏՏ շուկաներում գրավել առաջատարի դիրքեր, ունենալ զարգացած և առաջադեմ տեղեկատվական հասարակություն ու գիտելիքների վրա հիմնված տնտեսություն: Այս նպատակին հասնելու համար մեր հանրապետությունը որդեգրել է ցածր արժեք ունեցող ՏՏ ծառայություններ մատուցող երկրից բարձր արժեքով առաջատար ՏՏ արտադրանք և ծառայություններ տրամադրող երկիր դառնալու քաղաքականություն: Նշվածին հասնելու համար անհրաժեշտ է ձևավորել միջազգային բարձր չափանիշներին համապատասխանող՝ տեխնիկական կրթություն, տեղեկատրվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ենթակառուցվածքի և համակարգչային գրագիտություն ունեցող հասարակություն:

Վերոնշյալ ռազմավարական մոտեցումներից ելնելով՝ պետք է ստեղծել գործողությունների ծրագիր, որի նպատակը կդառնա տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) կտրուկ զարգացումը՝ ապահովելով աշխարհում Հայաստանի առաջատար դիրքն ու երկրում տեղեկատվական հասարակության կազմակերպումը:

Այս ռազմավարությունը ներառում է տեղեկատրվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ար-

տադրությունը, նման հասարակությանն առնչվող խնդիրները, դրանց լուծման համադրված ուղղությունները:

Ռազմավարությունը իրականացվում է հստակ ծրագրերով և ժամկետներում, իրականացվում է մոնիթորինգ, որի հիման վրա վերլուծվում են ստացված արդյունքները, ներդրվում է արտասահմանյան լավագույն փորձն առկա ռեսուրսների համադրմամբ:

ՏՏ ոլորտի զարգացման տեսլականն ընդգրկում է կայացած տեղեկատվական հասարակության և զարգացած ու համաշխարհային ճանաչում ունեցող տեխնոլոգիաների ոլորտի ձևավորումը:

Այդ ծրագրի նպատակն է միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող ՏՀՏ ենթակառուցվածքների ստեղծումը, այդ ենթակառուցվածքների ամրապնդումը, ՝Հայկական ՏՏ ապրանքային նշան՝-ի ներթափանցումն ու ներկայությունը համաշխարհային շուկայում, ՝Հայկական ՏՏ ապրանքային նշան՝-ի լիարժեք մասնակցության ապահովումը միջազգային շուկաներում և, հատկապես, աճի բարձր պոտենցիալով շուկայական թիրախային սեգմենտներում: Նպատակ կա նաև ՏՀՏ ենթակառուցվածքների և տեղեկատվական հասարակության զարգացմաբ ապահովել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների աճ, եկամուտների բարձրացում և ժամանակակից տնտեսության կայացում:

ՏՀՏ-ն ՀՀ տնտեսության ամենաարագ զարգացող և ամենաբարձր հավելյալ արժեք ձևավորող ոլորտն է, սակայն այստեղ գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրներ, ինչպիսիք են ՏՀՏ ոլորտի առաջնային զարգացումն ու էլեկտրոնային հասարակության կայացումն ապահովող մեխանիզմների բարելավումը, ՏՀՏ ոլորտում որակյալ և մրցունակ կրթական միջավայրի զարգացումը, միջազգային չափանիշներին համապատասխանող տեխնոլոգիա-

կան կադրերի մասնագիտական ուսուցումն ու վերապատրաստումը, ՏՀՏ ոլորտում գործարար բարենըպաստ միջավայրի կատարելագործումը և տեխնոլոգիական ձեռներեցությունը խթանող ֆինանսական ենթակառուցվածքների զարգացման հետ կապված խնդիրները, ոլորտի զարգացմանն ու էլեկտրոնային հասարակության կայացմանը նպաստող ներդրումների խթանման և նոր կազմակերպությունների ներգրավման հետ կապված խնդիրները, ոլորտի տեղական ընկերությունների արտադրանքի ու ծառայությունների արտահանման և համաշխարհային շուկաներում կայուն դիրքավորման բարդությունները, արագ զարգացող տեխնոլոգիական աշխարհում Հայաստանի մրցունակության պահպանման հետ կապված խնդիրները, ժամանակակից ենթակառուցվածքների անբավարարությունը:

Աղյուսակ 1-ում ներկայացվում է ՏՀՏ ոլորտի հիմնական ցուցանիշները՝ ըստ տնտեսության իրական հատվածի արտադրության, առևտրի և ծառայությունների ոլորտների համապատասխան գործունեության տեսակների խմբավորման, որոնք նաև ներառված են վերը նշված ոլորտների, այդ թվում՝ հեռահաղորդակցության ամփոփ ցուցանիշներում[52]:

[52] http://www.armstat.am/file/article/sv_12_15a_6200.pdf

Աղյուսակ 1

	2015թ. հունվար-դեկտեմբեր		2014թ. հունվար-դեկտեմբեր		Ընդհանուրի նկատմամբ		
	ծավալը, մլն դրամ	2014թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, համադրելի գներով,%	ծավալը, մլն դրամ	2013թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, համադրելի գներով,%	2015թ. հունվար-դեկտեմբեր	2014թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբեր
ՏՀՏ, ընդամենը	235 423.0	99.3	233 830.3	99.5	100.0	100.0	100
այդ թվում							
Արտադրություն	2 048.5	95.5	2 062.7	99.7	0.9	0.9	1.0
առևտուր	31 039.2	108.5	27 059.0	90.7	13.2	11.6	12.4
Ծառայություններ	202 335.3	98.1	204 708.6	100.8	85.9	87.5	86.6
որից հեռահաղորդակցություն	160 158.3	93.3	171 589.5	98.8	68.0	73.4	74.1



Գծանկար 1. ՏՀՏ ոլորտի հարաբերական ցուցանիշները

ՏՏ ոլորտի զարգացմանն ու տեղեկատվական հասարակության կայացմանն ուղղված քաղաքականության հաջողությունը պայմանավորում են այս ուղղությամբ նախատեսվող ծրագրերի մշակման և իրականացման գործընթացում ներգրավված շահագրգիռ կողմերի ընդհանուր նպատակադրումը: ՏՀՏ զարգացման պետական քաղաքականությունն ուղղվում է ՏՀՏ արդյունաբերության կայուն աճի տեմպերի ապահովմանն ու երկարաժամկետ նպատակների իրականացմանը: Այդ միջոցառումների արդյունավետությունը պայմանավորող գործիքներից են ուղղակի ներդրումների ներգրավումը, ճկուն օրենսդրական դաշտի ձևավորումը, մարդկային կապիտալի զարգացումը, նորարարությունների խթանումը: Տվյալ գործընթացը, բնականաբար, ուղեկցվում է այնպիսի ռիսկերով, ինչպիսիք են պետական և մասնավոր հատվածների, ինչպես նաև դոնորների կողմից ոչ բավարար ֆինանսական միջոցների հատկացումը, քաղաքականության ոչ համակարգված իրականացումը, շուկայի փոփոխություններով պայմանավորված մրցունակ դիրքի կորուստը, ՏՀՏ համաշխարհային տնտե-

սության միտումների և զարգացումների կտրուկ փոփոխությունները:

Այս միջոցառումներին են դասվում[53].

Ազգային լայնաշերտ հեռահաղորդակցության ցանցի կառուցում

Միջոցառում	Ժամկետ	Նպատակ	Հիմնական քայլեր
Նախագծել, մշակել և կառուցել միջազգային չափանիշներին բավարարող ՏՀՏ ենթակառուցվածք, որը կծառայի Հայաստանի մարզերին, քաղաքային և գյուղական համայնքներին, պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին և մասնավոր հատվածին:	մինչև 2018	Պետական և մասնավոր հատվածի համագործակցության ազգային լայնաշերտ հեռահաղորդակցության ցանցի, տվյալների կենտրոնների, ցանցային, համակարգերի և համակարգչային ծրագրերի հարթակների ձևավորում՝ ծառայությունների հասանելիությունը և պահանջարկը խթանելու նպատակով:	Մշակել և ապահովել միջազգային չափանիշներին բավարարող ՏՀՏ ենթակառուցվածք: Պայմաններ ապահովել ՀՀ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ցանցերը, տվյալների կենտրոնները, համակարգերն ու համակարգչային ծրագրերն ինտեգրելու համար: Ընդլայնել ազգային համացանցը՝ ընկերությունների, քաղաքացիների միջև կապերը բարելավելու և ընդլայնելու համար:

[53] Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման հայեցակարգ 2008թ.

Որակյալ աշխատուժի ապահովում

Միջոցառում	Ժամկետ	Նպատակ	Հիմնական քայլեր
Մշակել և իրականացնել նպատակային ծրագրեր՝ ուղղված ՏՏ ոլորտի շրջանավարտ-ների և աշխատուժի քանակի մեծացմանը:	մինչև 2018	Մեծացնել բարձր Որակա-վորմաբ ՏՏ շրջանավարտ ների և աշխատուժի քանակը՝ տարեկան առնվազն 1500-ով	Համագործակցել մասնագիտական այլ ուսումնական հաստա-տությունների, ինչպես նաև միջազ-գային դոնոր կազմակերպություն-ների և սփյուռքահայ համայնքի հետ՝ գործընթացի մեջ նրանց ներգրա-վելու նպատակով: Մշակել կրթաթոշակային, հավաստագրման, վերապատրաստ-ման և այլ ուսումնական ծրագրեր: Ապահովել տեղական ՏՏ ընկերությունների մասնակցությունը ծրագրի իրականացման գործընթացում: Համադրել հեռահաղորդակցության լայնաշերտ լարային և անլար ցանցերի ներդնումը և մասնագի-տական ուսումնական այլ հաստատություններում առկա ենթակառուցվածքները և սարքավորումները:

«Հայկական ՏՀՏ ապրանքային նշան» մարքեթինգային քարոզարշավի իրականացում

Միջոցառում	Ժամկետ	Նպատակ	Հիմնական քայլեր
Մշակել և իրականացնել համաշխարհայի ն մակարդակի ռազմավարական մարքեթինգի և խթանման փուլային ծրագիր՝ դիրքավորելու համար ‘Հայկակա ն ՏՏ ապրանքային	մինչև 2018	Ընտրել մրցակցային առավելություններ ունեցող ‘Հայկական ՏՏ ապրանքային նշան’-ները, նպատակային շուկաները, դիրքավորել ‘Հայկա կան ՏՏ ապրանքային նշան’-ը ՏՏ նպատակային	ՀՀ կառավարությունն ապահովում է ազատականացված, բաց և թափանցիկ գործարար միջավայր. Վարձել ՏՏ ոլորտի իրացման փորձառու մասնագետների ‘Հայկակ ան ՏՏ ապրանքային նշան’ մարքեթինգային քարոզարշավի նախագծման և

նշան՝-ը բարձր աճի պոտենցիալով ՏՏ թիրախային շուկաներում:		շուկայական սեգմենտներում - ապահովել 700մլն-ից 1 միլիարդ ԱՄՆ դոլարի արտաքին ուղղակի և վենչուրային կապիտալի ներդրումներ, ապահովել տեխնոպարկերիի, ազգային համացանցի, ինկուբատորների հիմնական առաքելությունների իրացումը:	իրականացման, ինչպես նաև վենչուրային և արտաքին ուղղակի ներդրողներին գրավելու և գործընթացում ընգդրկելու համար: Ընտրել սեգմենտային բարձր արժեքով, բարձր աճի պոտենցիալով թիրախային շուկաներ: Ընտրել մարքեթինգի առումով փորձառու և համաշխարհային մակարդակի գովազդային և հասարակայնության հետ կապերի գործակալություն: Ընտրել մրցակցային առավելություններ ունեցող՝Հայկական ՏՏ ապրանքային նշան՝-ները, նպատակային շուկաները, հիմնական ուղերձները, արժեքի առաջարկը:

Այսպիսով՝ վերոնշյալ հետազոտությունները, վերլուծությունները և ուղեցույցները ոչ միայն արդյունավետ կծառայեն բազմաթիվ միջոցառումների, հանդիպումների ընթացքում հայկական ՏՀՏ ոլորտի ներկայացմանը, այլև կդառնան ՏՀՏ ոլորտում առկա հիմնական մարտահրավերների և դրանց հաղթահարման հնարավոր ուղիների, ոլորտի զարգացման հեռանկարների, ներդրումների ներգրավման ու հետագա ռազմավարության մշակման համար տեղեկատվական աղբյուր:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՏՀՏ ոլորտի զարգացումը մեծապես կնպաստի տնտեսության մրցունակության բարձրացմանը, արտադրողականության աճին, ՀՀ բնակչության կենսամակարդակի

բարձրացմանը, գիտական և հետազոտական աշխատանքների ծավալի աճին, բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծմանը, ՏՀՏ արդյունաբերության աճին, կրթության որակի շեշտակի բարձրացմանը:

Boyajyan K.
Pivazyan V.

The tendencies of development information and telecommunication technologies

Keywords: information and telecommunication technologies, informational society, strategy, ITT trade mark, indicators of ITT.

Development of branch of infocommunikation will promote substantially increase of competitiveness of economy, growth of productivity, increase of a standard of living of the population of RA, increase in research works, creation of highly paid workplaces, growth of the industry of ITT, fast improvement of quality of education.

Бояджян К.
Пивазян В.

Тенденции развития информационных и коммуникационных технологий в РА

Ключевые слова: информационыые и телекоммуникационные технологии, информационное общество, стратегия, ИТТ логотип, показатели отрасли ИТТ.

Развитие отрасли инфокоммуникаций в значительной степени будет способствовать повышению конкурентоспособности экономики, росту производительности, повышению уровня жизни населения РА, увеличению научно-

исследовательских работ, созданию высокооплачиваемых рабочих мест, росту промышленности ИТТ, быстрому повышению качества образования.

Գարիկ Մարգարյան
Հյուսիսային համալսարանի մագիստրատուրայի ուսանող
garik-margaryan-1992@mail.ru

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հիմնաբառեր. գործազրկության իրական մակարդակ, ՀՆԱ, աշխատանքի շուկա, տնտեսապես ակտիվ բնակչություն, թաքնված զբաղվածություն:

Խորհրդային Միությունից անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունը հռչակվեց շուկայական տնտեսությամբ կառավարվող երկիր, անցյալում թողնելով վարչահրամայական (պլանային) համակարգը: Շուկայական տնտեսության մոդելը համարվելով երբևէ ստեղծված ամենաարդյունավետ մոդելը, թվում էր, թե Հայաստանյան տնտեսության համար պետք է ապահովեր զգալի զարգացում, սակայն, միանգամից՝ ի հայտ եկան մի շարք տնտեսական հիմնախնդիրներ, որոնք գնալով՝ երբեմն նույնիսկ ստացան առավել խորքային բնույթ: Ներկայումս, Հայաստանի Հանրապետության ամենալուրջ հիմնախնդիրներից մեկն է գործազրկությունը, իր բացասական հետևանքներով՝ աղքատություն, արտագաղթ, ծանր բարոյահոգեբանական և այլ նմանօրինակ հետևանքներ: Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ երբ երկրում գործազրկությունն ավելանում է 1%-ով, ապա իրական ՀՆԱ-ի աճը նվազում է 2%-ով: Շուկայում նվազում են սպառողները,

ինչը հանգեցնում է արտադրական ծավալների կրճատման, ընդ որում կրկնակի: Բնական է, որ գործազրկության հաղթահարումը նախ և առաջ պայմանավորված է տնտեսական զարգացմամբ և նոր աշխատատեղերով: ՀՀ-ում գործազրկության մակարդակը 2015 թվականին կազմել է շուրջ 18,5% (Գծապատկեր 1), որը արտահայտում է միայն գրանցված գործազուրկների թվաքանակը: Իրականում այն ավելի մեծ է: Հարկ է նշել, որ Հայաստանում, ինչպես և շատ այլ երկրներում աշխատուժի ուսումնասիրությունների հիման վրա գնահատվող գործազրկության և գրանցված գործազրկության մակարդակները նույնական չեն, իսկ հաճախ դրանք կարող են էականորեն տարբերվել: Սովորաբար համարվում է, որ գրանցված գործազրկության մակարդակը գերազանցում է իրական գործազրկության մակարդակը այն երկրներում, որտեղ գործազրկության սոցիալական պաշտպանության և ապահովագրության համակարգերը ուռճացած են և, հակառակը, գրանցված գործազրկության մակարդակը կարող է անհամեմատ ավելի ցածր լինել իրական գործազրկության մակարդակից այն երկրներում, որտեղ այս համակարգը խիստ թերաֆինանսավորվում է: Հիմնականում գործազրկության մասին խոսելիս, որպես առավել ճշգրիտ ցուցանիշ պետք է հիմք ընդունել տնային տնտեսությունների հետազոտության տվյալները, քանի որ դրանք հնարավորություն են տալիս պարզելու, թե աշխատունակ բնակչության որ մասն է գործազուրկ, այդ թվում նրանք, որոնք ոչ մի տեղ չեն դիմել աշխատանք գտնելու համար և ոչ մի տեղ գրանցված չեն որպես գործազուրկ: Այլ մեթոդաբանությամբ գործազրկության իրական պատկերը չի երևում: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալներում ներկայացված է գործազրկության մակարդակը՝ համադրված տնտեսապես ակտիվ բնակչության թվի հետ, սկսած 2010 թվականից.



Գծապատկեր 1. Գործազրկության մակարդակի ՀՀ-ում 2010-2015 թթ. (%)[54]



Գծապատկեր 2. Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը ըստ տարիքի, 2015թ. (հազ. մարդ)[55]

Գործազրկության առումով առավել խոցելի է 16-24 տարեկանների խումբը (գծապատկեր 2), որոնց շրջանում գործազրկության մակարդակը բավականին բարձր է գործազրկության միջին մակարդակից: Դրա մասին, առաջին հերթին վկայում է այն փաստը, որ երկրներից մեծամասնությունում գործազրկության մակարդակը երիտասարդների շրջանում երկու և ավելի անգամ գերազանցում է ընդ-

[54] ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք, //www.armstat.am

[55] ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015թվ. Հունվար-նոյեմբեր, էջ 12,

հանուր գործազրկության մակարդակը: Աշխատանքի շուկայում երիտասարդները խոցելի են ոչ միայն գործազրկության առումով: Միջազգային փորձը վկայում է, որ զբաղված երիտասարդները մեծահասակ զբաղվածների համեմատ աչքի են ընկնում ավելի ցածր աշխատավարձով, ոչ ֆորմալ ոլորտում ընդգրկվածության և թերզբաղվածության ավելի բարձր մակարդակով, ինչպես նաև մշտական աշխատանք ունեցողների ցածր աստիճանով: Երիտասարդների զբաղվածության ապահովման դժվարությունները հիմնականում պայմանավորված են աշխատաշուկայում անմրցունակ մասնագիտություններ ունենալու փաստով: Նույնիսկ պահանջված մասնագիտություններով աշխատաշուկա մտնող մասնագետների թիվը զգալիորեն գերազանցում է գործատուների կողմից ներկայացվող պահանջարկը (աղյուսակ 1): ՀՀ-ում անցումային շրջանին բնորոշ երևույթներն իրենց ազդեցությունն ունեցան նաև կրթական համակարգի վրա՝ հանգեցնելով աշխատաշուկայի և կրթական համակարգի անհամամասնությունների, որն էլ աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի խզվածության հիմնական պատճառներից մեկն է: Կրթական համակարգը դեռևս գտնվում է բարեփոխումների փուլում, որը միտված է համահունչ դարձնելու տնտեսության, աշխատաշուկայի և մասնագիտական կրթության նպատակները: Հայաստանում ընդգրկվածությունը բարձ է հիմնականում կրթության համակարգում, իսկ համեմատաբար ցածր է ավագ դպրոցի համակարգում:[56] Պետք է նշել, որ կրթական համակարգում ընդգրկվածությունը, թեև ազդում է աշխատուժի մասնակցության վրա, այնուհանդերձ, ուսումնառող երիտասարդները կարող են մասնակցել աշխատուժի առաջարկին և դասվել

[56] Գրիգոր Ղարիբյան, Անահիտ Համբարձումյան, Գործազրկությունը և մարդկային կապիտալի կորուստները ՀՀ-ում, Եր.2013, էջ 13

տնտեսապես ակտիվ բնակչության շարքում, եթե նրանք ուսմանը զուգահեռ աշխատում կամ ակտիվորեն աշխատանք են փնտրում: Հատկանշական է, որ կրթական համակարգում ընդգրկվածության բարձր մակարդակ ունեցող շատ զարգացած երկրներում լայն տարածում ունի ուսումնառության և աշխատանքի համատեղման երեվույթը: Դա հատկապես վերաբերում է 15-19 տարեկան սովորող երիտասարդներին, որոնց ներգրավվածությունը աշխատուժում զարգացած երկրներում միջինում գերազանցում է սովորողների 20 տոկոսը, իսկ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Նիդեռլանդները և Դանիան հասնում է մինչև 50 տոկոսի՝ հիմնականում ի հաշիվ ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ մշտական աշխատանք ունեցող սովորող երիտասարդների:[57]

Աղյուսակ 1

Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը ըստ կրթության, 2014-2015թթ.(հազ. մարդ)[58]

N	Անվանումը	2014թ.	2015թ.
1	Հետբուհական, բարձրագույն	9400	10175
2	Թերի բարձրագույն, միջին մասնագիտական	13400	14515
3	Նախամասնագիտական (արհեստագործական)	4100	4835
4	Միջնակարգ ընդհանուր	32600	40457
5	Հիմնական ընդհանուր	5300	5989
6	Տարրական ընդհանուր	500	649

[57] Աղբյուրը՝ Education at a Glance: OECD Indicators 2004

[58] ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015թվ. նոյեմբերին (էջ 12), 2014թվ. Սեպտեմբերին (էջ 13)

Մարզերի և մայրաքաղաքի տասնյակ հազարավոր ուսանողներ բուհը ավարտելուց հետո կանգնում են գործազրկության խնդրի առջև: Չնայած, որ գործատուները պահանջում են մինչև 30 տարեկան աղջիկներ և տղաներ, այնուամենայնիվ հենց այդ նույն տարիքային խումբն է գործազուրկների մեջ մեծ թիվ զբաղեցնում: Եթե տարանջատենք միայն բարձրագույն կրթություն ստացողներին, ապա յուրաքանչյուր տարվա կտրվածքով բուհերի շրջանավարտներից միայն 20%-ն է աշխատանք գտնում, մինչդեռ հազարավոր երիտասարդներ անգամ բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն չունեն, ուստի այդ դեպքում աշխատանքի տեղավորվելը առավել մեծ ջանքեր է պահանջում: Մինչև 18 տարեկանները դիմում են զբաղվածության կենտրոններ՝ ակնկալելով բանվորական աշխատանք, սակայն երիտասարդներն այսօր ձգտում են բարձր աշխատավարձի և հարմար աշխատանքի:

Զբաղվածության կենտրոնի ղեկավարները նշում են, որ մեծ է հատկապես այն երիտասարդների թիվը, ովքեր զբաղված են թաքնված գործունեությամբ: Ընդհանրապես թաքնված զբաղվածությունը գործունեության այն ձևն է, որի դեպքում գործում են հարկային օրենքներից դուրս: Ընտրանքային եղանակով կատարված հաշվումները ցույց են տվել, որ թաքնված զբաղվածների թիվը բավականին մեծ է, որի մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում երիտասարդները: Ընդ որում նրանցից ոմանք զբաղվածության ծառայությունում գրանցված են որպես գործազուրկ: Այս առումով անհրաժեշտ է կարգավորել պետական օրհենսդրական դաշտը, իրականացնել հսկողություն հիմնարկ ձեռնարկությունների նկատմամբ, համախմբել իրավասու մարմինների աշխատանքը և այլ արդյունավետ միջոցառումներ:

Աշխատանքի տեղավորման դժվարություններ ունեն նաև 50-ից բարձր տարիքի անձինք, ովքեր երկարատև

գործազրկության հետևանքով կորցնում են իրենց որակավորումը: Այսպիսով զվաղվածության հետ կապված խնդիրները հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել զբաղվածության պետական կարգավորման ակտիվ քաղաքականություն: Զբաղվածության պետական կարգավորման քաղաքականության արդյունավետ իրագործման համար նախ և առաջ անհրաժեշտ է ամբողջ տնտեսության մասշտաբով իրականացնել որոշակի բարեփոխումներ այդ թվում նաև՝ վերափոխել մարդկանց հոգեբանությունը: Տնտեսության անցումային փուլում խիստ կարևոր է ճկուն մեղմացուցիչ համակարգի ստեղծումը, որը որոշակիորեն կթեթեվացնի ճգնաժամային անկման, արտադրությունների վերակառուցման և արդիականացման հետևանքները: Խոսքը վերաբերվում է մանր և միջին գործարարությանը, ինչպես նաև ինքնազբաղվածության խթանմանը, հեռանկարային աշխատատեղերի պահպանմանն ու նորերի ստեղծմանը պետության աջակցությանը, հասարակական աշխատանքների ընդլայնմանը, դրա հայեցակարգի փոփոխմանը: Սրանք կհանգեցնեն աշխատանքի առաջարկի և պահանջարկի որոշակի հաշվեկշռվածության: Բացի այդ, պետության քաղաքականությունը պետք է ուղղված լինի մրցունակ քաղաքացիների ձևավորմանը, որոնք համապատասխանելով գործատուների կողմից ներկայացվող պահանջներին՝ կկարողանան գիտակցորեն դիմակայել շուկայական պայմաններին: Այստեղ կարևոր է վերափոխել մարդկանց հոգեբանությունը, որպեսզի նրանք պետության կողմից նվազագույն սոցիալական օգնություն հայցողներից վերածվեն աշխատանքային ոլորտում ակտիվ գործունեություն ծավալողների: Վերջինս ստիպում է, որպեսզի պետությունը մշակի աշխատանքից զրկված մարդկանց սոցիալական պաշտպանվածության նոր համակարգ: Եվ վերջապես, շուկայական տնտեսության պայմաններում ձևավորվում է գործարարության նոր վարվելակարգ, որը

ընդունելու և ընկալելու համար անհրաժեշտ է ստեղծել տեղեկատվական այնպիսի համակարգ, որը կբարձրացնի մարդկանց տնտեսական, իրավական գիտելիքների մակարդակը:[59]

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանում, չնայած վերջին տարիների որոշակի բարելավման միտումներին, աշխատանքի շուկան դեռևս աչքի է ընկնում պահանջարկի և առաջարկի միջև անհամապատասխանության բարձր մակարդակով: Գործազրկության ընդհանուր բարձր մակարդակը էլ ավելի է դժվարեցնում աշխատանքի շուկա հիմնականում առաջին անգամ մուտք գործող երիտասարդների համար եկամտաբեր աշխատանք գտնելը՝ զգալիորեն ավելացնելով երիտասարդների գործազրկության հարաբերական ռիսկը:

Margaryan Garik S.

Graduate student at Northern University

garik-margaryan-1992@mail.ru

THE MAIN PROBLEMS OF YOUTH EMPLOYMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: the real level of unemployment, work market, Gross Domestic Product, economically active population, hidden activity

Despite the tendency of improvements during the latest years, the work market in Armenia stands out with a great level of mismatch between demand and supply. The overall high level of unemployment makes it more difficult for the youth, who enter work market basically for the first time, to find profitable jobs. It significantly increases relative risks of youth unemployment.

---

[59] Ռ. Ս. Ղանթարչյան, ՀՀ աշխատանքի շուկան և զբաղվածության պետական կարգավորումը, էջ 52

Маргарян Г. С.
Магистрант Северного Университета
garik-margaryan-1992@mail.ru

ОСНОВОПОЛАГАЮЩИЕ ПРОБЛЕМЫ ЗАНЯТОСТИ МОЛОДЕЖИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

Ключевые слова: реальный уровень безработицы, ВВП рынок труда, экономически активное население, скрытая занятость.

В последние годы, в Армении, несмотря на некоторые тенденции улучшения, рынок труда отличается высоким уровнем несоответствия между спросом и предложением. Высокий уровень общей безработицы еще более усугубляет трудности нахождения прибыльной работы со стороны молодежи на рынке труда, особенно в первый раз, существенно увеличивая относительный риск безработицы молодёжи.

Hamed Mirzaei
European Regional Educational Academy
hamedmirzaey@gmail.com

IRAN-ARMENIA ECONOMIC COOPERATION ISSUES

Key world: tourism, energy supplying, economy security, joint entities

For more than 20 years, the Islamic Republic of Iran has appeared as the main and most reliable ally of the republic of Armenia. Since Iran recognized Armenia’s independence on December 25, 1991, the two countries have strengthened their

political and economical relationship on many occasions and have committed themselves to realize numerous common projects in the economic field.

Over the past year, Tehran has sought closer economic and political ties with Georgia and Azerbaijan, which have intensified after the sanctions were lifted. In contrast, Iran's energy pipeline ambitions have hitherto been designed to bypass Armenia due to its deepening dependence on Moscow. Tehran realizes that Russia's increasing political and economic absorption of Armenia hinders it from establishing a sustained economic corridor to Europe. Yet the visit of Iran's First Vice President Eshaq Jahangiri Kouhshahi to Yerevan in early November 2015 signaled Armenia's importance in Iran's engagement with the region.

Regardless of Russia's dominance in Armenia's political and social life, Tehran hopes to build a sustainable strategic relationship with Armenia in order to anchor Iran in the South Caucasus in political, military and economic terms. However, Russia's monopoly on Armenia's energy supplies in the period 2012-15 left little room for Iran and other potential investors. The economic and political obstacles due to Russian interference in Armenia-Iran bilateral ties have led to stagnation in this relationship. In response to Iranian overtures during Kouhshahi's visit, Armenian officials instead aligned with Moscow's position, proposing that Iran should align itself with the Eurasian Economic Union (EEU).

Iran is of high geopolitical significance to Russia. Yet Moscow's policymakers tend to view Iran's engagement with the South Caucasus according to the logic of a zero-sum game. Despite the convergence of Russian and Iranian interests in Syria, Moscow also sees Iran as a threat to its predominance in the South Caucasus and particularly in Armenia, on par with the West and Turkey. Russia was able to capitalize on the international sanctions regime against Iran, which isolated Iran

from the West and confined it to a narrow political and economic space.

Prior to the nuclear deal, Iran avoided antagonizing Russia and conducted a circumspect policy in the South Caucasus. Tehran may now wish to assume a more visible role at Russia's southern flanks. In mid-January, President Rouhani called on his Armenian counterpart to connect "the Persian Gulf to the Black Sea via an Armenia-Georgia transport corridor." This initiative is at odds with Russia's interests in South Caucasus and appears to be a source of concern in Moscow. Apparently, Iran seeks to offer Armenia at least a partial alternative to Russia's predominance.[60] This, however, seems unrealistic without an alignment of Iranian and U.S. interests regarding Armenia.[61]

The end of sanctions on Iran inevitably shifts the strategic environment at Moscow's expense, and the U.S. has sent positive signals regarding Iran's potential engagement with Armenia. Particularly, the U.S. ambassador to Armenia, Richard Mills, unambiguously announced in February that "Armenia could become a platform for U.S.-Iran commercial relations" – thereby acknowledging that Iran may play an important role in reducing Armenia's dependency on Russia. The statement subscribes to the assumption that Iran's ability to alter regional dynamics will provide Armenia with increased room for maneuver in its vulnerable relations with Russia.

However, Armenian goverment faces a range of obstacles that will likely hamper Armenia's possibilities to

---

[60]President Ahmadinejad Urges Facilitated Trade Ties between Iran, Armenia", Fars news Agency, Apr. 29, 2012, available at: http://english.farsnews.com/newstext.php?nn=8101301567

[61]World Trade Organization, "Republic of Armenia and the WTO", available at: http://www.wto.org/english/thewto_e/countries_e/armenia_e.htm

forge strategic ties with neighboring Iran. One crucial issue is the *de facto* subordination of certain state institutions and a large part of the Kremlin economic plans. Moreover, a number of agreements already bind Armenia to Russia primarily via the EEU and CSTO, precluding any tangible breakthrough with Iran without Russia's approval.

The transnational mechanisms imposed by Russia on Armenia and other post-Soviet states permit Moscow to regulate and/or limit their policymaking. Iran witnessed Russia's modus operandi with Armenia's leadership and society in 2005, when Russia effectively pressured Armenian authorities to minimize the transit capacity of the Iran-Armenia gas pipeline in order to prevent the possibility of further export to Europe and limiting the utility of the pipeline even for the domestic needs. In its approximation of geopolitical opportunities deriving from the consequences of the nuclear deal, Tehran understands that Armenian authorities cannot ignore Russia's increasingly assertive behavior in the South Caucasus. Realizing that deeper security ties with Armenia would be counterproductive in the current political context, Iranian policymakers have instead opted for minor steps, in anticipation of Russia's gradual geopolitical decline and withdrawal from the region.

As a waning Russian influence is imaginable in a long-term perspective, Iran will likely continue to consider Armenia a preferred security partner in the Caucasus, in order to counterbalance the alliance between Turkey and Azerbaijan. On the other hand, the enthusiasm in Armenian policy-making circles is limited, as Armenia's current ruling regime ultimately depends on Moscow for its survival.

Since the sanctions were lifted, Iran has set an agenda for developing comprehensive ties with the South Caucasian states, where Armenia, due to a range of political and historic circumstances, is of special importance to Tehran. Yet

insufficient proficiency in strategic planning and frequent miscalculations in foreign policy have restricted Yerevan's strategic vision, suggesting that Armenia-Iran defense and security cooperation will be symbolic rather than practical in the short-term perspective. Meanwhile, Tehran has embarked on promoting its own regional agenda, implying that the establishment of strategic ties with Yerevan is only a matter of time.

In Washington's re-evaluation of U.S. strategy in the South Caucasus, Iran's engagement could potentially be a contributing factor to diminishing Russia's excessive influence over Armenia. Geopolitical circumstances might lead Iran to work with the West in containing Russia from the southern direction.

Of special importance is the cooperation in the field of energy security. In addition to a pipeline that brings Iranian natural gas into Armenia, has been completed many years ago. Additionally, the two states have also implemented other multimillion-dollar energy projects. These include the construction of two hydro-electric plants on the Arax River that marks the Armenian-Iranian border, a third high-voltage transmission line linking their power grids and dams, among other projects.

In July, 2007, a memorandum was signed on the start of feasibility studies on the ideas of building an Armenian-Iranian railway and a Russian-owned oil refinery that would process Iranian crude. In addition, the Armenian and Iranian governments have been working on a bilateralfree trade agreement that could be signed by the end of 2007.

Former Iranian President Mahmoud Ahmadinejad has been quoted as saying "The Islamic Republic of Iran welcomes and supports the development of ties with Armenia in various areas, particularly in energy as well as transportation, sports, and tourism."

Trade volume between the two countries increased to US$200 million in 2009.Trade relations continue to be strongand to US$300 million by 2014. In 2014, the Iranian and Armenian energy ministers agreed on the construction of a new power transmission line from Armenia to Iran in line with the two country's efforts to boost energy ties. In June 2015, both nations agreed to start building the 3rd power transmission line.[62] It will be completed in 2018. Once the project comes on steam, it will almost triple electricity exchange between the two neighbouring countries.

Armenia and Iran share extensive touristic ties. About 35,000 Iranian tourists visited Armenia in the first half of 2014, of a total of 495,967 tourists that had come to Armenia in the first half of 2014. This showed an increase of 17.3% compared to the same period last year. In 2014, Iran ranked 4th in the largest amount of tourists that visit Armenia, behind Russia (44% of the total number of tourists), Georgia (28%), and the EU (Germany, France, Italy and Scandinavia). As of 2014, Iranian tourists amounted up to 7% of the total number of foreign tourists visiting Armenia.[63]

The number of Iranian tourists visiting Armenia had been steadily on the rise for years, and the two nations have already unveiled plans to sign a memorandum on cooperation in the field of tourism.

Conclusion:

Iran-Armenia economic cooperation has come a long way of development, but has still ways for improvement in several areas. First of all, it is still not fully realized the possibilities of energy cooperation, exchange of technological innovations. In addition, the railway barrier is the lack of economic co-

[62]Haroutiun Khachatrian, "Gas Prices Prompt Armenia to Debate Alliance with Russia", Eurasianet.org, Jan. 29, 2006

[63]Armanian Statsitic Agency, //www.armstat.am

operation between the two countries. Finally, Armenia's economy is still in its development vector to direct the EU and Russia, which does not provide additional ways to search, the field of economic cooperation with the eastern countries, particularly with Islamic Republic of Iran.

Համեդ Միրզայի
Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիա
hamedmirzaey@gmail.com

ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. զբոսաշրջություն, էներգակիրների մատակարարում, տնտեսական ապահովվածություն, համատեղ ձեռնարկություններ

Իրան-Հայաստան տնտեսական համագործակցությունը զարգացման երկար ճանապարհ է անցել, սակայն դեռևս բարելավման հնարավորություններ ունի մի շարք ուղղություններով: Նախ և առաջ, դեռևս լիարժեք չեն իրացվում էներգետիկ համագործակցության հնարավորությունները, տեխնոլոգիական նորամուծությունների փոխանակումները: Բացի այդ, տնտեսական համագործակցության խոչընդոտ է հանդիսանում երկաթուղու բացակայությունը երկու երկրների միջև: Եվ վերջապես, Հայաստանի տնտեսությունը դեռևս իր զարգացման վեկտորը ուղղել է Ռուսաստան և Եվրամիություն, որն էլ հնարավորություն չի ընձեռնում լրացուցիչ ուղիներ որոնելու արևելյան երկրների, և մասնավորապես Իրանի հետ տնտեսական համագործակցության ոլորտում:

Амед Мирзаи
Европейская региональная образовательная академия
hamedmirzaey@gmail.com

ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА ИРАН-АРМЕНИЯ

Ключевые слова: туризм, снабжение энергоносителей, экономическая безопасность, совместные предприятия

Экономическое сотрудничество Иран-Армения прошла долгий путь развития, но есть еще возможности для улучшения в нескольких областях. Прежде всего, все еще не полностью реализованы возможности энергетического сотрудничества, обмен технологическими инновациями. Кроме того, отсутствие железной дороги является серьезным барьером экономического сотрудничества между двумя странами. И, наконец, экономика Армении все еще держит направление вектора развития в сторону ЕС и России, которая не обеспечивает дополнительные возможности для экономического сотрудничества в области поиска новых партнеров из восточных стран, особенно с Ираном.

Գայանե Հակոբյան
Հյուսիսային համալսարան, բանասիրական գիտությունների թեկնածու
h.gayane@list.ru

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ

Հիմնաբառեր. անկախություն, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, Հայաստան-Ադրբեջան հակամարտություն, հայ ժողովրդի հավաքական միասնություն, պատմության նպաստավոր պահ, հռչակագիր:

Հայաստանի անկախ պետականության հռչակումը միանշանակ չընդունվեց հանրապետության ստեղծագործական մտավորականության կողմից: Մի մասն անվերապահ ողջունեց այս իրողությունը՝ այն համարելով հայ ժողովրդի դարավոր իղձերի իրականացում: Եղան և այնպիսիները, որոնք մտահոգություն արտահայտեցին, թե Հայաստանը, դուրս գալով հզոր և միացյալ պետության շրջանակներից, հարկադրված կլինի միայնակ դիմագրավել ժամանակի մար-

տահրավերներին: Վերջիններիս թվում էր նաև Ս. Կապուտիկյանը, որը, ամենևին չտրվելով հեղափոխական անպատասխանատվության էյֆորիային, ամբողջ ծանրությամբ էր պատկերացնում կուտակվող խնդիրների ահագնացումը:

Հասարակական-քաղաքական պայքարի փորձառությունը, պատասխանատվության մեծ զգացումը ժողովրդի ճակատագրի նկատմամբ Կապուտիկյանին մղում են դեպի պայքարի առաջին շարքերը: «Իմ մեջ խոսում է մի զգացում, որը, երևի, նման է զինվորական հրամանատարի զգացածին, երբ նա շրջում է իր ջոկատները՝ ստուգելու նրանց մարտական պատրաստականությունը» [64],- իր ակտիվությունն այսպես է բացատրում 80-ի շեմն անցած բանաստեղծուհին: Սակայն այն ամենը, ինչ տեսնում էր նորանկախ Հայաստանում, նրա համոզմամբ, լի է անկանխատեսելի, ծանր հետևանքներով ամբողջ հայության համար: Գրող Հ. Հովնաթանի այն դիտարկումը, թե «Կապուտիկյանն ապրեց ու գործեց իշխանությունների մեջ ու իշխանությունների հետ անհաշտ եղավ, և միշտ իշխանություն ունեցավ իշխանության մեջ»[65],- բնութագրական է նաև այս շրջանի համար: Առաջին իսկ օրվանից անկախ Հայաստանի ղեկավարների հետ տարաձայնություններ ունենալով՝ Կապուտիկյանը հետագայում առավել կոշտ դիրքորոշում ցուցաբերեց նրանց նկատմամբ՝ պահպանելով խոսքի, մտքի, ճշմարտության իր իշխանությունը[66]:

Վերոնշյալ տարաձայնությունները սկիզբ առան 1989 թ. դեկտեմբերի 1-ից սկսած, երբ միութենական Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշմանը, ըստ որի ԼՂԻՄ-ում վերացվում էր Հատուկ կոմիտեի գործունեությունը, և Լեռնային Ղարաբաղը նորից հայտնվում էր Ադրբեջանի

---

[64] **Կապուտիկյան Ս.,** Վերջին զանգ, էջ 307:
[65] **Կապուտիկյան Ս.,** Չեմ կարող լռել, էջ 433:
[66] **Черепахов М. С.,** Проблемы теории публицистики, с 106.
[66] **Կապուտիկյան Ս.,** Վերջին զանգ, էջ 307:

իրավասության ներքո, արձագանքելու նպատակով Հայաստանի Գերագույն խորհուրդը նստաշրջան էր գումարել: Կապուտիկյանը, որ հրավիրված էր նիստին, անակնկալի է գալիս՝ լսելով Հայաստանի անկախության հռչակման և Ադրբեջանի կազմում գտնվող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանի Հանրապետությանը միացնելու նախաձեռնության մասին: «Նույն ժողովրդի՝ տարիներ շարունակ աքսորական դարձած հատվածը նորից միանում է իր մայր հավաքականությանը, և հոգիների այդ բնական փոխկանչի դեմ հանցավոր ու անվավեր էին թվում այդ կանչը խափանող բոլոր վերադասները, բոլոր կնքված ու հաստատված վճիռները»[67]: Ահա այսպիսին էր պահի կապուտիկյանական գնահատականն ու հուզական ընկալումը, որից միանգամայն տարբերվում էր սույն նստաշրջանի հաջորդ նիստին՝ դեկտեմբերի 2-ին հնչած նրա ելույթը, իր գնահատմամբ՝ «ընդհանուր հոսանքին դիմադիր կանգնելու ամենավճռական քայլերից մեկը»:

Կապուտիկյանը չի թաքցնում իր տարակուսանքն ու դժգոհությունը կատարված «հապշտապ» քայլի վերաբերյալ և խոստովանում է. «Ինձ՝ ստալինյան, բրեժնևյան ահասաստ հանգրվաններով անցած ու մինչև Գորբաչով հասած անձիս համար խորթ էր ոչ միայն «հռչակագիր» բառը, այլև նրա, թվում է՝ գիտաֆանտաստիկ ժանրի պատկանող հռչակումները»[68]: Իհարկե, գրողը չէր կարող անհաղորդ մնալ այդ ոգեշունչ ու հայոց պատմության մեջ բախտորոշ պահի պատճառած հուզմունքին: Ասես մի պահ խլանում է բանականության՝ զգոնության կոչող ձայնը, քանի որ «շատ էր արդար կատարվածը, մարդկության բոլոր օրենքներով բնական և անառարկելի»: Սա երևույթի հուզական ընկալումն էր: Համոզմունքը, որ «քաղաքականությունը հնարավորությունների հաշվառում է», մղում է Կապուտիկյանին հան-

---

[67] **Կապուտիկյան Ս.,** էջեր փակ գզրոցներից, էջ 473:
[68] Նույն տեղում, էջ 472:

դես գալու մի ելույթով, որը, նրա բնորոշմամբ, այդ պահին գուցեև սխալ էր, սակայն բխում էր հետագա աղետները կանխելու մտահոգությունից: Իր ընդդիմադիր դիրքորոշումը Կապուտիկյանը հիմնավորում է այսպես. նախ՝ Հայաստան-Ադրբեջան հակամարտության պայմաններում մեր երկիրը բնավ պատրաստ չէ մենակ՝ առանց ԽՍՀՄ-ի օգնության դիմառնել վտանգներին՝ «կազմակերպված ձևով ուղարկելու մեր զոհվելու պատրաստ զավակներին կռիվ ու արյունահեղության»[69]: Հետո՝ հրաժարվելով Մոսկվայից՝ նշանակում է անհուսորեն մնալ վերջ չունեցող շրջափակման մեջ՝ իր աղետալի հետևանքներով: Այս ամենին գումարվում է նաև երկրաշարժի գոտին, որին Միության տարբեր ծայրերից եկող հսկայական օգնության դադարեցումը, այդ թվում նաև Միության տարածքով արտերկրից մեզ հասնող միջոցների խոչընդոտումը ժողովրդին կենթարկի տնտեսական և ռազմական ճգնաժամային վիճակների, որոնք հարցականի տակ կդնեն մեր ժողովրդի ամբողջական գոյությունը:

Անսահման սիրելով իր հայրենիքն ու ժողովրդին՝ Կապուտիկյանը, բնականաբար, ցավով է ընդունում իր գործունեության ու դիրքորոշման ոչ ճիշտ ընկալումը, սակայն մինչև վերջ էլ մնում է իր համոզմունքներին հավատարիմ՝ տարբեր տարիների բազմաթիվ հրապարակումներում պնդելով իր այս տեսակետները:

Հետաքրքիր են հայ ժողովրդի պատմության այդ շրջանին տրվող կապուտիկյանական գնահատականները: Դեպքերի խառնարանում գտնվելով՝ անչափ դժվար է պատմական դեպքերին գնահատական տալը, երևույթներն արժեվորելը, քանի որ յուրաքանչյուր երևույթ իր ճշգրիտ գնահատականն է ստանում ժամանակի փորձությունների միջով անցնելուց հետո միայն: Կապուտիկյանի գնահատականը, սակայն, չի ուշանում: Շարժման ամենաբուռն պահին, երբ ամենուրեք խոսվում էր հայ ժողովրդի

[69] Նույն տեղում, էջ 476:

հավաքական միասնության մասին, գրողը միանգամայն այլ տեսակետ է հայտնում: Նրա համոզմամբ՝ բազմահազարանոց ցուցարարներին համատեղել էր ոչ միայն ազգային շահն ու բարձր նպատակները. «Դրսում հավաքվածների համար կարևոր էլ չէր, թե ինչ են պահանջում: Պարզապես նրանց մեջ գլուխ էր բարձրացրել վրեժխնդիր լինելու, իրենց նոր ձեռք գցած իրավունքները աշխարհի մեջ այդ ուժեղ, իրավունքավոր մարդկանց վրա բանեցնելու, նրանց ստորացնելու բնազդները: Ժողովուրդը արդեն դարձել էր ամբոխ»[70]: Համարձակ էր այս գնահատականը և ոչ շահեկան հենց Կապուտիկյանի համար՝ հասարակական կարծիքն իր դեմ ուղղելու առումով: Սակայն սա գրողի սկզբունքային տեսակետն էր, քանի որ կանխազգում էր «հետագա անհամար դժբախտություններ», և իր հակադրությունը պատճառաբանում այդ դժբախտությունները կանխելու ցանկությամբ:

Այս ելույթում նա փորձում է հիմնավորել իր տեսակետները և հորդորում սթափ ու հավասարակշռված դիրքորոշում հանդես բերել այսքան լուրջ հարցի նկատմամբ: Ըստ նրա՝ Հայաստանի շրջափակման, արցախյան հակամարտության, հարյուր հազարավոր փախստականների, աղետի գոտու առկայության պայմաններում անկախության գործընթաց սկսելը մեծագույն սխալ է: Նա առաջարկում է Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վերամիավորման մասին որոշումը ներկայացնել դեկտեմբերի 12-ին կայանալիք ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարին՝ դրան կցելով համապատասխան բացատրություններ: Ըստ Կապուտիկյանի՝ սա պետք է արվի ժամանակ շահելու և համաշխարհային հանրությանը մեր միավորման պատճառները բացատրելու, ինչպես նաև կարևոր անելիքները մշակելու համար: Հրապարակախոսն առաջարկում է հրավիրել համահայ-

[70] Նույն տեղում, էջ 480:

կական վեհաժողով՝ Սփյուռքի բոլոր շրջանակների մասնակցությամբ, և համախմբվելով, հանգելու ընդհանուր մի որոշման, որից հետո անցկացնել հանրաքվե՝ ճշտելու համար հետագա քայլերն ու քաղաքական կողմնորոշումները: «Թող ինձ համարեն… պահպանողական, միայն թե ինձ հաջողվի իմ այս ելույթով փոքր-ինչ օգնել պահպանելու մեր ժողովրդի կյանքը, մեր այս մի բուռ հողակտորի անվտանգությունը, հողակտոր, որը միայն մերը չէ, այլ ողջ աշխարհասփյուռ հայությանը, միայն մեր սերնդինը չէ, այլ բոլոր գալիք սերունդներինը…»[71],- ավարտում է խոսքը Կապուտիկյանը:

Բնականաբար, ելույթի արձագանքները նրա օգտին չէին. դահլիճը նրա խոսքը սառնությամբ է ընդունում, իսկ շենքը շրջապատած բազմությունը ելույթի ընթացքում «դավաճան», «ազգադավ», «իջիր ամբիոնից» բառերով փորձում է լռեցնել գրողին: Հրապարակախոսը, սակայն, համոզված է, որ ինքը կատարել է քաղաքացիական պարտքը՝ անկեղծորեն շարադրելով իր դիրքորոշումը: Ի դեպ, իր տեսակետները հրապարակախոսը հստակ ու սեղմ շարադրում է նախընտրական ծրագրում (1990 թ. մայիսին կայանալիք Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություններում կոմկուսը առաջադրել էր նաև Կապուտիկյանի թեկնածությունը), որում Հայաստանի ապագան տեսնում էր Խորհրդային Միության կազմում, և կարծում էր, որ ի թիվս այլոց, Հայկական Հանրապետությունն էլ պիտի վայելի իսկական ինքնուրույնություն, զարգացնի իր տնտեսությունը, գիտությունն ու մշակույթը, միշտ մտի ունենալով մի օր, պատմության նպաստավոր մի դարձակետի՝ անկախ ու միացյալ հայրենիք ունենալու գաղափարը: Այստեղ բնավ պատահական չէ «պատմության նպաստավոր պահ» արտահայտությունը. հրապարակախոսը մինչև վերջ էլ մնաց այն համոզմունքին, որ մեր 3-4 հազար տարվա պատմության

[71] Նույն տեղում, էջ 478:

ընթացքում Հայաստանի անկախության հռչակման համար ընտրվեց ամենից անհարմար, ամենից աղետալի պահը: Կապուտիկյանը խստագույնս քննադատում է նաև անգլիական դիվանագիտական զինանոցից վերցրած այն օրերին շրջանառվող «չկան մշտական թշնամիներ և մշտական բարեկամներ, կան ազգային շահեր» արտահայտությունը, որով այնօրյա իշխանավորները հիմնավորում էին իրենց հակառուսական կոշտ դիրքորոշումն ու Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ մշակելու քաղաքականությունը:

Կապուտիկյանը խոստովանում է, որ ինքը հոգով ու մտքով միշտ էլ ընդդիմացել է Ռուսաստանի կազմից դուրս գալու պահանջին. «Ես... տասնամյակներ շարունակ այն բարդույթն եմ ունեցել, որ եթե վրա հասնի մի նոր 17 թիվ, և հանրապետություններն անջատվեն Կենտրոնից, ապա բոլոր մյուսների համար հրաշալի կլինի, իսկ Հայաստանի համար... աղետավոր»[72]: Հրապարակախոսը կանխանշում էր բազում աղետներ, որոնք կարող էին պատահել Հայաստանին՝ պայմանավորված մեր երկրի աշխարհաքաղաքական դիրքով: Նա մեջբերում է Ավ. Իսահակյանի այն տեսակետը, որի համաձայն հայի ֆիզիկական գոյությունը բարձր է իր անկախությունից: Թերևս այդ պատճառով էլ նա բնավ խանդավառությամբ չի ընդունում նորընտիր Գերագույն խորհրդի 1990 թ. օգոստոսի 23-ի նստաշրջանում ընդունված հռչակագիրը, որի համաձայն Հայկական ԽՍՀ-ը վերանվանվում է «Հայաստանի Հանրապետություն», Հայաստանը դուրս է գալիս Խորհրդային Միության կազմից, վերականգնվում է 1920 թվականին ընդհատված հայկական պետությունը, դրանով իսկ սկսվում է անկախության գործընթացը:

Պատմական այս պահին հաջորդած ժամանակաշրջանում Կապուտիկյանի բոլոր ելույթներում, զեկու-

[72] Նույն տեղում, էջ 512:

ցումներում ու հարցազրույցներում, Ղարաբաղյան հիմ-նախնդրի, երկրում տիրող սոցիալ-քաղաքական բազում խն-դիրների քննադատությանը գումարվում է ևս մեկը՝ Հայաստանում «վաղաժամ» անկախություն հռչակելու՝ նոր ղեկավարների «անհեռատես» քաղաքականության քննադատությունը: Նրա տագնապն ավելի է խորանում օգոստոսի 21-ի ռուսաստանյան խռովությունից («պուտչ») հետո. գրողի համոզմամբ՝ Ռուսաստանի անկայուն դրութ-յունը կարող է փորձություններ բերել նաև Հայաստանին, հետևաբար ավելի անհրաժեշտ է Հայաստանում հեռատես քաղաքականություն վարել: Մինչդեռ «մեր նոր ղեկա-վարները, «անկախության գործընթաց» միայն տեսա-կանորեն ձևակերպած, հարթ ու սահուն բառերը ամեն քայ-լափոխի կրկնելով, քայլում էին ու իրենց ետևից քայլեցնում ժողովրդին՝ հստակ չպատկերացնելով դեպի ու՞ր և ինչ-պես…»[73]:

Կապուտիկյանն իր մտահոգություններն ու համոզ-մունքները անկախության գործընթացի նկատմամբ մեկ անգամ ևս բարձրաձայնում է 1991թ. մարտի 14-ի մի հեռուս-տաելույթի ժամանակ: Ի զարմանս գրողի՝ նրան հրավիրում են զրույցի՝ «մազե կամրջով անցնելիք նյութի՝ անկախության շուրջ»: Կապուտիկյանը պնդում է իր տեսակետը, որ մենք «ազատ չենք ընտրելու ազատության այս տարբերակը» և իր դիրքորոշումը բացատրում Հայաստանում ու ԼՂԻՄ-ում ստեղծված ծանր կացությամբ՝ խորհուրդ տալով բոլորին՝ ժողովրդից մինչև ղեկավարություն, զգաստանալ ու անկա-խության հանրաքվեի օրը թույլ չտալ ճակատագրական սխալ: Հրապարակախոսը մեկ անգամ ևս հիշեցնում է, որ Հայաստանը համայն հայության հայրենիքն է, և մենք պար-տավոր ենք հաշվի առնել նաև սփյուռքահայության կարծիքը խնդրի վերաբերյալ: Հաղորդումը, Կապուտիկյանի բնորոշ-

[73] Նույն տեղում, էջ 568:

մամբ, ստացվում է «հակաանկախական», որի համար հաղորդավարը տույժի է ենթարկվում[74]:

Այդ շրջանում գրած մի շարք բանաստեղծություններ հնչում են որպես պատասխան իր դեմ ուղղված մեղադրանքներին: «Տագնապ», «Հայաստանը կերտող նվիրյալներին», «Ներհակություն» բանաստեղծություններում իր ժողովրդի ճակատագրի հանդեպ բանաստեղծուհու խոր մտահոգությունը կա, սխալվելուց, սայթաքելուց ժողովրդին ետ պահելու մեծ ցանկությունը: Այն նաև գրողի հոգևոր երկվության, ինքնակեղեքման հասցնող կասկածի արտահայտությունն է.

Տա Աստված, որ ես, որ ես սխալվեմ,
Որ դու անխափան հասնես քո լեռին,
Իրավ, իրական ոտքիդ տակ փռվեն
Պտղած դաշտերը քո երազների:

Որ ազատության շունչը կենարար
Քեզ նոր հարության առավոտ բերի.
Այնժամ, երկիր իմ, մեծասիրտ իմ մայր,
Սխալված որդուդ կրկնապես ներիր…

Նկատենք, որ և՛ Ղարաբաղի խնդրի արդարացի լուծման, և՛ Հայաստանի անկախացման եղանակների ու մջջոցների վերաբերյալ հոգեկան երկփեղկվածությունը, բանականության ու զգայականության չդադարող ներքին պայքարը շարունակվեց հրապարակախոսի ամբողջ կյանքում, անգամ երբ Անկախության օրվանից անցել էր արդեն 15 տարի: Այդ պայքարի մի արտահայտությունը դրսևորվեց 1991 թվականի աշնանը՝ անկախության հանրաքվեի նախօրյակին: Սեպտեմբերի 21-ին Սիլվա Կապուտիկյանը Հայաստանում չէր: Տարիներ հետո՝ հարցազրույցներից մեկի

[74] Նույն տեղում, էջ 574:

ժամանակ, գրող-հրապարակախոսը ասում է. «Պատկերացրու իմ հոգեվիճակը. ամբողջ գիտակցական կյանքդ նվիրես հայրենիքին, հայության գաղափարին, նրա լեզվի, նրա ինքնության հաստատմանը և…այսպիսի մի բախտորոշ պահի գտնվես այդ ամենից հեռու, մի տեսակ ինքնաքսորումի մեջ»[75]: Այդ յուրօրինակ «ինքնաքսորումը» Կապուտիկյանը բացատրում է նրանով, որ «քվեաթերթիկը վերցնելիս ձեռքս չէր գնա գիծ քաշել «անկախություն» բառի վրա, իսկ ձայն տալ մեր հողին պայթելիք մի նոր երկրաշարժի օգտին, նույնպես չէի կարող» [76] : Այս խոսքերը լավագույնս բնորոշում են հատկապես ավագ սերնդի մտավորականների մտավախությունը անկախության գործընթացի նկատմամբ:

Այդ շրջանի ելույթներում Կապուտիկյանը, ի թիվս այլ հարցերի, դատապարտում է նաև սերունդների ժառանգականության դեմ ընդվզելու, անցյալը լիովին ժխտելու, խորհրդային տարիների ձեռքբերումները փնովելու համատարած մտայնությունը, որ տիրում էր անկախության առաջին շրջանում: Ըստ այդմ՝ նրան մեղադրում էին, թե իդեալականացնում է խորհրդային կարգերը:

1990 թ. Հայկոմկուսի 29-րդ համագումարում հնչեցրած ելույթում Կապուտիկյանը հանգամանորեն ներկայացնում է իր մտահոգությունները՝ այս և նմանօրինակ մի շարք այլ խնդիրների վերաբերյալ: Ընդունելով հանդերձ խորհրդային կյանքի 70 տարիների ընթացքում եղած բռնություններն ու անբարո երևույթները՝ Կապուտիկյանը միաժամանակ անընդունելի է համարում 70 տարվա մեջ միայն եղծություն ու ավերմունք տեսնելու քարոզչությունը, «տաշտակից ջրի հետ միասին երեխային դուրս նետելու քաղաքականությունը»: Ըստ նրա՝ դա նշանակում է զրկել մեր ժողովրդին այդ ժամանակներում ստեղծած ազգային արժեքներից, անդամա-

---

[75] **Կապուտիկյան Ս.,** Չեմ կարող լռել, էջ 391:
[76] **Կապուտիկյան Ս.,** Էջեր փակ գզրոցներից, էջ 577:

հատել մեր պատմական հիշողությունը, վարվել ճիշտ այնպես, ինչպես 20-ական թվականներին վարվեցին բոլշևիկները: Հրապարակախոսը նորընտիր ղեկավարությանը կոչ է անում համախմբել բոլոր կարող ուժերին՝ անկախ կուսակցական պատկանելությունից՝ հաղթահարելու երկրում տիրող ճգնաժամը:

Կապուտիկյանը հաջորդ ելույթն ունեցավ 1991 թ. ապրիլին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովում. այն առանձնանում է իշխանություններին ուղղված սուր քննադատությամբ: Նա անդրադառնում է հետխորհրդային շրջանում սկիզբ առած արատավոր երևույթներին՝ գների առասպելական աճ, նյութական ու հոգեկան անելանելի պայմաններ, որոնց ծանրությունն իրենց մաշկի վրա առավելագույնս զգում են փախստականներն ու աղետի գոտու բնակչությունը, երկրում թափ առած կամայականություններ, ավանդական կուսակցությունների գործունեությանը խոչընդոտելու փորձեր, մամուլը սեփական նկրտումներին ծառայեցնելու քաղաքականություն, գիտության, մշակույթի օջախների և ընդհանրապես գիտության, գրականության, արվեստի գործիչների հանդեպ անփույթ վերաբերմունք, ծայրահեղ մերժողական մոտեցում օտար լեզուների ու օտար արժեքների նկատմամբ, և այս ամենի արդյունքում՝ հասարակության ներքին փլուզում, հուսալքություն, սոցիալական բևեռացում:

Լինելով անսահման լավատես, հավատալով իր ժողովրդի հավաքական ուժին, արարելու նրա կամքին՝ «Վերջին զանգը» ժողովածուում, սակայն, գրողի հոդվածներում ավելի ու ավելի հաճախ են հնչում հուսահատության ու հիասթափության շեշտեր: «Պահեր են լինում, որ ուզում ես գլուխդ առնել-փախչել այս ցինիզմից, այս բարոյազրկությունից… Անտանելի է ապրել այսպես՝ կողմնորոշումը շփոթած, ու՞մ հավատալ, որի՞ հետ հույս կապել, որտե՞ղ է այն Նոյը, որը փոթորկոտ ջրերից կհանի մեզ դեպի Արարատ…Առավոտները զարթնում եմ՝ հոգուս վրա ինչ-որ

անբռնելի մշուշ ու ծանրություն, ասես մի շատ մոտիկ մարդ եմ կորցրել, ինչ-որ մեծ, անփոխարինելի մի բան: Չեմ ուզում անկողնուց վեր կենալ, շարունակելու այս երկար, ծգվող-ծգծգվող կյանքը»[77]:

Այս խոստովանությունը անհարիր է Կապուտիկյանի խառնվածքին: Նա, որ մշտապես լավատեսության, հավատի սերմեր է սփռել, և որի համոզմամբ մտավորականը «իր ժողովրդի հավերժությանը չհավատալու իրավունք չունի», ասես հենարան է փնտրում, որին ապավինելով կարողանար ապրել ու ստեղծագործել: Եվ այդ հենարանը դարձյալ իր ժողովուրդն է, անսահման, անպարագիծ սերն ու նվիրումը նրան, դժվար պահերին օգնելու, ճգնաժամից դուրս բերելու ցանկությունը: 8 տասնամյակը բոլորած բանաստեղծուհին, հակառակ վատառողջությանն ու հոգեկան փլուզումներին, շարունակում է մասնակցել տարբեր միջոցառումների, հավաքների, տարելիցների, ելույթներ է ունենում, մջջնորդագրեր գրում, և, ինքն էլ ունենալով հավատի պակաս, շարունակում է հույս ու հավատ ներշնչել մարդկանց, հոգեպես սատարել՝ ամեն կողմից նրանց վրա եկող բարոյական ու նյութական հարվածները դիմագրավելու, ապրելը շարունակելու համար:

«Վերջին զանգ» գրքի վերջին հոդվածը վերնագրված է «Տա Աստված, որ ես սխալ դուրս գամ»: Մի քանի էջի սահմաններում Կապուտիկյանն արտահայտում է մեր ժողովրդի ներկայի ու ապագայի վերաբերյալ իր մտորումներն ու տագնապները: Եվ թեպետ իր գործունեության ամբողջ ընթացքում հրապարակախոսի յուրաքանչյուր բողոք ու ընդվզում միշտ հիմնավորված է եղել, անաչառությունն ու անկողմնակալությունը՝ կյանքի սկզբունք, այնուհանդերձ, նա պատրաստ է ընդունելու, որ իր դիրքորոշումն ու պատկերացումները հայոց հետխորհրդային շրջանի վերաբերյալ ճիշտ չէին, միայն թե. «…Հայաստանի 3-

[77] Նույն տեղում, էջ 306:

րդ հանրապետությունը այնքան զորանա ու ամրապնդվի, դառնա հիրավի ազատ ու անկախ, այնքան փարթամ ու բերքառատ լինեն հայ ժողովրդի երազների պտղած դաշտերը, որ ես, այնուամենայնիվ, սխալ դուրս գամ և ներողություն խնդրեմ իմ սխալմունքի համար»[78]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ս. Կապուտիկյանը, բարձր գնահատելով խորհրդային տարիներին հայ ժողովրդի ձեռքբերումները տարբեր ասպարեզներում, չէր կարող անվերապահորեն ընդունել ԽՍՀՄ փլուզումն ու զինված ճանապարհով անկախության հասնելու գաղափարը: Գրողի մտահոգված էր, թե արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը ի վիճակի կլինի միայնակ հաղթահարել ժամանակի բոլոր փորձությունները: Հրապարակախոսի ընդդիմությունը ուղղված չէր անկախության գաղափարին, նա պարզապես փորձել է կանխարգելել հնարավոր վտանգավոր հետևանքները՝ նպատակ ունենալով իր ժողովրդին զերծ պահել ցնցումներից ու աղետներից:

Акопян Гайане
к. ф. н., преподаватель в Северном университете

ВОСПРИЯТИЕ НЕЗАВИСИМОСТИ КАПУТИКЯНА

Ключевые слова: независимость, Автономная область Нагорного Карабаха, Армяно-Азербайджанский конфликт, национальное единство армянского народа, благоприятный момент истории, декларация.

Сильва Капутикян, высоко оценивая достижения армянского народа в разных аспектах в советские времена, не могла безоговорочно принять распад Советского союза и

[78] Նույն տեղում, էջ 452:

приобретение независимости путем оружия. Писательницу беспокоило, в состоянии ли Армения самостоятельно преодолеть все препятствия времени? Противостояние публициста не было направлено на идею независимости, она просто сделала попытки предотвратить возможные опасные последствия, имея цель предостеречь свой народ от потрясений и бедствий.

Hakobyan Gayane
PhD, lecturer at Northern University

The Perception of Independence of Kaputikyan

Key words: independence, The Autonomous Region of Nagorno-Karabakh, Armenian-Azerbaijani conflict, national unity of the Armenian people, auspicious moment of history, the declaration.

S. Kaputikian, highly appreciating the achievements of the Armenian people in different aspects in the Soviet times, could not unconditionally accept the dissolution of the Soviet Union, and the acquisition of independence by arms. The writer was worried: is Armenia able to independently overcome all the obstacles? Her opposition was not directed at the idea of independence, she simply made attempts to prevent potentially dangerous consequences,with the purpose to warn his people against shocks and disasters.

Խալաթյան Հ.Ա.
Հյուսիսային համալսարանի դասախոս
harutyun.khalatyan@gmail.com
Բարսեղյան Գ.Ս.
gayane.barseghyan.1988@mail.ru
ՀՊՄՀ, հայցորդ

ՀՀ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Հիմնաբառեր. աշխարհագրական դիրք,տրանսպորտի ճյուղեր, տնտեսական գործոն, տնտեսաաշխարհագրական դիրք:

Հայտնի, որ ՀՀ-ն զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի Հյուսիսարևելյան տարածքի ոչ մեծ մասը: Ներկայումս միայն ՀՀ տարածքը կազմում է 29742 քկմ: Գտնվելով հյուսիսային լայնության 38.5-41.18 աստիճանների և արևելյան երկայնության 43.3 և 46.37 աստիճանների միջև, այս երկիրն ունի մի շարք առավելություններ: Պատմական անցյալում Հայաստանի աշխարհագրական դիրքը շատ նպաստավոր է եղել և կարևոր դեր է խաղացել նրա տնտեսության զարգացման գործում, քանի որ Հայաստանի տարածքով են անցել միջազգային նշանակության առևտրական ճանապարհներ:

Ընդհանուր առմամբ, երկրների տնտեսական արագ զարգացման վրա իր ազդեցությունը թողնում է աշխարհագրական դիրքը: Ներկայիս Հայաստանը հեռու գտնվելով ծովերից և նավարկելի լճերից ու գետերից, զրկված է արտաքին հաղորդակցության՝ ներկայումս ամենաշահավետ և էժան միջոցներից օգտվելու ուղղակի հնարավորությունից, ինչը բացասաբար է անդրադառնում, հատկապես բեռնափոխադրումների ապահովության և ծավալների մեծացման վրա: ՀՀ-ն աշխարհագրական դիրքն ունի իր բացասական ազդեցությունը տնտեսության զարգացման վրա: Բնականա-

բար, չունենալով ելք դեպի համաշխարհային օվկիանոս, չորս հարևաններից երկուսի հետ փակ սահմաններն իրենց ազդեցությունն են թողել, և թողնում երկրի տնտեսության ճյուղային կառուցվածքի զարգացման վրա: Կարևոր է նաև այն, որ Հայաստանը հեռու է գտնվում տնտեսապես զարգացած երկրներից, հզոր տնտեսական շրջաններից:

Անդրկովկասը, գտնվելով աշխարհաքաղաքական օջախներից մեկում, ստեղծում է նոր իրավիճակ, որով էլ ընդհանուր առմամբ կամ մասնակիորեն պայմանավորվել է երկրի տնտեսական դանդաղ աճը: Իհարկե, կան նաև այլ խնդիրներ: Չնայած բազմաթիվ մարտահրավերներին, Հայաստանն անկախությունից հետո արձանագրել է տնտեսության վերականգման տպավորիչ ցուցանիշներ: Հայաստանի նման երկրի տրանսպորտի զարգացման համար կարևոր են տրասնպորտային ծախսերը և միջսահմանային հաղորդակցումը:

Ընդհանուր առմամբ Հայաստանի տրանսպորտի զարգացման վրա լուրջ ազդեցություն ունեն մի քանի գործոններ, որոնցից են.

- Միջազգային սահմաններից երկուսի փակ լինելը (Թուրքիա և Ադրբեջան): Բնականաբար փակ սահմանների պարագայում աճում են տրանսպորտային ծախսերը, կրճատվում միջազգային առևտրի հնարավորությունները,խախտվում է նյութատեխնիկական բազան և այլն:
- Որպես լեռնային երկիր, Հայաստանի մակերևույթը՝ ռելիեֆը, խիստ կտրտված է լեռնահովիտներով, գետահովիտներով, կիրճերով, բացի սրանից, պետք է նշել նաև այն, որ ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը բացասական ազդեցություն է թողնում արտադրողական ուժերի տեղաբաշխման, հետևաբար նոր ճանապարհների կառուցման վրա: Ուստի պետք է կատարել հանրապետության տարածքի ռելիեֆային առանձնահատկությունների տնտեսական բազմակողմանի գնահատում:

- Հայաստանի խիստ մայրցամաքային կլիման նույնպես իր ազդեցությունն է թողնում տրանսպորտի զարգացման վրա: Այսպես, ձմեռային շրջանի շատ ցածր ջերմաստիճանները և ձնառատ տեղումները սահմանափակում են տնտեսական գործունեությունը:

Վերը նշված խնդիրների հետևանքով մեծանում են տրանսպորտային ծախսերը, մասնավորապես առևտրի առարկա հանդիսացող ապրանքների դեպքում, իսկ այս պարագայում էլ մեծանում է ծախսը՝ կապված ենթակառուցվածքների զարգացման և պահպանման հետ:

Քննարկելով ՀՀ աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները, պետք է փաստել, որ այն նոր մարտահրավերներ է նետում տրանսպորտի ճյուղային կառուցվածքի հեռանկարային զարգացման և բարեփոխումների վրա: Բեռնատար տրանսպորտը, լինելով նյութական արտադրության երրորդ բնագավառը՝ արդյունաբերությունից և գյուղատնտեսությունից հետո, թեպետ արտադրանք չի թողարկում, սակայն անհնար է առանց դրա տնտեսության մեջ կանոնավոր գործունեության կատարել: Տրանսպորտի միջոցով հումքը հասցվում է կամ տեղափոխվում է սպառողներին, կապ է հաստատվում արտադրության ճյուղերի, բնակավայրերի, երկրների միջև:

Հետևաբար, տրանսպորտի համակարգում ստեղծվում է նոր արժեք, որն առաջանում է տեղափոխման ծախսերի հետևանքով, ահա թե ինչու այս ճյուղը նույնպես համարվում է նյութական արտադրության բնագավառ: Հայաստանի ներկայիս տարածքում ժամանակակից տրանսպորտային ուղիների կառուցումը սկսվել է 19-րդ դարի վերջերից՝ կապված երկաթուղու կառուցման հետ: Իսկ 1920-ական թվական-

ներից սկսած ստեղծվում են նոր ճանապարհներ, ժամանակակից ավտոմայրուղիներ և այլն:[79]

Քննարկելով Հայաստանի տրանսպորտի ներկայիս վիճակը պետք է փաստել, որ երկաթուղային տրանսպորտը վճռորոշ դերակատարում ունի ամբողջ համակարգում: Երկաթուղու կառուցումն առաջին հերթին շատ կարևոր դեր խաղաց Հայաստանի տնտեսական զարգացման համար, որը հնարավորություն տվեց ընդլայնել Հայաստանի առևտրատնտեսական կապերը:

Երկաթուղու շինարարության աշխատանքները նոր թափ առան խորհրդային կարգերը հաստատվելուց հետո: Մասնավորապես, մեծ դեր խաղաց Գյումրի-Արթիկ-Պեմզաշեն երկաթգիծը, որի միջոցով հանրապետության մյուս շրջաններ էր տեղափոխվում Արթիկի և Պեմզաշենի տուֆաքարը:

Պետք է նշել, որ Հայաստանի երկաթուղային ցանցը զգալիորեն ընդլայնվեց 1940-ական թվականների վերջերից: Նշանակալի դեր խաղաց նաև Երևան-Հրազդան-Սոթք երկաթգծի կառուցումը, որը հետագայում շարունակվեց մինչև Դիլիջան-Իջևան-Աղստաֆա (վերջինս գտնվում է Ադրբեջանի տարածքում), ներկայումս Իջևան-Աղստաֆա գիծը չի գործում՝ կապված աշխարհաքաղաքական խնդիրներով և Ադրբեջանի կողմից սահմանի փակ լինելով: ԽՍՀՄ ժամանկահատվածում Խորհրդային Հայաստանի համար երկաթուղային տրասնպորտի աշխատանքների կատարելագործման բնագավառում կարևոր դեր խաղաց դրա էլեկտրիֆիկացումը:

ԽՍՀՄ փլուզումից հետո նորանկախ Հայաստանում 1991 թվականին ստեծվեց <<Հայկական երկաթուղի>> ՓԲԸ-ն:

---

[79] Ս.Մելքումյան <<ՀՀ և ԼՂՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն>>, Ե. 2007

որը մինչև անկախությունը հանդիսանում էր Անդկովկասյան երկաթուղու մաս, և որի կենտրոնական գրասենյակը գտնվում էր Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում՝ ընդգրկելով Ադրբեջանի և Վրաստանի ցանցերը:[80] Արցախյան գոյապայքարի ժամանակ Ադրբեջանի կողմից սահմանի միակողմանի փակ լինելը Հայաստանի տնտեսությունը թուլացնելու գլխավոր ճանապարհն էր, որը մինչև այժմ շարունակվում է: Բնականաբար, նման աշխարհագրական դիրքով Հայաստանն արտաքին աշխարհի հետ կապնվելու երկու ճանապարհ ունի՝Վրաստանի և Իրանի միջոցով: Վերջինիս հետ կապերը գնալով ավելի են խորանում: ՀՀ և ԻԻՀ տնտեսական կապերի հետագա զարգացումն և խորացումը ենթադրում է նաև արտադրության մասնագիտացում և կոոպերացում, որը հնարավորություն է տալիս ստեղծել զանգվածային արտադրություն որևէ նեղ ճյուղում, առավել արդյունավետ օգտագործել յուրաքանչյուր երկրի բնական և աշխատանքային ռեսուրսները, կոոպերացնել երկու երկրների արդյունաբերական հզորությունները: Ներկայումս Հայաստանի և Իրանի միջև երկաթուղային տրանսպորտի միջոցով կապ չկա:

Քանի որ միակ ճանապարհն անցնում է Նախիջևանի ԻՀ տարածքով (բռնակցված է Ադրբեջանին), բնականաբար այն չի գործում: Հայաստանի համար կենսական նշանակություն ունի երկաթուղու կառուցումը ՀՀ և ԻԻՀ միջև: Այդ շինարարության ընդհանուր արժեքի մոտ 60%-ը կարելի է ստանալ ՉԺՀ-ից (Չինաստանի Արտահանման-ներմուծման բանկից՝տարեկան 3.5%-ով): Նախագծի արժեքը նախնական տվյալներով գնահատվում է մոտ 3.5 մլրդ դոլար, և երկաթուղու նախագիծը մշակել է Չինաստանի շինարարության և հաղորդակցության միջազգային ընկերությունը (CCCC

[80] www.adb.org

International):[81] Այս կենսական նշանակության երկաթուղու երկարությունը կկազմի մոտ 300 կմ, որի ենթակառուցվածքում կներառվեն 19.4կմ ընդհանուր երկարությամբ 64 կամուրջներ, 102.3կմ երկարության 60 թունել և 27 կայան: Ըստ կանխատեսումների բեռնափոխադրումների ծավալը կկազմի տարեկան մոտ 25 մլն տ: Ակնհայտ է, որ այս երկաթուղու կառուցումով ՀՀ-ն հնարավորություն կստանա իրանական երկաթուղային ցանցի օգնությամբ դուրս գալ <<լայն աշխարհ>>, մասնավորապես դեպի Պարսից ծոց, Հնդկաստան, Միջին Ասիա, Չինաստան և այլն, ինչպես նաև կարող է ընդհանրապես բացառել իր տրանսպորտային հավանական շրջափակումները:

Հատկանշական է նաև այն փաստը, որ երկաթուղու միջոցով է կատարվում միջազգային բեռնափոխադրումների մոտ 65%-ը: 1991թ.-ի անկախությունից հետո երկաթուղային համակարգի գործառնությունները կրճատվել են ավելի քան 10-ն անգամ,բնականաբար Թուրքիայի և Ադրբեջանի կողմից շրջափակված լինելու պատճառով: Բեռնափոխադրումների ծավալների կրճատումն ունի նաև մեկ այլ պատճառ, դա երկաթուղու վրա հիմնված ուղորտների կտրուկ անկումն է, ինչպես նաև ավտոռճանապարհային ցանցի բարելավումը և բեռնատար ավտոմեքենաների կողմից խիստ մրցակցությունը:

Ավտոմոբիլային տրանսպորտը ՀՀ տնտեսության զարգացման հարցում ունի իր առանձնահատուկ դերն ու նշանակությունը: Այն ունի 3 պատճառ.

1. Ադրբեջանի և Թուրքիայի հետ եղած փակ սահմաններն են:
2. Վրաստանով անցնող երկաթուղին լիարժեք չի օգտագործվում (վրաց-աբխազական սահմանին տիրող իրավիճակով):

[81] www.arka.am 15.07.2015

3. Երկաթուղային ցանցի մաշվածությունն է:

Ավտոմոբիլային տրանսպորտի դերի բարձրացումը պայմանավորվում է նրանով, որ ՀՀ տարածքի մեծ մասն ընդգրկված չէ երկաթուղու սպասարկման ոլորտում կամ զգալիորեն կտրված է դրանից: Հայաստանում ավտոտրանսպորտի զարգացումը սկսվել է 1920-ական թվականներից, իսկ խորհրդային տարիներին վերակառուցվեցին բոլոր գրունտային ճանապարհները, կառուցվեցին բարեկարգ և ասֆալտապատ ճանապարհներ:

Հայաստանի տրանսպորտային բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում ավտոտրանսպորտը նախկինում զբաղեցնում էր երկրորդ տեղը՝ երկաթուղային տրանսպորտից հետո: Ավտոտրանսպորտն ունի մեծ նշանակություն հատկապես Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի մարզերի համար, քանի որ այդ մարզերում դեռևս երկաթուղի չի անցնում: 1990-ական թվականների սկզբներից ավտոտրանսպորտի բեռնաշրջանառությունը նույնպես խիստ կրճատվել է՝ կապված Ադրբեջանի կողմից մեր հանրապետության շրջափակման, հետևաբար՝տնտեսական անկման հետ (տե՛ս աղյուսակ 1), սակայն պետք է նշել, որ տարիների ընթացքում ավտոմոբիլային տրանսպորտի դերը գնալով մեծացել է: Ներկայումս հանրապետության կարևոր ավտոմայրուղիներն են Երևան-Սևան-Դիլիջան-Իջևան, Երևան-Արտաշատ-Արարատ-Վայք-Ջերմուկ-Սիսիան - Գորիս: Բարձրակարգ ավտոմայրուղին կապում է Գորիսը Շուշիի հետ Բերձորով, ապա այն շարունակվում է Ստեփանակերտ: Այս բարձրակարգ ավտոմայրուղին կառուցվել է <<Հայաստան>>համահայկական հիմնադրամի կողմից:

Աղյուսակ 1

Տարեթիվ	Բեռնաշրջանառությունը (մլն տ/կմ)	Ուղևորաշրջանառությունը (մլն ուղևոր/կմ)
2010	3091.5	3937.8
2011	3581.7	3631.3
2012	4155.8	3471.1
2013	4101.7	2853.5
2014	4168.3	3008.5
2015	3744.0	2525.0

Ավտոմոբիլային տրանսպորտի կայուն զարգացման համար կարևոր նախադրյալ է հանդիսանում <<Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը>>, որն ՀՀ կառավարությունն իրականացնում է Ասիական Զարգացման բանկի հետ համատեղ: Այս խոշոր ենթակառուցվածքային ծրագրի նպատակն է, ՀՀ տնտեսաաշխարհագրական դիրքից ելնելով վերակառուցել 556կմ երկարությամբ Մեղրի-Երևան-Բավրա ավտոճանապարհը: Այս ծրագիրն իր հերթին շատ մեծ նշանակություն ունի ՀՀ տրանսպորտային համակարգի և ընդհանրապես տնտեսության համար: Ծրագրի հաշվարկային արժեքը գնահատվում է մոտ 1,5 մլրդ դոլար: Ծրագիրը տալիս է լայն հնարավորություն խթանելու տնտեսության տարբեր ճյուղերի թողարկած արտադրանքի արտահանմանը, ինչպես նաև կարող է ակտիվացնել բնակչության ներքին շարժերը:

Խողովակաշարային տրանսպորտը Հայաստանում սկսել է զարգանալ 1960-ական թվականների սկզբին: Դեռևս ԽՍՀՄ ժամանակ Հայաստանը գազը ստանում էր Ադրբեջանից՝ Ղազախ-Երևան գազամուղով: Հետագայում կառուցվեց նոր գազամուղ՝ Վրաստանից դեպի Ադրբեջան, ապա Հայաստան:

Սակայն ԽՍՀՄ փլուզումը և Ադրբեջանի հետ պատերազմական դրությունը ստեղծեցին մի իրավիճակ, որով Հայաստանը ձեռնամուխ եղավ կառուցել նոր գազամուղ դեպի Վրաստան: Այժմ Հայաստանն այդ գազամուղով գազ է ներմուծում ՌԴ-ից: Հայաստանի տնտեսական կյանքի համար կարևոր նշանակություն ունի Իրան-Հայաստան գազատարը: Որի բացումը տեղի ունեցավ 2007թվականի Մարտի 19-ին: Սկզբնական շրջանում գազատարով մատակարարվել է 1.1 մլրդ խորանարդ մետր իրանական գազ, սակայն պետք է նշել, որ 2019 թվականից այդ ծավալը պետք է հասնի 2.3 մլրդ. խորանարդ մետրի:

Ընդհանրապես, Հայաստանի համար այժմ գազամուղն այն հիմնական տրանսպորտային միջոցն է, որով ներմուծվում է հանրապետության համար վճռական դեր խաղացող վառելիքը: Իսկ վերջինով պայմանավորված է նաև հանրապետության ջերմաէներգետիկ տնտեսության գործունեությունը:

Ըստ իր աշխարհագրական դիրքի, Հայաստանը գտնվում է աշխարհաքաղաքական շահերի բախման կենտրոններից մեկում: Հետևաբար, այս կամ այն կերպ առնչվում է նաև մերձկասպյան էներգառեսուրսների բաշխման հետ: Պետք է փաստել, որ այստեղ ձևավորվել է 2 առանցք, մեկը՝ էներգահումք արտադրող և դրանք սպառող երկրներն են, իսկ մյուսը՝ տարանցիկ երկրների խումբն է:

Հատկանշական է նաև այն փաստը, որ եթե Իրան-Հայաստան գազատարն Իրանի համար ունի ընդամենը տեղայնական նշանակություն, ապա Հայաստանը դրանով լուծում է իր գազի սպառման աղբյուրների բազմազանեցման խնդիրը: Սակայն հնարավոր է, որ Հայաստանը դառնա իրանական գազը Եվրոպա արտահանող տարանցիկ երկիր:

Հայաստանի աշխարհագրական բարդ դիրքի հետ կապված օդային տրանսպորտն ունի իր առանձնահատուկ նշանակությունը: Չնայած ՀՀ տրանսպորտային համակար-

գում օդային տրանսպորտի տեսակարար կշիռը բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում փոքր է, սակայն այն ունի շատ մեծ նշանակություն:

Օդային տրանսպորտի դերը կայանում է ոչ միայն ուղևորափոխադրումներով, այլև փչացող, թանկարժեք, ոչ մեծ ծավալի բեռներն արագ տեղ հասցնելու, բնակչության շտապ բուժօգնություն կազմակերպելու և այլ բնագավառներում: Մասնակի շրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար օդային տրանսպորտի դերը գնալով ավելի մեծանում է: ՀՀ-ն ունի երեք հիմնական օդանավակայաններ: Դրանք են՝ Զվարթնոցը, Շիրակը, և Էրեբունին: Քննարկելով ՀՀ օդային տրանսպորտի ներկայիս վիճակը և զարգացման հեռանկարները, պետք է փաստել Զվարթնոց օդնավակայանի միջոցով ՀՀ-ն կապ է հաստատում աշխարհի տարբեր երկրների հետ: Այն երկրի հիմնական դարպասն է: 2002 թվականի Հունիս ամսից <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանը կոնցեսիոն կառավարման է հանձնվել <<Արմենիա Միջազգային Օդանավակայաններ>>ՓԲԸ-ին: Ներկայիս օդանավակայանն ապահով, մրցունակ և գործող է: Պետք է փաստել, որ թռիչքադաշտում տեղակայված նավիգացիոն վայրէջքների համար ապահովում է 30x350մ օդերևութաբանական նվազագույն սահման,որը համապատասխանում է ICAO երկրորդ կարգին:

Հայաստանի համար կարևոր հարց է մնում օդային տրանսպորտի սպասարկման որակի բարելավումը: Դա բացատրվում է նրանով, որ այն պետք է իրագործվի առաջին հերթին զբոսաշրջության կենտրոն դառնալու նպատակով: Հետևաբար, անկախ ՀՀ քաղաքաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական դիրքից, զարգացնելով զբոսաշրջությունը, կխթանվի ողջ տնտեսական համակարգը և կընդլայնվի ու կհզորանա Հայաստանի միջազգային տնտեսական համագործակցությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի տնտեսության զարգացման գործում իր ազդեցությունն ունի տրանսպորտը: Ունենալով համեմատաբար անբարենպաստ աշխարհագրական դիրք, հեռու գտնվելով տնտեսական կարևոր կենտրոններից ՀՀ տրանսպորտային համակարգում առկա են մի շարք խնդիրներ: Սակայն երկրի տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքերը ստեղծում են նոր հնարավորություններ տրասնպորտի ճյուղերի արդիականացման հարցում:

Khalatyan H.A.
Lecturer at Northern University
harutyun.khalatyan@gmail.com

Barseghyan G.S.
ASPU,the PHD and specialist of the chair of Geography and Methodology of its Teaching.

THE INFLUENCE OF THE GEOGRAPHIC LOCATION OF THE RA ON THE DEVELOPMENT OF TRANSPORT

Key words. Geographical location, transport sectors, economic factor, Economic-Geographic location

Geographic location influences the rabid development of the economy of any country. The RA being far from the seas, navigable rivers, lakes and important economic centers loses a lot of opportunities for economic growth. Two borders out of four are closed (Turkey and Azerbaijan) which negatively impacts the transport system as well as the whole economy, which brings to the growth of the transport costs, the opportunities of the international trade are reduced, also the material and technical base is violated and so on. However, the geographical crossroad position of the RA also brings all the opportunities and prospects for economic and transport development.

Халатян А.А.
Лектор Северного университета
harutyun.khalatyan@gmail.com
Барсегян Г.С.
АГПУ,специалист кафедры географии и методики преподавания,соискательница

ВЛИЯНИЕ ГЕОГРАФИЧЕСКОГО ПОЛОЖЕНИЯ РА НА РАЗВИТИЕ ТРАНСПОРТА

Ключевые слова: географическое положение, отрасли транспорта, экономический фактор, экономико-географическое положение.

На развитие экономики любого государства свое влияние оказывает географическое положение. В этой связи Армения находится в не самом благоприятном состоянии, что отрицательно влияет на развитие экономики страны. Из четырех государственных границ двое закрыты (Турция и Азербайджан), что отрицательно влияет как на систему транспорта страны, так и на экономику в целом, вследствии чего растут транспортные расходы, сокращаются варианты международной торговли, нарушается также материально-техническая база и т.д.

Но с другой стороны, РА своим перекрестковым положением имеет также свои варианты и перспективы развития, как транспорта, так и всей экономики.

Նապոլեոն Պեպանյան
Հյուսիսային համալսարանի հայցորդ
pepnapoleon@mail.ru

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. բնապահպանական հաշվառում, բնապահպանական վճարներ, էկոարդարություն, էկոաուդիտ

Բնապահապանական հիմնախնդիրները ուղղակիորոն ազդում են կազմակերպությունների տնտեսավարման արդյունքների վրա: Այս ոլորտում տնտեսական վերահսկողության խնդիրն է հանդիսանում չափել բնապահպնական ոլորտի ազդեցության հետևանքները, արժևորել դրանք և այնուհետև ներկայացնել հրապարակվող հաշվետվություններում:[82]

Աղյուսակ 1

Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների օգտագործման վրա տնտեսական գործունեության ազդեցությունը[83]

Ցուցանիշներ	2011	2012	2013	2014
Ջրառը ջրաղբյուրներից, մլմ. մ^3	2438	2941	2955	2860
Ջրահեռացումը, մլն. մ^3	750	813	938	847
Մթնոլորտ արտանետած վնասակար նյութերը, 1 000 տ	114.6	117.4	119.7	128.4

Տարեց տարի, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների օգտագործման վրա ՀՀ կազմակերպությունների տնտեսական գործունեության ազդեցությունը աճ է արձանագրում (տես աղյուսակ 1), որը մտահոգություն-

[82] Павлов Ю.М., Экологический контроль и аудит, ЮНИКС, М, 2013, стр.28
[83] ՀՀ ԱՎԾ Տարեգիրք, 2015 թ., էջ 204

ների տեղիք է տալիս ոչ միայն էկոարդարության ապահովման, այլև էկոմիջավայրի վրա գործարարության ազդեցության իրատեսական հաշվետվողականության ներկայացման անհրաժեշտության տեսանկյունից:

Ներկայումս պահանջ է դրվում տնտեսավարման հետևանքերի վրա բնապահպանական գործոնների ազդեցության չափում և հաշվառում, քանի որ տարեցտարի էկոլոգիական հիմնախնդիրների ուղղակի ազդեցությունը տնտեսական գործունեության վրա դառնում է էական: Նման ազդեցության օրինակներ կարող են հանդիսանալ.

- ապրանքների իրացման ծավալների կտրուկ փոփոխությունները, պայմանավորված սպառողների բնապահպանական պահանջմունքների աճով,
- թողարկման ծավալների փոփոխությունները, պայմանավորված էկոլոգիապես մաքուր մատակարարվող հումք և նյութերի նկատմամբ պահանջատիրության աճով,
- թողարկման ինքնարժեքի թանկացումը, պայմանավորված էկոլոգիապես մաքուր ապրանքատեսականու որակի ապահովման ծախսերի ավելացմամբ,
- վերադիր ծախսերի ավելացումը, պայմանավորված էկոաուդիտի և էկոմոնիտորինգի ծառայությունների ընդլայնմամբ,
- թափոնների վերամշակման կամ լուծարման ինքնարժեքի ավելացումը,
- բնապահպանական նշանակության ակտիվների ձեռքբերում կամ կառուցում (ջրավազաններ, ֆիլտրեր, ձայնաեղմիչներ և այլն),
- վարչական ծախսերի ավելացում՝ բնապահպանական ապահովագրական փոխանցումների աճով,

- վարչական ծախսերի ավելացում, պայմանավորված բնօգտագործման և բնապահպանական վճարների աճով,
- հարկային պարտավորությունների վերանայում, պայմանավորված էկոլոգիական քաղաքականության փոփոխությամբ,
- բնապահպանական ներդրումների պահուստային ֆոնդերի ռեզերվացում,
- բնապահպանական ռիսկերի ազդեցությամբ ֆինանսական շուկայում ձևավորված կուրուստների (բաժնետոմսերի արժեքի անկում, վարկավորման տոկոսների աճ և այլն) արձանագրում:

Որպես կանոն, բնապահպանական գործունեության կարգավորումը, մատակարարների և գնորդների դիրքորոշումը դեպի էկոլոգիական ստանդարտները, բնօգտագործման նորմերը խախտելիս հարկման քաղաքականության խստացված սկզբունքների կիրառումը, կազմակերպութուններում հանգեցնում են բնապահպանաության առնչվող ծախսերի և պարտավորությունների աճին (տես գծապատկեր 1):

Թե ինչպիսին կլինի բնապահպանական միջոցառումների տնտեսական արդյունավետությունը, հնարավոր է պարզել միայն էկոծախսերի և դրանցից բխող եկամուտների հաշվառման կազմակերպման դեպքում: Նման հաշվառման արդյունքում արժեքային չափման են ենթարկվում, արձանագրվում և առանձնացված հաշվետվական տեսք ստանում բնապահպանական և բնօգտագործման բոլոր լրացուցիչ ծախսերը և դրանց առնչվող եկամուտները: Առանձնապես, նման հաշվառման կարիք է զգացվում բնապահպանական ակտիվ քաղաքականություն որդեգրած կազմակերպություններում, քանի որ դրանց կառավարիչներին հետաքրքրում է բնապահպանական մեծածավալ ծախսերի հատույցը, իսկ բաժնե-

տերերին՝ ֆինանսական շուկայում ընկերության բնապահպանական համբավը:



Գծապատկեր 1. Բնապահպանական վճարներն ըստ ուղղությունների 2014 թվականին[84]

Բնապահպանական գործունեությունը իր էական ազդեցություն է թողնում կազմակերպության ֆինանսական իրավիճակի վրա: Այդ ազդեցությունը առաջին հերթին դրսևորվում է բնապահպանական պարտավորություններով, էկոլոգիային ծառայող ակտիվների ամորտիզացիոն ծախսերով, ֆինանսական արտահոսքերով, հարկային տուժերով ու տուգանքներով: Հետևաբար, հաշվապահական հաշվառումը հրապարկվող ֆինանսական հաշվետվությունների բացահայտումների դաշտ պետք տեղափոխի հաշվետու ժամանակաշրջանի բնապահպանական գործունեության տնտեսական արդյունքները, որոնք առդիտորական հավաստմամբ ներկայացվելով հասարակությանը, հնարավորություն կընդձեռեն գնահատելու կազմակերպության բնապահպանական քաղաքականության իրականացման արդյունավետությունը:

[84] ՀՀ ԱՎԾ Տարեգիրք, 2015 թ., էջ 212

Բնապահպանական գործունեության արդյունքները անհրաժեշտ է հաշվառել երկու կտրվածքով: Ֆինանսական հաշվառմամբ, երբ հրապարակվող ֆինանսական հաշվետվություններում առանձին կբացահայտվեն բնապահպանական գործունեության շրջանակներում գործող ակտիվները, պարտավորությունները, ռեզերվային ֆոնդերը, ծախսերը և, կառավարչական հաշվառմամբ, երբ մենեջմենթի ներքին պահանջմունքներին ուղղված կառավարչական հաշվետվություններով կներկայացվեն առանձին բնապահպանական միջոցառումների ինքնարժեքի կալկուլյացիան, բնօգտագործման ծախսումների ծագման կենտրոնները, բնապահպանական ծախսումների բաշխումը և այլն: Եթե ֆինանսական հաշվառման հաշվետվությունը ենթակա է հրապարակման և հասանելի է ինչպես կազմակերպության գործընկերներին (բանկեր, մատակարարներ, գնորդներ, ներդրողներ), այնպես էլ հասարակության լայն զանգվածներին, ապա կառավարչական հաշվառման հաշվետվությունը առևտրային գաղտնիք է և ներկայացվում է միայն կազմակերպության կառավարման օղակներին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Բնապահպանական գործունեության հաշվետվողականությունը պարտադիր պահանջ պետք է դառնա կազմակերպությունների համար: Գործարարությունը իր պարտավորություններն ունի շրջակա միջավայրի վնասի փոխհատուցման դիմաց, և դրանք մարելու է ոչ միայն բնապահպաական վճարներով, այլև բնապահպանական կոնկրետ միջոցառումներով, որոնց գծով ֆինանսատնտեսական արդյունավետության հաշվետվողականություն է պահանջում:

Napoleon Pepanyan
PhD student at the Northern University
pepnapoleon@mail.ru

ENVIRONENTAL ACTIVITY PERFORMANCE ACCOUNTIBILITY OBJECTIVES

Keywords: environmental accounting, environmental fees, eco - righteous, environmental audit

Accountability of environmental activity performance should become a mandatory requirement for organizations. Business in its commitments to environmental damage compensation, and to repay not only envirenmantal payments, but also concrete targeted environmental actions, which requires accountability for financial and economy efficiency performance.

Наполеон Пепанян
Соискатель Северного университета
pepnapoleon@mail.ru

ЗАДАЧИ ПОДОТЧЕТНОСТИ РЕЗУЛЬТАТИВНОСТИ ЭКОЛОГИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Ключевые слова: экологический учет, экологические сборы, эко справедливость, эко аудит

Подотчетность экологической деятельности должна стать обязательным требованием для организаций. Бизнес имеет свои обязательства в вопросах компенсации экологического ущерба не только платежами по сохранности экологии, но и конкретными мероприятиями, нацеленными на природохранение. Все это требует представления отчетности о финансово-экономической эффективности конкретных эко мероприятий в предприятиях.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ՐԴ ԱՄՅԱԿԻ ՇԵՄԻՆ

ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

«ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ НА ПОРОГЕ 25-ЛЕТИЯ НЕЗАВИСИМОСТИ РА»

МАТЕРИАЛЫ

межвузовской научной
конференции

Issues of Economy Development in RA at Threshold of the 25th Anniversary

Materials of Interuniversity Scientific Conference

Չափսը՝ 60x84 1/16
Տպագրություն օֆսեթ՝ 10,25 մամ.
Տպաքանակ՝ 120
Տպագրված Է.Ա/Ձ «Արսեն Ժամհարյան» տպարանում
Երևան-25, Ալեք Մանուկյան 1/5